

7715

Վ. Ո. ԳՐԱԳՈՆ

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԴԱՍԱԳԻՐԲ ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ  
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

74  
9-84

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԸՆԴՐԵՎԱՆ Ը 1937

42-25

74  
7-84

Վ. Ո. ԳՈՐԳՈՆ

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԴԱՍԱԳԻՐԻ ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՑԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ  
ԴԳՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԹԱՐԳՄԱՆՆՑ  
Մ. ԱԼԵԿՍԱՆՑԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1987

598

1211 MAR 2019

1713

### Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Վերևի առարկա պատրաստելու համար, ամենից առաջ պետք է գիտենալ նրա ձևն ու չափսը: Յեթե առարկան պարզ է ու նրա ձևը հայտնի, ապա այն կարելի չէ պատրաստել ըստ նկարագրութեան: Որինակ՝ պետք է պատրաստել գլանաձև ողակ, վորի արտաքին տրամագիծը լինի 40 մմ, ներքինը՝ 25 մմ և բարձրությունը՝ 20 մմ: Այս նկարագրությունը հնարավոր է հասկանալ, յեթե պատկերացում ունենք ողակի մասին և յեթե հայտնի չէ, թե ինչ բան է գլանը, տրամագիծը, բարձրությունը:

Բայց նկարագրություն ոգնություն անհնարին կլինի պատրաստել, յեթե առարկան բարդ է և շատ չափսեր ունի, կամ յեթե առարկայի ձևը մեզ անձանոթ է: Այսպիսի դեպքերում պետք է տալ առարկայի պատկերը, այսինքն հարթություն վրա (թղթի կամ տախտակի վրա) տալ առարկայի ձևն ու չափսերը:


Առարկաները կարելի չէ պատկերել այնպես, ինչպես նրանք ներկայանում են մեր աչքին, այս դեպքում ստացվում է չափազանց դիտողական պատկեր (նկարներ, լուսանկարներ), բայց ձևերն ու չափսերն աղճատված: Որինակ, ուղիղ շրջանային կոնը կարելի չէ պատկերել բավականաչափ դիտողական կերպով, ինչպես այդ ցույց է տրված 1-ին գծագրում: Բայց կոնի հիմքն իսկապես ներկայացնում է շրջան, 1-ին գծագրում այդ շրջանը աղճատված է: Աղճատված է նաև 2-րդ գծագրում ուղղանկյուն զուգահեռանիստի (կղմինտը) դիտողական պատկերը, 1-ին նկարում այդ գծագրի իսկապես զուգահեռ գծերը (զուգահեռանիստի կողերը) ցույց են տրված իբրև զուգամեծ գծեր, այսինքն վոչ զուգահեռ, ուղիղ անկյունները դարձել են սուր և բուխ անկյուններ, իրար հավասար կողերը ցույց են տրված իբրև անհավասար կողեր: 2-րդ գծագրի 2-րդ և 3-րդ պատկերներում կողերն




4933-87

ու նրանց զուգահեռությունը չեն աղջատված, բայց ուղղանկյունները տեղ, վորոնցով իրոք սահմանագծված ե զուգահեռանիստը, պատկերված են զուգահեռագծեր:

Յերկրաչափական այն լավ հայտնի ձևերի նկատմամբ, ինչպես են կոնը, գլանը, պրիզման և այլն, գծագրի վրա մի փոքր աղճատումը մեծ անհարմարություն չի ներկայացնում: Այսպես և հասարակ առարկաներ պատկերելու համար հաճախ կարելի յե լոյա գնալ գծագրերով, վորոնց վրա նշված են լինում չափսերը և բացատրական մակագրերը, և ըստ այդ գծագրերի կարելի յե պատրաստել ցանկացած առարկան (որինակ ատաղձագործություն մեջ): Բայց ավելի բարդ առարկաների համար պատկերելու այդ յեղանակը պիտանի չե. պետք ե գիմել այնպիսի յեղանակի, վորով առարկայի ձևը, նրա մասերի փոխհարաբերությունը և պատկերացվելիք առարկաներից մեկի դիրքը մյուսի նկատմամբ՝ չաղճատվի, այսինքն՝ շրջանը միա շրջան, ուղիղ անկյունը՝ ուղիղ անկյուն, զուգահեռ ուղիղները լինեն զուգահեռ և այլն: Հենց



Գծ. 1




Գծ. 2

այդպիսի յեղանակ ել կիրառվում ե գծագրության մեջ. այդ յեղանակն այն ե, վոր պատկերացվելիք առարկան ցույց ե արվում միևնույն գծագրի վրա զանազան կողմերից (կառուցում են առարկայի պրոեկցիաները): Բացի դրանից, գծագրության մեջ սովորած յեղանակներով կարելի յե ցույց տալ վոր միայն առարկայի արտաքին տեսքը, այլ և նրա ներքին կառուցվածքը: Չա գծագրում արված ե ուղիղ շրջանային կոնի գծագիրը: Մի պատ-

կերի փոխարեն, ինչպես այդ կատարված ե 1-ին գծագրում, կոնը ներկայացված ե յերկու գծագրի տեսքով՝ շրջանի և յեռանկյան—կոնի պրոեկցիայի տեսքով:

Բաղդաստելով իրար հետ նկարն ու գծագրերն՝ անհրաժեշտ ե գիտենալ, վոր նկարներն ըստ դիտողականություն յեռանկյունն ունեն: Ուստի և լինում են դեպքեր, յերբ գծագրին, վորպես ոժանդակ միջոց, տալիս են և նույն այդ առարկայի նկարը: Բայց դիտողականություն անբավարարությունն ամբողջովին փոխարինվում ե այն առավելություններով, վորոնք ստացվում են առարկաները գծագրության կանոններով պատկերելիս, յերբ աղավաղումներ չեն լինում, և չափսերը նշված լինելու հարմարությունը կա:

Տեխնիկական գծագիրը ներկայացնում ե առարկայի պատկերումը հարթության վրա պրոեկցիաների յեղանակով և մի շարք սահմանված պայմանների պահպանումով: Առարկայի պատկերումը հարթության վրա՝ հանդում ե յերկրաչափական ձևանկարների կառուցման, հետևաբար, պետք ե գիտենալ հիմնական կառուցումները հարթության վրա և կարողանալ գործադրել գծագրական գործիքներն ու սարքերը, վորպեսզի գծագիրը կատարվի հնարավոր չափով ամենաբարձր ու նպատակահարմար ճշտությամբ: Պետք ե հիշել այն, վոր վորոշ դեպքերում կառուցման ճշտությունից ե կախված վորոնելի արդյունքի ճշտությունը. ուստի պետք ե տիրապետել անհրաժեշտ գիտելիքներին և գծագրելիս ճիշտ կառուցումներ կատարելու ունակություններին:




Գծ. 2ա

Գիրքն ոգտագործելիս պետք է նկատի ունենալ հետևյալը՝  
Դպրոցական կուրսն անցնելիս բաժինների և պարագրաֆ-  
ների գասավորման կարգը չպետք է դիտել վորպես պարագիր  
հաջորդականութուն. որինակ՝ դիտողական պատկերումները  
պետք է կիրառել և հետևապես, ուսումնասիրել պրոեկցիոն  
գծագրության հետ մեկտեղ. «Հիմնական կառուցումներ հարթու-  
թյան վրա» բաժնից մի քանի պարագրաֆները կարելի յե անց-  
նել ավելի ուշ, քան պրոեկցիոն գծագրության հիմունքներն ու  
տեխնիկական գծագրության ելնմենտները:

Ըստ գրքի ձևավորման պայմանների իլլյուստրացիաներն  
իրենց հիմնական ամբողջականությամբ չպետք է դիտվեն վոր-  
պես գծագրերի ձևավորման նմուշներ (ըրջահածութուն, շրիֆտ  
և այլն). վերջին դեպքում պետք է ուղեցույց հանդիսանա գծա-  
գրերի միտրինակութունը:

§ 1. ԿԵՏ, ԳԻԾ, ՊԱՏԿԵՐ

Յուրաքանչյուր գծագիր կատարելիս պետք է նշել մի շարք  
կետեր և տանել տարբեր ուղիղ և կոր գծեր (գծ. 3): Ուղիղները



Գծ. 3

հատվածներից կազմվում է բեկյալ գիծ. բեկյալի յուրաքանչյուր  
յերկու կից հատվածը մի անկյուն են կազմում:

Ուղիղ և կոր գծերը կարելի  
յե միացնել իրար հետ, վորով  
կոմբինացված գծեր կստացվեն:  
Փակ բեկյալները, կոր և կոմբի-  
նացված գծերը պատկերներ են  
կազմում (գծ. 4):



Գծ. 4

Յուրաքանչյուր հատվածի ըս-  
կիղբն ու ծայրը կետ են ներ-  
կայացնում: Կետերն ստացվում են գծերի հատվելուց (գծ. 5,  
K, M, N կետերը): Յեթե անհրաժեշտ է գծագրի վրա մի կետ

1) Զարկի (հզիկ) բառը եր


Զարկի (հզիկ) բառը եր... Զարկի (հզիկ) բառը եր... Զարկի (հզիկ) բառը եր...

Զարկի (հզիկ) բառը եր... Զարկի (հզիկ) բառը եր...

Յ. 2



Յ. 3




Զարկի (հզիկ) բառը եր... Զարկի (հզիկ) բառը եր...

Զարկի (հզիկ) բառը եր... Զարկի (հզիկ) բառը եր...

Յ. 5



Յ. 6




Զարկի (հզիկ) բառը եր... Զարկի (հզիկ) բառը եր...

1) Reisschimo - հերթերեն նշանակում է հարկահան քառանկ. Առաջ... Զարկի (հզիկ) բառը եր...

Զարկի (հզիկ) բառը եր... Զարկի (հզիկ) բառը եր...

Զարկի (հզիկ) բառը եր... Զարկի (հզիկ) բառը եր...


Յ. 9




Զարկի (հզիկ) բառը եր... Զարկի (հզիկ) բառը եր...

Յ. 2. ՔԱՆՈՒ ՅԵՎ ԱՆԿՅՈՒՆՆԵՐ


Զարկի (հզիկ) բառը եր... Զարկի (հզիկ) բառը եր...



Գծ. 10



Գծ. 11



Գծ. 12

Գծ. 13

քանոնի միջոցով, տախտակի յնջրի նկատմամբ, կարելի չէ տանել միևնույն թիքության ուղիղներ:

Ուղիղ գիծ քաշելու համար ոգտագործում են նաև փայտից և կամ ցելուլոզիդից պատրաստած անկյունարդներ (գծ. 13): Սովորական գծագրական անկյունարդները յերկու տեսակ են լիսնում՝ 1) յերկու հավասար կողմով, 2) անհավասար կողմերով: Առաջին տեսակի անկյունարդի անկյուններից մեկն 90° է, մյուս յերկուսը՝ 45°-ական. յերկրորդ տեսակի անկյունարդի անկյուններն են՝ 90°, 60° և 30°: Հետևապես գծագրական անկյունարդները ուղղանկյուն յեռանկյան ձև ունեն, մի դեպքում՝ հավասար, իսկ մյուս դեպքում՝ անհավասար եջերով: 90°, 60° և 30° անկյուններ ունեցող անկյունարդի, փոքր կջի յերկարւթյունը հավասար պետք է լինի ներքնաձիգի կեսին:

§ 3. ԿԱՐԿԻՆ ՅԵՎ ԿՈՐԱՑԱՆՈՆ

Շրջանագիծը կամ նրա մասը (աղեղը) քաշում են կարկինի միջոցով (գծ. 14): Կարկինը պետք է բռնել միմիայն վախիկից (յերկու մասներով—բութով և ցուցամատով) և հենման վրա սր մի քիչ սուզմեր կարկինով աշխատելու ժամանակ չպետք է շարժել նրա վրտները, վրտովհետև նրանք հեշտությամբ են տեղանվում և այգպիտով ել փոխում ա եղի շառավիղի մեծությունը:

14-րդ գծագրում ցույց է արված կարկինի տեղակայումը փոքր շառավիղ ունեցող (5 մմ և ավելի փոքր) շրջանագծերի համար գործ են ածում հատուկ կարկին (գծ. 15)—այսպես կոչված ցոնցիրիսուլ, զերտ կարկին: Կրոնցիրիսուլի վրա գտնվող պտուտակը ծառայում է կարկինի վրտները պահանջված շառավիղի մեծությամբ տեղակայելու: Պտուտակի շտորիով կրոնցիրիսուլի վրտերն աշխատանքի ընթացքում չեն փոխում իրենց հեռավորությունը:

Այն կորերը, վորոնք կարկինով հնարավոր չէ գծել, գծում են այսպես կոչված Կուստանոնի միջոցով (գծ. 16): Նրանց տալիս են տարբեր ձևեր, բնդ վորում յուրաքանչյուր կորաքանոն ունի մի շարք կոր մասեր: Կորաքանոնով աշխատելու մասին տես § 24:

Թղթի Ֆորմասներ

Սովորական դժագրական տախտակն ուղղանկյուն ձև ունի (գծ. 17), վորի յերկու կարճ յեզրերն աչպես կոչված «կալորդ» ունեն, այսինքն ամուր փայտից շինված չորսվակ (սովորաբար կաղնի): Կալորդը ծառայում է տախտակը ամրացնելու և, բացի դրանից, ներկայացնում է ռեյսիներ շարժելու համար վորպես ճշգրիտ ուղղորդիչ: Աշխատանքի ընթացքում ռեյսիներն պետք է բռնել աջնակես, ինչպես ցույց է տրված 11-րդ գծագրում. ռեյսի շինի գլխիկը պետք է սեղմված լինի կալորդին:

Գժագրական տախտակները տարբեր մեծության են լինում. գործածվող չափերն են՝ 1) յերկարութունը՝ 1000 մմ, լայնութունը՝ 700 մմ, և 2) յերկարութունը՝ 700 մմ, լայնութունը՝ 500 մմ: Հաճախ այսպիսի տախտակներին ասում են մի ամբողջ թերթաչափ կամ վաստմանաչափ<sup>1)</sup> տախտակ, կես թերթաչափ կամ կես վաստմանաչափ տախտակ:


Գժագիրը կառարում են վորոշ չափսեր ունեցող թղթի վրա: Գժագրական թղթի չափսերը (ֆորմատ) սահմանված են հետևյալ կերպ.

Ֆորմատի նշանակումը	a0	a1	a2	a3	a4	a5	a6
Թղթի չափսերը (մլիմետրներով)	814 × 1152	576 × 814	407 × 576	288 × 407	203 × 288	144 × 203	101 × 144


Յուրաքանչյուր ֆորմատ պետք է լինի ուղղանկյունաձև, որինակ՝ a4 ֆորմատը ներկայացնում է մի ուղղանկյուն, վորի կարճ կողմերից յուրաքանչյուրը հավասար է 203 մմ-ի, իսկ յերկար կողմերից յուրաքանչյուրը՝ 288 մմ-ի:

17-րդ գժագրում ցույց է տրված (փոքրացրած տեսքով) a1 ֆորմատը 700 × 1000 չափսի տախտակի վրա: 18-րդ գժագրում

<sup>1)</sup> «Վաստման» բառն անգլիական համանուն ֆիրմայի (Whatman) անունից է: «Վաստման» նշանակում է վոշ միայն լավորակ գժագրական թուղթի այլ և վորոշ չափսեր ունեցող թուղթի:



Գծ. 14




Գծ. 10



Գծ. 16

գրում ցույց է տրված (փոքրացրած տեսքով)  $a4$  ֆորմատը՝  $500 \times 700$  չափսի տախտակի վրա: Աշխատելիս ամենահարմար մասը տախտակի ձախ մասն է, քանի վոր այդ մասում ունի- շինն իր գլխիկի հետ ավելի կայուն է: Այդ պատճառով 18-րդ գծագրում  $a4$  ֆորմատը դրված է տախտակի ձախ կարճ կողմի մոտ:

Թուղթը տախտակի վրա գնդասեղներով աչնդես պետք է ամրացնել, վոր թղթի յեզրերը հնարավոր չափով զուգահեռ լի- նեն տախտակի յեզրերին: Ռեյսչինի միջոցով թուղթը տախտա-




Տախտակակապ

Գծ. 17

Գծ. 18

կի վրա կարող է դրվել հետևյալ կերպ՝ նախ ամրացնում են թերթի վերևի ձախ անկյունը, ապա ըստ ռեյսչինի, ինչպես ցույց է տրված 19-րդ գծագրում, հավասարեցնում են թերթի վերևի յեզրը, վորից հետո ամրացնում են թերթի մնացած յերեք ան- կյունները:



Գծ 19

Այն ուղիղ գծերը, վորոնք տարված են տախտակի վերևի և կամ ներքևի յեզրին զուգահեռ, պայմանավորվենք անվանել հո- րիզոնական գծեր, իսկ այն ու- ղիղները, վորոնք ուղահայաց են հորիզոնականներին, այսինքն այն ուղիղները, վորոնք զուգա- հեռ են տախտակի մյուս կողմե- հն են տախտակի մյուս կողմե-


րին, պայմանավորվենք անվանել ուղիղաձիգներ (գծ. 19):

§ 5. ՌԻՂԻՂ ԳԾԵՐ ՏԱՆԵԼԸ, ՌԻՂԱՆՅԱՅԱՅՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼԸ

Խնդիր 1. Տրված յեկու կետով ուղիղ գիծ ասել:

Տրված յերկու կետով ուղիղ գիծ տանելը ցույց է տրված 20-րդ գծագրում: Ուղիղներինց մեկը տարված է անկյունարգի ողնու- թյամբ, իսկ մյուսը՝ քանոնի C, D, A և B կետը նշված են շրջանիկներով: Անկյունարգի և կամ քանոնի յեզրը մոտեցնում են կետերին, բայց այնպես, վոր կետերը չծածկվեն անկյունար- ղով և կամ քանոնով:

Յեթե կետերը, վորոնցով պետք է տանել ուղիղը, իրար շատ մոտիկ են դասավորված, ապա չի կարելի յերաշխավորելը, ուղիղ գիծը պահանջված ուղղությամբ տանելու համար անհրա- ժեշտ ճշտությունը: 21-րդ գծագրում ցույց են տրված յերկու ուղիղ, վորոնք տարված են A և B կետերով, չի կարելի ասել թե այս ուղիղներինց վորն է ավելի կանոնավոր տարված. մինչ- դեռ պետք է ստացվի մի- այն մի ուղիղ, քանի վոր յերկու կետով կարելի յե տանել միմիայն մի ուղիղ: Անհրաժեշտ է հիշել, վոր ուղիղներ տանելիս սխալ- ներինց խուսափելու համար կետերն իրարից բավակա- նաչափ հեռու պետք է ընտ- րել (գծ. 20):



Գծ. 21

Գծ. 20


Խնդիր 2. Տվյալ կետով հորիզոնական ուղիղ ասել:

Յեթե հնարավոր է, պետք է ողտվել գծագրական տախտա- կով և ռեյսչինով. այդ դեպքում խնդիրը հեշտ կլուծվի (գծ. 22): Ռեյսչինը մոտեցնում են A կետին և ռեյսչինի քանոնով A կե- տով տանում են պահանջված գիծը:


Պետք է հիշել, վոր ռեյսչինի գլխիկը պետք է ամուր սեղմ- վի տախտակի յեզրին:

Յեթե ցանկանում են պահանջված ուղիղը տանել առանց ռեյսչինի, ապա անհրաժեշտ է, բացի տվյալ A կետից, նշել նաև

մի ուրիշ կետ, վորը տախտակի ներքեի ձախ յեզրից կամ թղթի ներքեի ծայրից նույն հեռավորության վրա գտնվի: Թուղթը պետք է դրված լինի այնպես, վոր նրա յեզրերը զուգահեռ լինեն



Գծ. 22



Գծ. 23

տախտակի յեզրերին. յերկու կետերով կարելի յի ուղիղ գիծ տանել՝ 1-ին խնդրում ցույց տրված յեղանակով:

Խնդիր 3. Տվյալ կետով ուղղանիւղ ուղիղ ցանկեր:

Խնդիրն ամենապարզ կերպով լուծվում է ռեյսչինի և անհյունարդի միջոցով: Անհյունարդը դնում են ռեյսչինի վրա այնպես, ինչպես ցույց է տրված 11-րդ գծագրում (եջ 10) և մտանցում են A կետին (տես 23-րդ գծ.), վորից հետո A կետով տանում են պահանջված ուղիղը:


Յեթե ցանկանում են ուղղանիւղ ուղիղը տանել առանց ռեյսչինի, ապա անհրաժեշտ է բացի ավյալ A կետից նշել նաև մի կետ: Վերջին կետը պետք է տախտակի ձախ յեզրից նույն հեռավորությունն ունենա, ինչ վոր A կետը: Յերկու կետերով կարելի յի տանել ուղիղ՝ 1-ին խնդրում ցույց տրված յեղանակով:

Խնդիր 4. AB ուղիղի վրա K կետից դեպի այ վեցնել մի հասված՝ հավասար սվյալ CD հասվածին (գծ. 24):

Կառուցումը կարելի յի կատարել կարկինի միջոցով: Այս գեպքերում ավելի լավ է ոգտվել չափակարկինով (գծ. 25): Կարկինի վրաները բաց են անում այնքան, վորքան CD հասվածն է, և առանց կարկինի վրաների բացվածքը փոփոխելով AB ուղիղի K կետից դեպի այ վերցնում են CD-ին հավասար KM հասվածը (գծ. 24): Յեթե անհրաժեշտ է իմանալ CD հասվածի յերկարությունը, ապա չափակարկինի միջոցով CD հաս-

վածը փոխանցում են միլիմետրների բաժանված քանոնի<sup>1)</sup> վրա և դրանով վորոշում CD հասվածի յերկարությունը արտահայտված միլիմետրներով:

Յեթե հարկ է լինում 4-րդ խնդրի լուծման կառուցումը կատարել առանց կարկինի ոգնության, ապա չափում են CD հասվածի յերկարությունը մասշտաբային քանոնով, և հետո քանոնը վերադրում AB հասվածին այնպես, վոր քանոնի սկիզբը համընկնի K կետի հետ (գծ. 26):




Գծ. 24

Չափակարկինի միջոցով կատարված կառուցումներն ավելի ճշգրիտ են լինում:



Գծ. 25



Գծ. 26

Խնդիր 5. Տվյալ ուղիղին ուղղահայաց ցանկեր: Կառուցումը պետք է կարողանալ կատարել յերկու անկյունարդի և կամ կարկինի ու քանոնի միջոցով:



Մասշտաբ քանոնի լայնատիկ կտրվածքների տարբեր ձևեր



Գծ. 27


1) Չափվածներ չափելու համար ծառայող այդպիսի քանոնները կոչվում են մասոսարային քանոններ: Մասշտաբային քանոնը պատրաստում են յեռանիստ հատույթով կամ տափակայրած յեզրերով, վորոնց վրա անց են կացնում միլիմետրական բաժանումները (գծ. 27):




Կառուցում առանց կարկինի ոգնությամբ.

Գծ. 28-ում կառուցումը կատարված է յերկու անկյունարդով այն դեպքի համար, յերբ ուղղահայացը պետք է տանել ուղիղի վրա վերջրած կետով:

Պետք է յերկու անկյունարդն ել մոտեցնել  $AB$  ուղիղին այնպես, վոր ուղիղն անցնի անկյունարդներից մեկի մի կողմով



Գծ. 28



Գծ. 29




Գծ. 30

(28-րդ գծագրում ուղիղն անցնում է  $Y_1$  անկյունարդի եջով): Հետո, առանց  $Y_2$  անկյունարդը շարժելու, պետք է  $Y_1$  անկյունարդը տեղափոխել և շարժել  $Y_2$  անկյունարդի կողմով՝ առանց յերկու անկյունարդներն իրարից հեռացնելու: Յերբ  $Y_1$  անկյունարդը հասնում է այն դրության, յերբ  $K$  կետը զտնվում է նրա կողմի վրա, ապա կարելի յե  $K$  կետից տանել մի ուղիղ, և այդ ուղիղը ուղղահայաց կլինի  $AB$ -ին:

Յեթե  $K$  կետը արված է ուղիղից դուրս, ապա, ինչպես տեսնում ենք 29-րդ գծագրում, կառուցման ընթացքը կլինի նույնը. յերկու անկյունարդն ել ( $Y_1$  և  $Y_2$ ) մոտեցնում են  $AB$  ուղիղին և առանց  $Y_2$  անկյունարդը շարժելու՝ տեղափոխում են  $Y_1$  անկյունարդը  $Y_2$  անկյունարդի կողմով մինչև այն ժամանակ, քանի դեռ  $K$  կետը չի ընկնում  $Y_1$  անկյունարդի կողմի վրա:  $K$  կետով  $Y_1$  անկյունարդի միջոցով տարած ուղիղը ուղղահայաց կլինի  $AB$ -ին:

Կառուցում կարկինի միջոցով.

30-րդ գծագրում  $AB$  ուղիղին պատկանող  $K$  կետով տարված է ուղղահայաց՝ կարկինի և քանոնի միջոցով: Ամենից առաջ պետք է կարկինի հենման վտար դնել  $AB$  ուղիղի  $K$  կետում և հասել ուղիղը յերկու կետում—միևնույն  $R$  շառավիղն ունեցող




Գծ. 31

աղեղներով: Ստացված  $a$  և  $b$  կետերից պետք է տանել միևնույն  $R$  շառավիղն ունեցող աղեղներ, ուղիղ գծից վերև կամ ներքև, այնպես, վոր աղեղները հատվեն: Հատման ( $c$ ) կետը պետք է միացնել ուղիղի  $K$  կետի հետ քանոնով (կամ անկյունարդով):  $cK$  ուղիղն ուղղահայաց կլինի  $AB$ -ին:

31-րդ գծագրում կառուցումը կատարված է այն դեպքի համար, յերբ  $K$  կետը տված է  $AB$  ուղիղից դուրս կառուցումն

սկսում են այն բանից՝ վոր  $K$  կետից կարկինի միջոցով  $AB$  ուղիղը հատում են յերկու կետերում ( $a$  և  $b$ ): Իրա համար կարկինի հենման վտար զնում են  $K$  կետում և կարկինին տալիս են այնպիսի բացվածք, վոր շառավիղն ստացվի ավելի մեծ քան  $K$  կետի հեռավորությունը  $AB$  ուղիղից ( $R$  շառավիղ): Ստանալով  $a$  և  $b$  կետերը, միևնույն շառավիղով ( $R_1$ ) ազեղներ են տանում մինչև նրանց փոխհատվելը ( $d$  կետում): Մնում է իրար հետ միացնել  $d$  և  $K$  կետերը:  $dK$  ուղիղը կլինի ուղղահայաց  $AB$ -ին:  $KM$  հատվածի մեծությունը կլինի  $K$  կետի և  $AB$  ուղիղի ամենակարճ հեռավորությունը:



Գծ. 32

Պարտադիր չէ, վոր  $K$  և  $d$  կետերը գտնվեն  $AB$  ուղիղի տարբեր կողմերում: 32-րդ գծագրում  $d$  կետն ստացված է այն կողմում, վորտեղ գտնվում է նաև  $K$  կետը: Միայն պետք է հետևել, վոր  $K$  և  $d$  կետերն իրար շատ մոտ չգտնվեն (գծ. 32):

Հասվածի միջնուղղահայացը տանել:


33-րդ գծագրում կառուցումը կատարված է այն զեպքի համար, յերբ ուղղահայացը պետք է տանել  $AB$  ուղիղի միջնակետով: Խնդիրը լուծված է կարկինի և քանոնի միջոցով:  $AB$  ուղիղի յերկու ծայրերից միևնույն շառավիղով ( $R$ ) տարված են ազեղներ, վորոնք փոխհատվում են  $c$  և  $d$  կետերում: Ուշադրություն դարձնենք այն բանի վրա, վոր ազեղներ տանելու շառավիղը պետք է  $AB$  հատվածի կեսից մեծ լինի: Կառուցման ճշտություն համար պետք է վոր  $c$  և  $d$  կետերն իրարից բավականաչափ հեռու լինեն:

Յեթե  $c$  և  $d$  կետերն իրար հետ միացնենք, ապա կստացվի  $AB$  ուղիղի  $O$  միջնակետով անցնող ուղղահայացը:


Հետևաբար, բացի ուղղահայաց տանելուց, մենք այս խնդրում ստանում ենք նաև հատվածը կիսելու յղանակը: Ուշադրություն դարձնենք այն բանին, վոր յեթե պահանջվում է  $AB$  հատվածը կիսել (գծ. 34), ապա անհրաժեշտ չէ տանել  $c$  և  $d$  կետերը միացնող ուղիղը ( $AB$ -ին ուղղահայաց): Բավական է առնել քանոնը կամ անկյունարդը  $c$  և  $d$  կետերին և հատել

$AB$  ուղիղը կարճ շորիխով կամ մատիտի սուր ծայրով ծակել և քրանով իսկ նշել  $O$  կետը՝  $AB$  հատվածի միջնակետը:

Յեթե հարկ լիներ հատվածի միջնակետով ուղղահայաց տանել առանց կարկինի ոգնության, ապա նախ պետք էր միջնակետ



Գծ. 33




Գծ. 34

տրների բաժանված քանոնով այդ հատվածը չափելու միջոցով գտնել նրա միջնակետը:




Գծ. 35.

35-րդ գծագրում տրված է մի որինակ.  $AB$  հատվածը հա-



Գծ. 36



Գծ. 37

վասար է 75 մմ-ի և, հետևաբար, նրա միջնակետը ( $O$  կետը) գտնվում է 37,5 մմ-ի զիմաց: Յեթե քանոնի վրա շկան կես մի-

լիմետրական բաժանումներ, ապա աչքի չափով պետք է վերցնել 0,5 մմ: Հետո ուղղահայացի կառուցումը պիտի կատարել այնպես, ինչպես այդ ցույց է արված 28-րդ դժագրում:


Աղղամիզ լեվ կամ հորիզոնական գծի վրա գտնվող վորեվե կետով ուղղահայաց տանելը:

36-րդ և 37-րդ դժագրերը ներկայացնում են ուղղանկյունի և անկյունարդի միջոցով ուղղահայացներ տանելու որինակներ: 36-րդ դժագրում ուղղահայացը տարված է հորիզոնական գծի A կետով: 37-րդ դժագրում ուղղահայացը տարված է ուղղաձիգ գծի A կետով: Ռեյսչինը, վորի միջոցով տարված է հորիզոնական գիծը (գծ. 36), պետք է մի քիչ շարժել ներքև և ապա անկյունարդի միջոցով ուղղահայաց տանել: յեթե ուղղանկյունը չափված է, ապա A կետում ուղղանկյունի պարզ միացում չի ստացվում: Այդ իսկ նպատակով 37-րդ դժագրում անկյունարդը լետ է քաշված ուղղաձիգ գծից:

Ռեյսչինի և անկյունարդի միջոցով կարելի չե տախտակի վորես տեղում փոխադարձ ուղղահայացներ—ուղղաձիգ և հորիզոնական գծեր տանել:

Հասվածի ծայրին ուղղահայաց կառուցել:

Յեթե գծագրում հնարավոր է սովյալ AB հատվածը (գծ. 38) շարունակել, ապա խնդիրը լուծվում է այնպես, ինչպես ցույց է արված 30-րդ դժագրում:




Գծ. 38


Գծագիր 39. AB ուղիղի A ծայրակետից այդ ուղիղին ուղղահայաց տանելու համար վերցված է A կետից կամայական հեռավորության վրա գտնվող ոժանդակ O կետը: O կետից տարված է  $R=OA$  շառավիղով աղեղ: Այս աղեղն անցնում է A կետով և յերկրորդ անգամ հատում ուղիղը (C կետում): C կետը պետք է ուղիղ գծով միացնել O կետի հետ: CO ուղիղի շարուն-

ակում թյան վրա պետք է անջատել OD հատվածը՝ հավասար CO-ին, այսինքն R շառավիղը (տես 4-րդ խնդիրը, էջ 16), և ապա ստացած D կետը միացնել A կետի հետ: AD ուղիղն իրանից ներկայացնում է վորոնելի ուղղահայացը: DAB անկյունն ուղիղ է ( $90^\circ$ ):

Գծագիր 40. Այս դեպքում O կետը վերցված է հենց AB ու-



Գծ. 39



Գծ. 40

ղիղի վրա: Պետք է O կետը նշել AB ուղիղի վրա՝ տանելով A կենտրոնից աղեղ: R շառավիղի մեծությունը, այսինքն AO հատվածի յերկարությունը կամայորեն է վերցվում: Ապա կարելի է ուղղահայաց գծից այնպես, վորպեսզի O կենտրոնից միևնույն R շառավիղն ունեցող նոր աղեղով հասնեն առաջ տարած աղեղը: Ստացված C կետը պետք է միացնել ուղիղ գծով O կետի հետ: CO ուղիղի շարունակումը թյան վրա պետք է անջատել CO-ին, այսինքն R շառավիղին հավասար CD հատվածը: Այնուհետև նշված D կետը միացնում են A կետի հետ: DA ուղիղն ուղղահայաց կլինի AB-ին:


### § 6. ԶՈՒԳԱՀԵՌ ՈՒՂԻՂՆԵՐ ՏԱՆԵԼԸ

Շարժելով ուղղանկյուն տախտակով այնպես, վոր ուղղանկյունի գլխիկը նրա յուրաքանչյուր դիրքում սեղմված մնա տախտակի յեզրին, կարելի է անցկացնել մի շարք իրար դուրահետ գծեր (հորիզոնականներ):

Յեթե անկյունարդը ուղղանկյունի վրայով շարժենք այնպես, վոր նրա մի կողմը հպվի ուղղանկյունին, ապա կարելի յի տանել մի շարք զուգահեռ ուղիղներ: 41-րդ գծագրում անկյունարդը հավում է ուղղանկյունի հետ իր մի եջով: Տանելով ուղիղներ ներքնաձիգով՝ կարելի յի ստանալ իրար զուգահեռ մի շարք թեք ուղիղներ, իսկ մյուս եջով տանելով՝ կստանանք մի շարք ուղղաձիգ, հետևաբար զուգահեռ ուղիղներ:

Շարժական գլխիկ ունեցող ուղղանկյունի միջոցով (գծ. 12, էջ 10) նույնպես կարելի յի տանել մի շարք թեք զուգահեռ ուղիղներ:

Տվյալ ուղիղին կարելի յի հեշությամբ տանել զուգահեռ ուղիղ՝ անկյունարդի և քանոնի կամ յերկու անկյունարդի միջոցով:




Գծ. 41

42-րդ գծագրում տրված է տվյալ K կետով տվյալ AB ուղիղին զուգահեռ տանելու որինակը՝  $Y_1$  անկյունարդը մտանցնում են AB ուղիղին, անկյունարդի ստորին եջին մտանցնում են քանոնը, վորից հետո անկյունարդը շարժում են դեպի աջ այնպես, վոր K կետը գտնվի ներքնաձիգի վրա: Անկյունարդի ներքնաձիգի վրա գտնվող K կետով տարված ուղիղը զուգահեռ կլինի AB ուղիղին:

$Y_1$  անկյունարդի տակի քանոնի փոխարեն կարելի յի վերցնել յերկրորդ անկյունարդ և վարվել այնպես, ինչպես նախորդ դեպքում:

Պետք է հետևել, վոր քանոնը (կամ յերկրորդ անկյունարդը), վորի վրայով շարժվում է  $Y_1$  անկյունարդը, աշխատանքի ընթացքում անշարժ լինի:


Զուգահեռ ուղիղներ կարելի յի տանել նաև կարկինի և քանոնի միջոցով: 43-րդ գծագրի վրա C կետով պետք է տարվի տվյալ AB ուղիղին զուգահեռ կառուցումը կատարված է հետևյալ կերպ: AB ուղիղի A կետից անջատված է AK հատվածը, ապա C և K կետերով տարված է յերկու աղեղ, մինչև փոխհատվելը, մեկը՝  $R_1 = AK$  շառավիղով, իսկ մյուսը՝  $R_2 = AC$  շառավիղով:




Գծ 42

Աղեղների հատման M կետով և C կետով տարված է CD ուղիղը, վորը և զուգահեռ կլինի AB ուղիղին:

Յեթե անհրաժեշտ է տանել տվյալ AB ուղիղին զուգահեռ ուղիղ այնպես, վոր նրանց միջև լինի վորոշակի (տրված) KM հեռավորությունը, ապա AB ուղիղի վրա վերջրած կետերից տա-



Գծ. 43



Գծ. 44


նում են ոժանդակ աղեղներ, տվյալ հեռավորությանը հավասար շառավիղով (գծ. 44): Յեթե այդ ոժանդակ աղեղներին մոտեցնենք մի քանոն այնպես, վոր քանոնի յեզրը շոշափի աղեղներին, ապա այդ քանոնով կարելի յի անցկացնել CD ուղիղը, զուգահեռ AB-ին:

§ 7. ԱՆԿՅԱՑՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Ենթիւր II. Տանել մի ուղիղ, վոր սված ուղիղի հետ կազմի սված անկյունը: 45-րդ գծագրում կառուցումը կատարված է անկյունները չափելու համար գործածվող գործիքի՝ փոխադրիչի միջոցով: Փոխադրիչը (սովորաբար մեծազյա կամ ցելուլոյդիից), պարու-

նակում ե 180°-ի բաժանված կիսաշրջան: 45-րդ գծագրում ցույց ե արված յերկու փոխադրիչ: Նրանցից մեկը (վերևինը) ներկայացնում ե միայն կիսաշրջան, այդ փոխադրիչում կենտրոնը գտնվում ե փոխադրիչի ներքին չեղրի վրա: Մյուս փոխադրիչի մեջ կենտրոնը գտնվում ե ներսի ուղիղի վրա: Չափվող կամ անշտավող անկյան գագաթը միշտ պետք ե համընկնի փոխադրիչի ազդի կենտրոնի հետ:

45-րդ գծագրում կառուցված ե 37°-ի անկյուն՝ յերկու դեպ-



Գծ. 45

քում. 1) AB հորիզոնական ուղիղի նկատմամբ, 2) DE թեք ուղիղի նկատմամբ:


Յերկու դեպքերում ել փոխադրիչի կենտրոնը համընկնում ե այն կետի հետ, վորը նշվում ե ավյալ ուղիղի վրա ե վորը հանդիսանալու յե անկյան գագաթը (K ե M կետերը 45-րդ գծագրի վրա): Փոխադրիչի վրա զերո նիշը համատեղում են ավյալ ուղիղի հետ: Փոխադրիչով 37° հաշվելով նշում են կետը (45-րդ գծագրի վրա C ե F կետերը), վորից հետո փոխադրիչը յետ են քաշում ե նշանակված կետը քանոնով (կամ անկյունարդով) միացնում անկյան գագաթի հետ:

45-րդ գծագրում ցույց ե արված, վոր փոխադրիչը զբված ե

ուիյաշինի կամ անկյունարդի վրա: Վերջինները փոխադրիչին մեծ կայունություն են տալիս: Մակայն այդ անհրաժեշտ չե, ե անկյունների կառուցումը կամ նրանց չափումը փոխադրիչով կարելի յե կատարել առանց վորևե հենարանի:

Փոխադրիչի միջոցով կարելի յե կառուցել ցանկացած անկյունը: Յեթե անկյունը 180°-ից մեծ ե, ապա փոխադրիչով կառուցում են 180°-ից ավելացող անկյունը, որինակ՝  $215^\circ = 180^\circ + 35^\circ$  (գլծագրի 46):


Փոխադրիչի միջոցով կարելի յե հաշվել 145°-ի անկյուն ե այսպիսով կառուցել 215°-ի անկյուն ( $215^\circ + 145^\circ = 360^\circ$ ):



Գծ. 46


Մի քանի անկյունների կառուցումն առանց փոխադրիչի ոգևարյան.

Մի քանի անկյուններ (սուր ե բութ) կարելի յե կառուցել նաև առանց փոխադրիչի, ոգավելով մեկ կամ միաժամանակ յերկու անկյունարդով:




Գծ. 47

Այդպիսի կառուցումները որինակներ արված են 47-րդ և 48-րդ գծագրերում: Անկյունադրների միջոցով անկյուններ կարելի չէ կառուցել վոչ միայն հորիզոնական գծերի նկատմամբ, ինչպես




Գծ. 48

այդ արված է 47-րդ և 48-րդ գծագրերում, այլև վորևե թեք ուղիղի նկատմամբ: Այդպիսի կառուցման որինակ կարող է



Գծ. 49




Գծ. 50

ծառայել 28-րդ գծագիրը (եջ 18), վորտեղ AB թեք ուղիղի վրա կառուցված է մի անկյուն, վորի գագաթն է K կետը:

45°-ի անկյունը կարելի չէ կառուցել նաև ուղիղ անկյունը կիսելով (գծ. 49): Եւրոյ անկյան գագաթից, վորպես կենտրոնից, տանում են մի աղեղ՝ կամայորեն վերցրած շառավիղով (R): Ստացված a և b կետերից միևնույն շառավիղով (R<sub>1</sub>) տանում են յերկու աղեղ մինչև փոխհատվելը: OK ուղիղը կետում է անկյունը: R և R<sub>1</sub> շառավիղները կարող են իրար հավասար լինել: Այս յեղանակով կարելի չէ կիսել ամեն մի անկյուն: Հետևապես կարելի չէ առանց փոխադրիչի ստանալ 47-րդ և 48-րդ գծագրերում կառուցված մի շարք անկյունների կիսերին հավասար անկյուններ (որինակ՝ 23 1/2°, 37 1/2°, 52 1/2°, 7 1/2° և այլն):

30°-ի անկյուն կարելի չէ ստանալ ուղիղ անկյունը յերեք մասի բաժանելով (գծ. 50): Անկյան գագաթից, վորպես կենտրոնից, տանում են մի աղեղ՝ կամայորեն վերցրած R շառավիղով: Ստացված a և b կետերով նույն շառավիղով (R) տանում են յերկու աղեղ՝ մինչև առաջին աղեղի հետ փոխհատվելը: Նոր ստացած c և d կետերը միացնելով ուղիղ անկյան գագաթի հետ՝ կստանանք իրար հավասար յերեք անկյուն, այսինքն 30°-ի անկյուններ:



Գծ. 51


Վերոհիշյալ կառուցումից հետևում է 60°-ի անկյան կառուցման յեղանակը (գծ. 51). CA ուղիղի վրա գտնվող K կետից տանում են մի աղեղ՝ կամավոր շառավիղով ( ) և ստացված a կետից տանում են ելի մի ուրիշ աղեղ՝ նույն շառավիղով: K և b կետերով տանում են մի ուղիղ, վորը CA ուղիղի հետ կազմում է 60° անկյուն:

Խնդիր 2. Կառուցել սփյալ AOB անկյանը հավասար անկյուն (գծ. 52):

Կառուցումը կարելի չէ կատարել մի քանի յեղանակներով: 1-ին յեղանակ. գիցուք AOB անկյունը պետք է տեղափոխել CD ուղիղի վրա այնպես, վոր անկյան գագաթն համընկնի K կետի հետ (գծ. 53): Փոխադրիչի միջոցով շափում են AOB անկյունը: Հետո փոխադրիչը դնում են CD ուղիղի վրա այնպես, վոր փոխադրիչի աղեղի կենտրոնը համընկնի K կետի հետ:


Նշանակում են M կետը, վերցնում են փոխադրելը և K և M կետերով տանում են ուղիղ գիծ: DKM անկյունը հավասար է AOB անկյանը:

2-րդ յեղամասը. լերկրաչափությունից հայտնի չե, վոր միևնույն շրջանագծի մեջ կամ միևնույն շառավիղ ունեցող շրջանագծերի մեջ հավասար լարեր ձգում են հավասար աղեղներ և հա-



ՊՃ. 52

ՊՃ. 53



ՊՃ. 54


վասար աղեղներին համապատասխանում են հավասար կենտրոնական անկյուններ: Վերոհիշյալ հատկությունների կիրառման վրա յե հիմնված ավյալ անկյանը հավասար անկյուն կառուցելու լերկրորդ յեղանակը:

Կարկինի հենման կետը զնելով O կետում (ՊՃ. 54), հատում


են ավյալ անկյան կողմերը մի աղեղով՝ կամավոր շառավիղով (R): CD ուղիղի K կետից տանում են աղեղ՝ նույն շառավիղով (R): Չափում են (կարկինով) a և b կետերի հեռավորությունը և CD ուղիղի վրա ստացված d կետից հատում են աղեղը c կետում այնպես, վոր ստացված ab լարը հավասար լինի cd լարին: K և C կետերով տանելով ուղիղներ՝ կտանանք DKN անկյունը, վորը հավասար է ավյալ AOB անկյանը:

3-րդ յեղամակ. AOB անկյան AO կողմի վրա O կետից անջատում են վորևե Oa հատված՝ հավասար, որինակ՝ 50 մմ-ի: a կետով տանում են ուղղահայաց և շարունակում մինչև AOB անկյան OB կողմը հատելը. չափում են ab հատվածը. դիցուք ab հատվածը հավասար է 30 մմ-ի:

Հետո CD ուղիղի վրա K կետից անջատում են Kd հատվածը, հավասար 50 մմ-ի. d կետով տանում են ուղղահայաց և



ՊՃ. 55



ՊՃ. 56

նրա վրա անջատում cd հատվածը՝ հավասար 30 մմ-ի: Տանելով K և c կետերով ուղիղ՝ կտանանք DKN անկյունը, վորը հավասար է ավյալ AOB անկյանը:

Ինչպես յերևում է 55-րդ գծագրից, այս յեղանակը հանգում է ուղղանկյուն յեռանկյան կառուցմանը, յերբ տրված են եջերը:

4-րդ յեղանակ. այս յեղանակով կառուցումը հիմնված է յերկու սուր և կամ յերկու բութ անկյունների հավասարության հատկության վրա, յերբ անկյունների կողմերը իրար զուգահեռ են. Հետևապես այս յեղանակից կարելի է ոգտվել միայն այն դեպքերում, յերբ անկյունների կողմերը կարող են լինել զուգահեռ Առաջին, յերկրորդ և յերրորդ յեղանակները կիրառելի յեն բոլոր դեպքերում:


Խնդիրը հետևյալն է. K կետում, վորպես անկյան գագաթում, կառուցել ավյալ AOB՝ անկյանը հավասար անկյուն:

Կառուցումը բերվում է K կետից յերկու ուղիղներ տանելուն, վորոնք զուգահեռ լինեն AOB անկյան կողմերին (գծ. 56): Նախ անկյունարդն ու քանոնը հավասարեցնում են AO կողմի հետ, հետո անկյունարդը շարժում քանոնով մինչև K կետը և տանում KC ուղիղը. հետո անկյունարդը և քանոնը հավասարեցնում են BO կողմի հետ. անկյունարդը շարժում են քանոնի վրայով մինչև K կետը և տանում KD ուղիղը: DKC անկյունը հավասար է AOB անկյանը:

Յեթե տրված լինի վորտեղի անկյան կողմերից մեկի ուղղությունը, վորը զուգահեռ է ավյալ AOB անկյան կողմին, ինչպես առաջին, յերկրորդ և յերրորդ յեղանակներում, ապա խնդիրը չորրորդ յեղանակով լուծել անհնարին կլինի:

Խնդիր 3. Կառուցել անկյուն քեփուրյան սլյալ մեծուրյամբ:

Թեքություն հասկացողությանը (այլ կերպ ասած—մի ուղիղի թեքությունը մյուսի նկատմամբ) մենք հանդիպեցինք անկյուններ կառուցելու յերրորդ յեղանակը քննարկելիս (գծ. 55, էջ 31): Անկյունը կառուցվեց յերկու վորտեղական հատված-




Գծ. 57

ների միջոցով. այդ հատվածների մեծությունների հարաբերությունը կազմում է, այսպես կոչված, քեփուրյունք. MK ուղիղի թեքությունը CD ուղիղի նկատմամբ (գծ. 55) արասհայտվում է  $\frac{30}{50}$  հարաբերությունով, իսկ տոկոսներով այս թեքությունը հավասարվում է  $60\%$ -ի:


Դիցուք պահանջվում է կառուցել անկյուն, վորի թեքությունը լինի 1:5: AB ուղիղի վրա (գծ. 57), վորի նկատմամբ պետք է կառուցել անկյունը, վերցնում են չափված AK հատվածը (57-րդ գծադրում հատվածը 50 մմ է): K կետով տանում են ուղղահայաց, վորի վրա անջատում AK հատվածի հինգերորդ մասին հավասար հատված: AC ուղիղը AB ուղիղի հետ կազմում է 1:5 կամ  $20\%$  թեքությամբ վորոշվող անկյուն:

Թեքության կառուցումը հանգում է արված էջերով ուղղանկյուն յեռանկյուն կառուցելուն:

Անհրաժեշտ չէ, վոր վերցրած AK հատվածը հավասար լինի 50 մմ-ի. յեթե հատվածը, որինակ, հավասար լիներ 70 մմ, ապա 1:5 թեքության համար KM հատվածը հավասար պիտի լիներ 14 մմ-ի. յեթե AK հատվածը լիներ 100 մմ, ապա KM հատվածը պետք է լիներ 20 մմ և այլն:



Գծ. 58



Գծ. 59

Նույն AC ուղիղի թեքությունը (գծ. 57) KM ուղիղի նկատմամբ հավասար է  $50:10 = 5:1$  հարաբերության մեծությանը:

1:1 թեքություն ( $100\%$ ) կառուցելիս ստացվում է  $45^\circ$ -ի անկյուն (գծ. 58). վորպես որինակ կարող է ծառայել  $45^\circ$  և  $90^\circ$  անկյուններով անկյունարդը: Այդ անկյունարդի փոքր կողմերն իրար հավասար են, այսինքն գտնվում են 1:1 հարաբերության մեջ:

Ստորև բերված աղյուսակում արված է անկյունների մեծությունը (աստիճաններով) և նրանց համապատասխան թեքությունները (տոկոսներով) կտրացրած): Որինակ  $20^\circ$ -ի անկյանը համապատասխանում է  $36,4\%$  թեքություն, հետևապես  $20^\circ$ -ի անկյուն կառուցելու համար պետք է կառուցել  $36,4\%$  թեքու-



թյուն, այսինքն կառուցել մի ուղղանկյուն յեռանկյուն, վորի եջերը լինեն 100 մմ և 36,4 մմ<sup>1</sup>).

ԱՂՇՈՒՍԱԿ 1


Անկյուն (°)	Քեքուժյուն %								
1	1,7	10	17,6	19	34,4	28	53,2	37	75,4
2	3,5	11	19,4	20	36,4	29	55,4	38	78,1
3	5,2	12	21,3	21	38,4	30	57,7	39	81,0
4	7,0	13	23,1	22	40,4	31	60,1	40	83,9
5	8,7	14	24,9	23	42,4	32	62,5	41	86,9
6	10,5	15	26,8	24	44,5	33	64,9	42	90,0
7	12,3	16	28,7	25	46,6	34	67,5	43	93,2
8	14,0	17	30,6	26	48,8	35	70,0	44	96,6
9	15,8	18	32,5	27	51,0	36	72,7	45	100

Աղյուսակը հնարավորություն է տալիս կառուցելու 45°-ից ավելի մեծ անկյուններ: Որինակ՝ պետք է կառուցել 50°-ի անկյուն: Դրա համար պետք է աղյուսակում գտնել այդ անկյունը մինչև 90° լրացնող անկյանը համապատասխանող թեքութունը (այդպիսի անկյունները կոչվում են լրացուցիչ անկյուններ): 50°-ի անկյան լրացուցիչ անկյունն է 40°-ի անկյուն: 40°-ի անկյան թեքութունը (ըստ աղյուսակի) հավասար է 83,9 %: AB ուղիղի (գծ. 60) A կետով տանենք ուղղահայաց և նրա վրա անջատենք AK հատվածը՝ հավասար 100 մմ-ի, և կառուցենք մի ուղղանկյուն յեռանկյուն՝ 100 մմ և 83,9 մմ եջերով: AC ուղիղը AB ուղիղի հետ կազմում է վորոնելի 50°-ի անկյունը:

57-րդ գծագրի վրա պատկերված դեպքում ևս կարելի չէ զեկավարվել ավյալ աղյուսակով և վորոշել անկյան մոտավոր մեծութունը, քանի վոր 20% (10:50 = 1:5) թեքությանը համապատասխանում է 12°-ից փոքր և 11°-ից մեծ անկյուն:

1) Միլիմետրերի աստիճանական մասերը մոտավոր կերպով կարելի չէ վերցնել մասշտաբային քանոնից՝ չափակարկների միջոցով: Կան մասշտաբային քանոններ, վորոնք սենեն կետակլիմետրերի նիշնշումները:

Յեթե պահանջվում է ավելի ճշգրիտ հաշիվ, ապա պետք է դիմել մաթեմատիկական բնույթ ունեցող հաշվումների՝ այն է՝ անկյան վորոշմանն ըստ նրա տանգենսի (յեռանկյունաչափություն): Անկյան տանգենսը և թեքութունը, վորի միջոցով կառուցում են անկյունը, միևնույն մեծություններն են ներկայացնում:



Գծ. 60

§ 8. ՈՒՂԻՂ ԴԾԻ ՀԱՏՎԱԾԸ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼԸ

Հատվածը կիսելու յեղանակը, կարկինի ու քանոնի միջոցով, ցույց է տրված 34-րդ գծագրում (եջ 21). այդ յեղանակը համընկնում է հատվածի միջնակետից ուղղահայաց տանելու յեղանակի հետ (գծ. 33, եջ 21):


Նույն յեղանակով կիսելով հատվածի ստացված կեսերից յուրաքանչյուրը՝ կստանանք հատվածի բաժանումը 4 մասի, շարունակելով հատվածի բաժանումը՝ կստանանք 8, 16 և այլն մասեր:

Հատվածը մի քանի մասերի կարելի չէ բաժանել ի հարկե նաև մասշտաբային քանոնով: 35-րդ գծագրում (եջ 21) ցույց է տրված, թե ինչպես են հատվածը կիսում: Յեթե պահանջվում է նույն 75 մմ-անոց հատվածը բաժանել յերեք հավասար մասի, ապա պետք է վերցնել 25 մմ յուրաքանչյուր դեպքում, այսինքն նախորդ հաշիվ, թե ինչի յե հավասար ավյալ հատվածի յերրորդ մասը:

Հատվածը մասշտաբային քանոնով մասերի բաժանելիս պատահում է դեպք, յերբ հարկ է լինում նշել միլիմետրերի մասերը, որինակ՝ նույն 75 մմ հատվածի յորրորդ մասը հավասար է


18,75 մմ-ի, այսինքն պետք է նշել 18 մմ և ելի միլիմետրի  $\frac{3}{4}$  մասը, և այդ անում են աչքի չափով:

Հատվածի մի քանի հավասար մասերի բաժանելու ընդհանուր յեղանակը հետևյալն է (գծ. 61): Տվյալ AB հատվածի ծայրերից մեկից կամավոր անկյան տակ տանում են մի ոժանդակ ուղիղ և նրա վրա վերցնում կամավոր Aa հատվածն այնքան անգամ, վորքան մասերի յեն ցանկանում բաժանել ավյալ AB հատվածը: 61-րդ գծագրում հատվածը բաժանված է 5 հավասար մասի, հետևապես ոժանդակ AC ուղիղի վրա վերցված է 5 հա-



Գծ. 61

վասար հատված՝  $Aa=ab=bc=cd=de$ : AC ուղիղի վերջին հատվածի e ծայրը ուղիղ գծով պետք է միացնել B կետի հետ. a, b, c և d կետերից տանում են Be ուղիղին զո զահեռ ուղիղներ




Գծ. 62

և շարունակում մինչև AB հատվածի հետ հատվելը: AB հատվածը k, m, n և o կետերով բաժանվում է 5 հավասար մասի: Կարկինի միջոցով կարելի յե ավյալ հատվածը բաժանել մի

քանի հավասար մասերի՝ բաժանանին ճշգրիտ և արագ, հետևյալ յեղանակով. դիցուք AB հատվածը պետք է բաժանել 3 հավասար մասի (գծ. 62): Աչքի չափով վերցնում են AB հատվածի յերրորդ մասը. այս դեպքում սխալը կլինի նվազեցման կամ մեծացման կողմը (62-րդ գծագրում սխալը նվազեցման կողմն է— մնում է cB հատվածը): Թե մեկ և թե մյուս դեպքում աչքի չափով վորոշում են ուղղումն Aa հատվածի նկատմամբ և բաժանելով cB մնացորդը 3 մասի՝ կրկին ստուգում: Փորձը կրկնելով մի քանի անգամ՝ ստանում են ցանկացած բաժանումը:

Յեթե Ae հատվածը (գծ. 61) AB հատվածի նկատմամբ վերցված է վորոշ հարաբերությամբ (որինակ՝  $Ae=0,5 AB$ ), ապա



Գծ. 62ա

նման յեռանկյունների կողմերի հատկու թյունների հիման վրա՝ իրար նկատմամբ միևնույն հարաբերությունը կունենան Aa և AK, Ae և An և այլն հատվածները:

62ա գծագրում պատկերված է ABC յեռանկյունը. AB կողմը հավասար է 50 մմ, AC կողմը՝ 30 մմ: Նրանց հարաբերությունն է՝


$$\frac{AC}{AB} = \frac{30}{50} = 0,6:$$

ABC յեռանկյան մեջ BC կողմին տարված զուգահեռ ուղիղները բաժանում են AB և AC կողմերը համեմատական մասերի. որինակ՝  $\frac{AE}{AD} = \frac{AC}{AB} = 0,6:$

$$\text{Յեթե } AD = 40 \text{ մմ, ապա } AE = 0,6 \times 40 = 24 \text{ մմ:}$$

ACB յեռանկյան միջոցով կարելի է վորոշել (առանց հաշվելու) մի հատվածի յերկարութունը, վորը կազմում է տվյալ հատվածի յերկարության 0,6-ը: Որինակ՝ պահանջվում է վերցնել մի հատված, վորի յերկարութունը պետք է կազմի AK հատվածի յերկարության 0,6-ը: Պետք է (տես պժ. 62ա) AB կողմի վրա վերցնել տվյալ AK հատվածը և K կետից տանել զուգահեռ BC-ին: AM հատվածը հավասար է 0,6 AK:

Այս ձևով կառուցված պատկերը կոչվում է համեմատական մասշտաբ: Նրանով կարելի յե ոգտվել զծագիրը փոքրացնելու և



Պժ. 62բ

մեծացնելու համար: Որինակ, յեթե պահանջվում է յուրաքանչյուր հատված մեծացնել 50% -ով, ապա, յեթե  $AB = 50$  մմ, AC-ն պետք է վերցնել 75 մմ:


ABC անկյունը պետք է ընտրել այնպես, վոր զուգահեռ ուղիղների միջոցով կողմերի հատումը կտտարվի  $90^\circ$ -ին հնարավոր չափով մոտ անկյունով:

Հարմար է համեմատական մասշտաբ կառուցել միլիմետրական թղթի վրա ուղղանկյուն յեռանկյան ձևով (պժ. 62բ): Այս դեպքում եջերի հարաբերութունը  $\frac{PR}{SR}$ , պետք է տա պահանջված փոքրացումը կամ մեծացումը: 62բ զծագրում մասշտաբը կատարված է  $\frac{PR}{SR} = 0,6$  հարաբերությամբ: Եթե SR եջի վրա


անջատենք ST հատվածը, ապա նրան ուղղահայաց TX հատվածը կստացվի հավասար 0,6 ST-ի:

§ 9. ՇՐՋԱՆԱԳԾԻ ԱՂԵՂԸ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼԸ

63-րդ զծագրում ցույց է արված AB աղեղի կիսելը: Տված աղեղի ծայրերից կամավոր  $R_1$  շառավիղով տարված են յերկու ոժանդակ աղեղ. վերջինները հատվում են C կետում: O կենտրոնը C կետի հետ միացնող ուղիղը հատում է AB աղեղն այնպես,




Պժ. 63



Պժ. 64

վոր  $AD = DB$ : 64-րդ զծագիրը ցույց է տալիս, վոր 63-րդ զծագրի վրա տված կառուցումը համապատասխանում է AB աղեղի O կենտրոնից նրա լարին ուղղահայաց տանելուն:

Վորեև աղեղ ցանկացած թվով հավասար մասերի կարելի յե բաժանել, գործնականի համար բավարար ճշտությամբ, այնպես, ինչպես ցույց է տված ուղիղի համար (պժ. 62), այսինքն աղեղի փորձնական բաժանումով: Միայն պետք է հիշել, վոր լարը հավասար մասերի բաժանելով և բաժանման կետերից շառավիղներ տանելով կամ բաժանման կետերում ուղղահայացներ կառուցելով աղեղը հավասար մասերի բաժանել չի կարելի: Որինակը արված է 65-րդ զծագրի վրա:



Պժ. 65


65-րդ զծագրում  $Aa = ab = bB$ ;  $\sim Ac < \sim cd$ ;  $\sim Ae > \sim ef$ :

§ 10. ԱՆԿՅԱՆ ԲՍԺԱՆՈՒՄԸ ՄԱՍԵՐԻ

Վորեն անկյուն կարելի չէ կիսել այն յեղանակով, վորը ցույց է տված 49-րդ դժագրում (եջ 28), ուղիղ անկյան համար Շարունակելով յուրաքանչյուր կեսի կիսումը, կստանան նույն անկյունը՝ բաժանված 4, 8, 16 և այլն մասերի:

Ուղիղ անկյունը 3 հավասար մասի բաժանելու յեղանակը կարկինի և քանոնի ոգնությամբ, ցույց է արված 50-րդ գժագրում (եջ 28):

Անհրաժեշտ է հիշել, վոր հիշյալ յեղանակով 3 մասի կարող ենք բաժանել միմիայն ուղիղ անկյունը. կամավոր մեծության վորեն անկյուն, այսինքն վորեն սուր և բութ անկյուն, յերկրաչափական կառուցումներով (կարկինի և քանոնի ոգնությամբ) 3 մասերի բաժանել հնարավոր չէ:



Գժ 66

Վորեն անկյուն գործնականի համար բավարար ճշտությամբ, կարելի չէ բաժանել մի քանի հավասար մասերի՝ հետևյալ յեղանակով: Տրված AOB անկյունը հատում են (գժ. 66) O կենտրոնից տարած կամավոր շառավիղ ունեցող աղեղով: ab աղեղը աչքի չափով բաժանում են այնքան հավասար մասերի, ինչքան մասերի ցանկանում են բաժանել տված AOB անկյունը: Այն բանից հետո, յերբ ab աղեղը բավարար ճշտությամբ, մի քանի փորձնական բաժանումներով, կբաժանվի հավասար մասերի, ստացված c և d կետերը միացնում են O կենտրոնի հետ (գժ. 66):

Այդ յեղանակը կարելի չէ կիրառել վորեն անկյուն ցանկացած թվով մասերի բաժանելիս:


Իհարկե անկյունը մի քանի մասերի կարելի չէ բաժանել նաև փոխադրելով: Որինակ, յիթև  $72^\circ$ -ի անկյունը ցանկանում են բաժանել 5 հավասար մասի, ապա նախապես պետք Գ

հաշվել տվյալ անկյան մեկ հինգերորդ մասը ( $72^\circ : 5 = 14^\circ 24'$ ), Ստացված անկյունը փոխադրելով վերցնելիս ստանանք մասերը նշում են աչքի չափով:

§ 11. ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՐԻՆԱԿՆԵՐ


Որինակ 1. Ուղիղ վրա վերցնել իրա հաջորդոց յեվ 40 մմ, 25 մմ և 35 մմ յերկարություններն ունեցող 3 հասված:

Գծում են մի ուղիղ (գժ. 67) և նրա վրա գտնվող վորեն A կետից կարկինի և կամ մասշտաբ քանոնի միջոցով վերցնում առաջին



Գժ 67

հատվածը՝  $AB = 40$  մմ (աես 16 եջը), Հետո B կետից վերցնում են յերկրորդ հատվածը՝  $BC = 25$  մմ, իսկ C կետից յերրորդ հատվածը՝  $CD = 35$  մմ: Դրանից հետո պետք է կատարել ստուգում. AD-ն պետք է հավասար լինի 100 մմ-ի: Յեթև B և C կետերը նշելն անհրաժեշտ չէ, ապա կարելի չէ նախորոք հաշվել յերկարությունների գումարը ( $40 + 25 + 35 = 100$ ) և միանգամից A կետից վերցնել AD հատվածը:



Գժ. 68


Որինակ 2. Կառուցել յեղանկյուն, յեր սված են յեթև կողմեր, վորոնց հաջորդաբար հավասար են 40 մմ, 35 մմ, 25 մմ:

Ստուգելով առաջադրանքը (տրված հատվածներից ամենամեծը պետք է փոքր լինի մյուս յերկու հատվածների գումարից) ուղիղ վրա վերցնում են տված կողմերից մեկը (գժ. 68), որին հավ. 40 մմ. AB հատվածի A ծայրից 35 մմ շառավիղով տանում


են մի աղեղ, մինչև հասվելը AB հատվածի B ծայրից 25 մմ շառավիղով տարած աղեղի հետ: Աղեղների հատման C կետը միացնում են A-ի և B-ի հետ:

Մտնակ 3. Կառուցել յեռանկյունը, յերբ սված են մի կողմը՝ 40 մմ, նրան արևելքե անկյունը՝  $60^\circ$ , յեվ այդ կողմի դիմացի անկյունը՝  $80^\circ$ :

Քանի վոր յեռանկյան անկյունների դումարը պետք է հավասար լինի  $180^\circ$ -ի, ապա յերրորդ անկյունը հավասար կլինի  $180^\circ - (60^\circ + 80^\circ) = 40^\circ$ : Այս անկյունը կլինի յեռանկյան տված



Գծ. 69



Գծ. 70


կողմին առնթեր անկյուն: Հետևապես պետք է կառուցել յեռանկյուն, յերբ տրված է մի կողմը և նրան առնթեր յերկու անկյունները:

Ուղիղի վրա վերցնում են 40 մմ-ի հավասար AB հատվածը (գծ. 69): A և B կետերն ընդունելով վորպես  $60^\circ$  և  $40^\circ$  անկյունների գագաթներ՝ կառուցում են այդ անկյունները AB կողմի վրա, կիրառելով § 7-ում ցույց տված յեղանակներից այն, վորը համապատասխանում է տված գեպքին: 63-րդ գծադրում  $BAC = 60^\circ$  անկյունը կառուցված է կարկինի միջոցով, իսկ  $ABC = 40^\circ$  անկյունը թեքությունների աղյուսակով (եջ 39):

Մտնակ 4. Կառուցել ուղղանկյունը, յերբ սված են յեկու կողմերը 40 մմ յեվ 20 մմ:

Ուղիղի վրա վերցնում են մի հատված հավասար տված կողմերից մեկին, որինակ՝ 40 մմ (գծ. 70): Այդ հատվածի յերկու ծայրերից տանում են ուղղահայացներ, կիրառելով 17 հջում ցույց տրված յեղանակներից մեկը: Ուղղահայացների վրա վերց-

նում են 20-ական միլիմետր և C ու D կետերը միացնում իրար: Կարելի յե ուղղահայացներից մեկի վրա վերցնել 20 մմ, ապա նշված կետից զուգահեռ տանել AB-ին:




Գծ. 71

Մտնակ 5. a4 Ֆորմատի րդրի վրա, վորը դասավորված է այնպես, վորպես-Վի հիմքը լինի կարև կողմը, սառել մի քաղցնակ այնպես, վոր վերջինս ունենա ձախ յեզրից 25 մմ հեռավորություն, իսկ մնացած յեզրերից՝ 5 մմ:


Յեթե թերթը դրված լինի գծադրական տախտակի վրա, ապա ամենահարմարը կլինի շրջանակը տանել ուղիղի և անկյունարդի միջոցով (տես եջ 15): Յեթե հարկ լինի աշխատելու առանց գծադրական տախտակի և ուղիղի, ապա և պետք տանել ֆորմատի ձախ յեզրից 25 մմ հեռավորությամբ ուղիղ (գծ. 71): Այդ ուղիղի վրա պետք է չափել 278 մմ, այսինքն ֆորմատի վերևի և ներքևի ծայրերից պետք է հեռանալ 5 մմ-ով: Ապա պետք է կառուցել ուղղանկյունը՝ 278 մմ և 173 մմ կողմերով:

**Ուրինակ Ե.** Տիպի օրջանագծի մեջ կառուցել կենտրոնական անկյուն՝ հավասար օված ABC անկյան (գծ. 72):

Կառուցումը կատարված է 54-րդ գծագրում (եջ 30) ցույց տված յեղանակով: Պետք է հիշել, Վոր միայն հավասար շառա-




Գծ. 72




Գծ. 73

վիղները գեղջում կարելի յե հավասար լարերով ստանալ հավասար աղեղներ, իսկ, հետևապես, և հավասար կենտրոնական անկյուններ:

72-րդ գծագրում ABC անկյունը չափված է այն շառավիղն



Գծ. 74



Գծ. 76

ունեցող աղեղով, Վորը տրված է շրջանագծի համար: Ապա ac լարը փոխանցված է շրջանագծի վրա՝ KM = ac:

Յեթե ABC անկյունը չափվեր ուրիշ շառավիղ (R<sub>1</sub>) ունեցող աղեղով (գծ. 73), ապա պետք է O կենտրոնից նույն R<sub>1</sub> շառավիղով տարվեր աղեղ և նրա վրա վերցվեր km = de լարը:

Ուրինակ 7 կրկնապատկել սված անկյունը:

Տված AOB անկյան կողմերը (գծ. 74) հատում են R կամավոր շառավիղն ունեցող աղեղով և հետո OB կողմի վրա, C գագաթում կառուցում տված AOB անկյան հավասար անկյուն: AOC անկյունը հավասար է AOB անկյան կրկնապատկին:

Ուրինակ 8. A կետից անկյունի մի ուղիղ վորը հասի սված BC ուղիղը 1:4 թեմությամբ արճանաչվող անկյան ակ:


75-րդ գծագրում կառուցված է AKM ուղղանկյուն յեռանկյունը, Վորի էջերը կազմում են 1:4 հարաբերությունը: AK էջը տարված է զուգահեռ BC ուղիղին:

76-րդ գծագրում տրված է այլ կառուցում: BC ուղիղի վրա կառուցված է EDF ուղղանկյուն յեռանկյունը՝ 1:4 թեքությունն ունեցող ներքնաձիգով: Հետո A կետից տարված է զուգահեռ EF ներքնաձիգին:

Ուրինակ 9 Կառուցել հեղանկյուն՝ նեխվալ սվայներով:

- AB = 25 մմ
- AE = 30 »
- ED = 30 »
- BC = 16 »

- ∠BAE = 60°
- ∠AED = 150°
- ∠ABC = 90°




Գծ. 77

77-րդ գծագրում վորպես հիմք վերցված է AE կողմը: § 7-ում նշված յեղանակներից մեկով կառուցված են BAE և AED անկյունները, հետո վերցված են AB=25 մմ և ED=30 մմ հատվածները: AB կողմի B կետում կանգնեցված է BC ուղղա-


հայացրէ Հստ պայմանի 16 մմ-ի հավասար BC հատվածի վրա ստացված C կետը միացնում են D կետի հետ:

**Ուրինակ 10.** Տված է ABCDE բազմանկյունը: KM ուղիղի վրա պետք է կառուցել նրան հավասար բազմանկյուն (զծ. 78):

78-րդ գծազրույցում կառուցումը կատարված է աված բազմանկյունը լեռանկյունների բաժանելու յեղանակով, վորի համար տարված են BE և CE անկյունագծերը: Տված KM ուղիղի վրա անջատված է  $E_1D_1=ED$  հատվածը, վորի վրա կառուցված է



Գծ. 78



Գծ. 79

CDE յեռանկյան հավասար յեռանկյուն (յեռանկյունը կառուցելու յեղանակը նույնն է, ինչ վոր 2-րդ որինակում, էջ 41): Հետո կառուցված են BEC յեռանկյանը հավասար յեռանկյունը և BAE յեռանկյանը հավասար յեռանկյունը:

$A_1B_1C_1D_1E_1$  բազմանկյունը ներկայացնում է աված ABCDE բազմանկյան պատճենը:


**§ 12. ՀԱՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԿԱՌՈՒՅԵԼԻՄ**

89-րդ գծազրույցում տրված է համաչափ պատկերի որինակ. յեթե A կետից տանենք ուղղահայաց համաչափության առանցքին (համաչափության գծին), ապա այդ գծի մյուս կողմում նույն ուղղահայացի վրա կգտնվի մի ուրիշ B կետ, ընդ վորում  $AK=KB$ : Նույնը պետք է լինի նաև C և D կետերի համար ( $CM=MD$ ), E և F կետերի համար ( $EN=NF$ ) և ընդհանրապես բոլոր այն կետերի համար, վորոնք գտնվում են ավյալ յեղրագծի վրա և ավյալ պատկերի սահմաններում:

Գծազրույցի վրա համաչափության առանցքը նշելու համար կիրառում են յերկար շորիխներ ունեցող բարակ շորիխ-կետագծային գծեր:

**Խնդիր 1.** Կառուցել հավասարաուն յեռանկյուն, վորի հիմքը հավասար է 40 մմ, իսկ բարձրությունը՝ 50 մմ-ի:

Հավասարատուն յեռանկյան մեջ համաչափության առանցք հանդիսանում է զազաթի անկյան կիսորդը: Տված յեռանկյունը կառուցելու համար տանում են մի ուղիղ գծի, վորն ընդունում են համաչափության առանցք և նրա վրա վերցնում են աված յեռանկյան բարձրությունը (զծ. 80, AK հատվածը): K կետում պետք է ուղղահայաց կանգնեցնել համաչափության առանցքին և այդ ուղղահայացից, առանցքի յերկու կողմից, պետք է վերցնել յուրաքանչյուր կողմից 20-ական մմ: Միացնելով B և C կետե-




Գծ 80

րը A կետի հետ՝ կտանանք պահանջված յեռանկյունը: 80-րդ գծազրույցում տրված է կառուցման հաջորդական ընթացքը:


**Խնդիր 2.** Կառուցել ուղղանկյուն, յեթե նրա կողմերը հավասար են 80 մմ-ի յեվ 50 մմ-ի:

Ուղղանկյան մեջ կա համաչափության յերկու առանցք: Նրանք համընկնում են ուղղանկյան միջին գծերի հետ: Տված

ուղղանկյունը կառուցելու համար տանում են յերկու փոխադրահայաց ուղիղ և ընդունում են նրանց վորպես համաչափության առանցքներ (զժ. 81):  $O$  կետից առանցքներից մեկի վրա վերցնում են  $Oa = Oc = 40$  մմ հատվածը, իսկ մյուսի վրա՝  $Ob = Od = 25$  մմ:  $a$  և  $c$  կետերից անց են կացնում  $bd$ -ին զուգահեռ ուղիղներ, իսկ  $b$  և  $d$  կետից՝  $ac$ -ին զուգահեռ ուղիղներ: Այդ ուղիղների հատումից ստացվում են  $A, B, C$  և  $D$  կետերը, վորոնք հանդիսանում են վորոնների ուղղանկյան գագաթները:



Գժ. 81



Գժ. 82


**Խնդիր 3.** Կառուցել հավասարաձուլ սեղան, յեր սված են հիմքեր (80 մմ յեվ 50 մմ յեվ բարձրությունը (40 մմ):

Անց են կացնում ուղիղ և ընդունում այդ ուղիղը սեղանի համաչափության առանցք (զժ. 82): Այդ ուղիղի վրա վերցնում են 40 մմ-ի հավասար  $ab$  հատվածը:  $a$  և  $b$  կետերում տանում են առանցքին ուղղահայաց ուղիղներ և նրանց վրա վերցնում են  $aA = aB = 25$  մմ և  $bD = bC = 40$  մմ հատվածները,  $A, B, C$  և  $D$  կետերը հանդիսանում են վորոնների սեղանի գագաթները:

**§. 13. ԿՈՌՐԴԻՆԱՏՆԵՐԻ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԿԱՌՈՒՅԵԼԻՄ**

Կետի դիրքը հարթության վրա կարելի յե վորոշել այդ կետի յերկու փոխ-ուղղահայաց ուղիղներից ունեցած հեռավորությունով: Այդ ուղիղները կոչվում են կորդինատային առանցքներ:  $OX$  առանցքը կոչվում է աբսցիսների առանցք, իսկ  $OY$  առանցքը՝ օրդինատների առանցք:  $O$  կետը կոչվում է կորդինատների սկիզբ: Կետի հեռավորությունը առանցքներից, այսինքն  $Aa$  և  $Aa_1$  հատվածները կոչվում են կետի կորդինատներ:  $Aa_1$  հատվածը կոչվում է աբսցիս, իսկ  $Aa$  հատվածը օրդինատ:

Քանի վոր  $Aa_1$  հատվածը հավասար է  $Oa$ -ին, իսկ  $Aa$  հատվածը՝  $a_1O$ -ին, ապա  $A$  կետը կարելի յե գտնել այնպես, ինչպես



Գժ. 83

Գժ. 84

Գժ. 85

ցույց է տրված 84-րդ գծագրում, այսինքն  $O$  կետից արացիսների առանցքի վրա վերցնում ենք  $Oa$  հատվածը և ապա  $a$  կետում կանգնեցնում ենք ուղղահայաց, վորի վրա վերցնում ենք  $aA$  հատվածը: Հետևաբար կարելի յե  $OY$  հատվածը չտանել (զժ. 85), այլ նշել միայն կորդինատների սկիզբը— $O$  կետը, վերցնել արացիսը՝  $Oa$  հատվածը,  $a$  կետում ուղղահայաց կառուցել և նրա վրա վերցնել օրդինատը՝  $aA$  հատվածը:

Կետի կորդինատները գրում են վորոշակի կարգով՝ առաջին տեղում գրում են արացիսը, իսկ յերկրորդում՝ օրդինատը: Որինակ՝  $A(20, 15)$  նշանակում է այն  $A$  կետը, վորի արացիսը հավասար է 20 մմ-ի, իսկ օրդինատը՝ 15 մմ-ի:


**Խնդիր 1.** Կառուցել  $ABCD$  հառանկյունը, վորի գագաթների կորդինատներն են՝  $A(20, 15)$ ,  $B(30, 25)$ ,  $C(40, 20)$ ,  $D(35, 10)$ :

Յեթն տվյալ գծագրի համար կորդինատային առանցքների դիրքը ցույց չի տրված, ապա կարելի յե ընտրել վորևի ուղիղը ընդունելով այն վորպես արացիսների առանցք և նշել նրա վրա կորդինատների սկիզբը— $O$  կետը (զժ. 86): Հետո պետք է կառուցել այնպես, ինչպես այդ ցույց է արված 85-րդ գծագրում, այսինքն յուրաքանչյուր կետի համար վերցնել արացիսը և օրդինատը: Միացնելով  $A, B, C$  և  $D$  կետերը՝ կստանանք վորոնների քառանկյունը:


**Խնդիր 2.** Տված է  $ABCDE$  բազմանկյունը:  $KM$  ուղիղի վրա կառուցել երեք հավասար բազմանկյուն (զժ 87):

$ED$  ուղիղն ընդունենք, իբրև արացիսների առանցք:  $A$  կե-


տից ուղղահայաց տանենք ED ուղիղի շարունակությունը. կոորդինատների սկիզբը հարմար է ընտրել a կետում (զծ. 88): B և C կետերից տանելով ուղղահայացներ արացիաների առանցքին, ստանում ենք այդ կետերի արացիաները և որդինատները: Քանի վոր նոր բաղմանկյունը պետք է կառուցենք KM ուղիղի վրա, ապա այդ ուղիղն ընդունում ենք իբրև արացիա-




Գծ. 86



Գծ. 87



Գծ. 88




Գծ. 89

ների առանցք նոր բաղմանկյան համար, իսկ կոորդինատների սկիզբը վերցնում K կետում: KM ուղիղի վրա վերցնում ենք  $KE_1 = aE$ ,  $Kb_1 = ab$ ,  $KD_1 = aD$  և  $KC_1 = ac$  հատվածները:  $K, b_1$  և  $c_1$  կետերում կանգնեցնում ենք ուղղահայացներ KM ուղիղին և նրանց վրա վերցնում  $KA_1 = Aa$ ,  $b_1B_1 = Bd$ ,  $c_1C_1 = Cc$ : Այժմ մնում է հաջորդաբար միացնել  $A_1, B_1, C_1, D_1$  և  $E_1$  կետերը:  $A_1B_1C_1D_1E_1$  բաղմանկյունը (զծ. 89) հավասար է տված ABCDE բաղմանկյանը:

Կառուցման որինակ՝ կոորդինատների մեթոդը կիրառելու միջոցով—գծագիր 90:

Ուղղանկյունը կարելի չէ կառուցել նրա համաչափության

առանցքներով (90-րդ գծագրում ուղղանկյան համաչափության առանցքները ստարված չեն): Շրջանագծեր տանելու համար պետք է նշել նրանց կենտրոնների գիրքը: Յեթե A կետն ընդունենք իբրև կոորդինատների սկիզբ, իսկ ուղղանկյան կողմերը՝ կոորդինատային առանցքներ, ապա շրջանագծերի կենտրոնների գիրքը հեշտությամբ կարելի չէ գտնել նրանց կոորդինատներով: Այսպես, փոքր շրջանագծի կենտրոնի համար արացիսը հավասար է 20 մմ-ի, իսկ որդինատը՝ 30 մմ-ի, մյուս շրջանագծի կենտրոնի համար արացիսը հավասար է 65 մմ-ի, իսկ որդինատը՝ 25 մմ-ի:




Գծ. 90

10 չափսի առաջ դրված նշանը ծառայում է տրամագիծը նշանակելուն:

§ 14. ՇՐՋԱՆԱԳԾԻ ՀԱՎԱՍՏԱՐ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵՆԸ ՈՒ ՆՐԱ ՄԵՋ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԲԱԶՄԱՆԿՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԳԾԵԼԸ

Շրջանագիծը հավասար մասերի կարելի չէ բաժանել փոխադրելի միջոցով: Այսպես չեթե շրջանագիծը բաժանված է 10 հավասար մասերի, ապա չուրաքանչյուր մասին համապատասխանում է  $36^\circ$ -ի կենտրոնական անկյուն: Հետևաբար փոխադրելի միջոցով տված շրջանագծի կենտրոնում պետք է կառուցել  $36^\circ$ -ի անկյուն. այդ անկյան համապատասխանող աղեղը կկազմի շրջանագծի մեկ տասերորդ մասը:



Գծ. 91


91-րդ գծագրում շրջանագծի կենտրոնը ներկայացնում է յերկու այսպես կոչված կենտրոնական գծերի հատման կետը: Կենտրոնական գծերը գծագրի վրա պատկերված են բարակ շտրիխ-կետագծային գծով, բավականաչափ յերկար շտրիխներով:

(Ճիշդ 20 մմ յերկարութեամբ): Միշտ պետք է հետևել այն բանին, վոր շրջանագծի կենտրոնն ստացվի վորպես շարիխների հասման կետ: Վառ կառուցումը ցույց է տրված 92-րդ գծագրում:


Կենտրոնական գծերը պետք է դուրս գան շրջանագծի սահմաններից: Յեթե գծագրում շրջանագծի տրամագիծը 12 մմ-ից փոքր է, ապա կենտրոնը պետք է ստացվի շրջանագծի սահմաններից դուրս յեղնող յերկու շարիխների հատումով:

Շրջանագիծը բաժանել 4 հավասար մասերի.

Շրջանագիծը 4 հավասար մասերի բաժանելու համար պետք է տանել յերկու փոխուղղահայաց տրամագիծ: 93-րդ գծագրում



ԳՃ. 92



ԳՃ. 93

ԳՃ. 94

ԳՃ. 94

ԳՃ. 95

Շրջանագիծը կենտրոնական գծերով բաժանված է քառորդների: 94-րդ, 95-րդ գծագրում շրջանագիծը բաժանված է քառորդների՝ յերկու փոխուղղահայաց տրամագիծերի ուղնութեամբ:

Շրջանագիծին ներգծել քառակուսի.

Տրված շրջանագիծը պետք է բաժանել 4 հավասար աղեղ-


ների և տանել յարեր: Յեթե քառակուսու գագաթներն ընկնեն կենտրոնական գծերի վրա, ապա կառուցումը կատարում են համաձայն 93-րդ գծագրի: Յեթ յեթե քառակուսու գագաթները շրջանագծի վրա պետք է վորոշակի տեղ գրավեն, վորը չի համընկնում կենտրոնական գծերի հետ (գծ. 94 և 95), ապա պետք է տանել յերկու փոխուղղահայաց տրամագիծեր:

Շրջանագիծը բաժանել 8 հավասար մասերի.

Կենտրոնական գծերը և նրանց նկատմամբ  $45^\circ$ -ի անկյան տակ տարված յերկու փոխուղղահայաց տրամագիծերը բաժանում են շրջանագիծը 8 հավասար մասերի (գծ. 96): Բաժանելով շրջանագիծը քառորդների (գծ. 93 և 94), պետք է յուրաքանչյուր քառորդը կիսել, վորով շրջանագիծը կբաժանվի 8 հավասար մասի:

Շրջանագիծին ներգծել կանոնավոր ութ անկյուն.

Շրջանագիծն ութ հավասար մասի բաժանելուց հետո պետք



ԳՃ. 97

ԳՃ. 98

ԳՃ. 99

ԳՃ. 100

և հաջորդաբար միացնել այդ բաժանումից շրջանագծի վրա ստացված կետերը:

Շրջանագիծը բաժանել 6 հավասար մասի.

1 և 4 կետերից (կենտրոնական գծերից մեկի հատման կետերը շրջանագծի հետ) տանում են ոժանդակ աղեղներ՝ տվյալ շրջանագծի շառավիղին հավասար շառավիղով (գծ. 97): Կարիք չկա ոժանդակ աղեղները լրիվ տանել, բավական է միայն հատել շրջանագիծը:

Շրջանագծին ներգծել կանոնավոր վեց անկյուն.

Պետք է շրջանագիծը բաժանել 6 հավասար մասի և բաժանման կետերը հաջորդաբար միացնել (գծ. 98):

Շրջանագիծը բաժանել 3 հավասար մասի.

Շրջանագիծը 6 հավասար մասի բաժանելիս ստացվում է նաև 3 մասի բաժանումը (գծ. 97): Բավական է տանել միայն մի ոժանդակ աղեղ, որինակ՝ 4 կետից:

Շրջանագծին ներգծել կանոնավոր յեռանկյուն.

Պետք է շրջանագիծը բաժանել 3 հավասար մասի և բաժանման կետերը հաջորդաբար միացնել (գծ. 99):

Շրջանագիծը բաժանել 12 հավասար մասի.

1 և 7 կետերով շրջանագիծը բաժանում են 6 հավասար մասի. ստանում են 3 և 11, 5 և 9 հատումները: Այնուհետև 4 և 10 կետերով նորից բաժանում են շրջանագիծը 6 հավասար մասի, ստանում են 2 և 6, 8 և 12 հատումները:

Շրջանագծին ներգծել կանոնավոր քսանեկուսանկյուն.

Պետք է շրջանագիծը բաժանել 12 հավասար մասի և բաժանման կետերը հաջորդաբար միացնել:

Շրջանագիծը բաժանել 5 հավասար մասի.

OC շառավիղը (գծ. 101) կիսում են. K կետից, վորպես կենտրոնից, տանում են աղեղ՝ K և B (տրամագծի ծայրը) կետերի հեռավորություն հավասար շառավիղով: BM հատվածը հավասար է աված շրջանագծին ներգծած կանոնավոր հնգանկյան կողմին: B կետից, վորպես կենտրոնից, BM-ին հավասար շառավիղով հատում են շրջանագիծը, ստանում են 1 և 2 կետերը: Այս կետերից միևնույն շառավիղով (BM) հատում են շրջանագիծը և ստանում 3 և 4 կետերը:

101-րդ գծագրից հետևում է

$$KB^2 = KO^2 + BO^2 \text{ (Պյութագորի թեորեմ):}$$

$$KO = \frac{R}{2}, BO = R, \text{ հետևաբար՝}$$

$$KB = \sqrt{\frac{R^2}{4} + R^2} = \frac{R}{2} \sqrt{5}$$

$$KM = KB = \frac{R}{2} \sqrt{5}$$

$$BM^2 = BO^2 + OM^2 \text{ (Պյութագորի թեորեմ)}$$

$$BM^2 = BO^2 + (KM - KO)^2,$$

$$BM^2 = R^2 + \left(\frac{R}{2} \sqrt{5} - \frac{R}{2}\right)^2,$$

$$BM^2 = R^2 + \frac{R^2}{4} \cdot 5 - 2 \frac{R}{2} \sqrt{5} \cdot \frac{R}{2} + \frac{R^2}{4},$$

$$BM^2 = \frac{R^2}{4} (10 - 2\sqrt{5}), \quad BM = \frac{R}{2} \sqrt{10 - 2\sqrt{5}}$$

Ստանում են ներգծած կանոնավոր հնգանկյան կողմի լերկբազափությունից հայտնի արտահայտությունը: Հաշվում կատարելով ստանում են՝

$$BM \approx \frac{R}{2} \sqrt{10 - 2 \cdot 2,236} \approx \frac{R}{2} \sqrt{5,528} \approx \frac{R}{2} \cdot 2,351 \approx 1,176R,$$

վոր համապատասխանում է 2-րդ աղյուսակի ավյալներին (եջ 56):


Շրջանագծին ներգծել կանոնավոր հնգանկյուն.

Պետք է շրջանագիծը բաժանել 5 հավասար մասի և ստացված կետերը հաջորդաբար միացնել (գծ. 102):


Շրջանագիծը բաժանել 10 հավասար մասի.

Շրջանագիծը 5 հավասար մասերի բաժանելիս ստացվում է նաև կանոնավոր ներգծած տասնանկյան կողմը—OM հատվածը (գծ. 101). այդ հատվածի ողնությամբ կարելի է շրջանագիծը բաժանել 10 հավասար մասի:

101-րդ գծագրից հետևում է՝



Գծ. 101



Գծ. 102

$$OM = KM - KO = KB - KO, KB = \frac{R}{2}\sqrt{5}$$

$$OM = \frac{R}{2}\sqrt{5} - \frac{R}{2} = \frac{R}{2}(\sqrt{5} - 1):$$

Ինչպես հայտնի յի յիբրաշափությունից, այս արտահայտութիւնը ներգծած կանոնավոր տասնանկյան կողմն է:

Շրջանագծի բաժանումը լարերի աղյուսակի ոգնությամբ.


Տված R շառավիղն ունեցող շրջանագիծը կարելի յի հաստատար մասերի բաժանել այն հատվածների միջոցով, վորոնք գործնականի համար բավականաչափ ճշտությամբ վորոշվում են հետևյալ աղյուսակով:

Աղյուսակ 2

Շրջանագծի բաժանումների թիվը	3	4	5	6	7	8
Լարի յերկարությունը	1,732 R	1,414 R	1,176 R	1,0 R	0,868 R	0,765 R
Շրջանագծի բաժանումների թիվը	9	10	11	12	13	14
Լարի յերկարությունը	0,684 R	0,618 R	0,563 R	0,518 R	0,479 R	0,445 R
Շրջանագծի բաժանումների թիվը	15	16	17	18	19	20
Լարի յերկարությունը	0,416 R	0,390 R	0,368 R	0,347 R	0,329 R	0,313 R
Շրջանագծի բաժանումների թիվը	21	22	23	24	25	26
Լարի յերկարությունը	0,298 R	0,285 R	0,272 R	0,261 R	0,251 R	0,241 R

Որինակ, յեթե պահանջվում է շրջանագիծը, վորի շառավիղը՝  $R = 40$  մմ, բաժանել 18 հավասար մասի, ապա պետք է աղյուսակից գտնել պահանջված բաժանման թիվը (18) և վերցնել լարի համապատասխան յերկարությունը (0,347 R):

Փանի վոր մեր որինակում շառավիղը հավասար է 40 մմ, ապա լարը հավասար կլինի  $0,347 \times 40 \approx 13,88$  մմ-ի: Պետք է գծել 40 մմ շառավիղով շրջանագիծ և չափակարկինի միջոցով նրանից հաջորդաբար մտտավորապես 14 մմ-ի հավասար լարեր անջատել: Յեթե շրջանագծի բաժանումը միանգամից ճիշտ չի ստացվում, ապա պետք է բաժանումը կրկնել վորոշ ուղղումով:



Գծ. 103

Հաջորդաբար միացնելով իրար հետ շրջանագծի բաժանման կետերը՝ կարելի յի ստանալ կանոնավոր ներգծած բազմանկյուն (մեր որինակում — տասնութանկյուն):

Շրջանագծի մտավոր բաժանումը կամավոր հավասար մասերի կարելի յիվ քանոնի ոգնությամբ.

Յենթադրենք, վոր տված շրջանագիծը պետք է բաժանել 7 հավասար մասի, բաժանումը պետք է սկսել A կետից (գծ. 103): Տանում են AB տրամագիծը և բաժանում այն այնքան հավասար մասի, ինչքան մասի պետք է բաժանեն շրջանագիծը (տվյալ դեպքում 7 մասի): A և B կետերից տված շրջանագծի տրամագծին հավասար շառավիղով ոժանգակ աղեղներ են ստանում: Այդ աղեղները հատվում են K և M կետերում: K և M կետերը մեկընդմեջ միացնում են AB տրամագծի բաժանման կետերի հետ (գծ. 103) և ուղիղները շարունակում են մինչև շրջանագծի հետ հատվելը:

Յեթե շրջանագծի վրա նշված բաժանման կետերը հաջոր-


գարար միացնենք իրար հետ, ապա կտանանք ներգծած բաղմանկյունն (մեր որինակում—յոթանկյունն) համարյա հավասար կողմերով:

§ 15. ԿԱՆՈՆԱՎՈՐ ԲԱԶՄԱՆԿՑՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ  
ՏՎԱԾ ԿՈՂՄՈՎ


Ոգտվելով ստորև տրված աղյուսակից՝ կարելի յե բավականին ճշտությամբ վորոշել վորոնիկ բաղմանկյան արտադրած շրջանագծի շառավիղը՝ տված  $a$  կողմով:

Աղյուսակ 3					
Կանոնավոր բաղմանկյան կողմերի թիվը	3	4	5	6	7
Արտադրած շրջանի $R$ շառավիղը	0,577 $a$	0,707 $a$	0,851 $a$	1,0 $a$	1,152 $a$
Կանոնավոր բաղմանկյան կողմերի թիվը	8	9	10	11	12
Արտադրած շրջանի $R$ շառավիղը	1,307 $a$	1,462 $a$	1,618 $a$	1,776 $a$	1,932 $a$

Որինակ, յեթե տրված ե կանոնավոր հնգանկյան կողմը, հավասար 50 մմ-ի, ապա արտադրած շրջանի շառավիղը՝  $R \approx$



ՁՁ. 104



ՁԳ. 105

$\approx 0,851 \times 50 \approx 42,55$  մմ-ի Պետք ե դժել 42,55 մմ շառավիղով շրջանագիծ ե նրա վրա նշել ներգծած հնգանկյան գագաթները, հատումների համար ոգտվելով տված 50 մմ կողմին հավասար շառավիղով:

Կառուցել կանոնավոր յեռանկյուն սված  $a_3$  կողմի ոգնուրյամբ.

Տանում են մի ուղիղ ե նրա վրա անջատում տված  $a_3$  կողմին հավասար հատված (գծ. 104). A ե C կետերից տանում են  $a_3$ -ին հավասար շառավիղով աղեղներ, Աղեղների հատման B կետը միացնում են A ե C կետերի հետ:

Կառուցել քառակուսի սված  $a_4$  կողմի ոգնուրյամբ.

Տանում են մի ուղիղ ե նրա վրա անջատում տված  $a_4$  կողմին հավասար հատված (գծ. 105), AB հատվածի միջնակետից կանգնեցնում են ուղղահայաց ե վերջինիս վրա վերցնում են  $OK = \frac{a_4}{2}$  հատվածը. այս կարելի յե կատարել ուղղահայացն O կետում հատող KA շառավիղով տարած աղեղի միջոցով (գծ. 105): O կետից տանում են շրջանագիծ ե նրան ներգծում տված կողմն ունեցող քառակուսի:


Կառուցել կանոնավոր վեցանկյուն սված  $a_6$  կողմով.

Քանի վոր կանոնավոր վեցանկյան կողմը հավասար ե արտադրած շրջանագծի շառավիղին, ապա ընդունելով տված  $a_6$  հատվածը վորպես շառավիղ (գծ. 106), տանում են շրջանագիծ ե նրան ներգծում մի վեցանկյունն: Յեթե բացի  $AB = a_6$  հատվածի մեծություներից տրված ե նաև նրա դիրքը, ապա ոժանդակ շրջանագծի կենտրոնի, O կետի, դիրքը վորոշում են A ե B կետերից  $a_6$  կողմին հավասար շառավիղով տարված աղեղների հատման կետում:


Կառուցել կանոնավոր ութանկյուն, սված  $a_8$  կողմով.

Տանում են ուղիղ ե նրա վրա անջատում տված  $a_8$  կողմին հավասար հատված, (գծ. 108): AB հատվածի միջնակետից կանգնեցնում են ուղղահայաց. K կետից տանում են  $KA = \frac{AB}{2}$

շառավիղով աղեղ՝ մինչև ուղղահայացի հետ հատվելը M կետում, իսկ M կետից տանում են աղեղ MA շառավիղով՝ նույնպես մինչև ուղղահայացի հետ հատվելը: Յեթե O կետից գծենք շրջանագիծ OA = OB շառավիղով, ապա նրան կարելի է ներգծել  $a_8$  կողմով ութանկյուն (զծ. 107):



Գծ. 106



Գծ. 107

Իրոք՝

$$OA^2 = R^2 = OK^2 + KA^2 \text{ (Պյութագորի թեորեմ):}$$

$$OK = OM + MK = MA + KA,$$

$MA = KA \sqrt{2}$  (ինչպես  $KA = MK$  հավասար եջերով ուղղանկյուն շեռանկյան ներքնածիգ):

$$OK = KA \sqrt{2} + KA = KA (\sqrt{2} + 1),$$

$$OK^2 = KA^2 (\sqrt{2} + 1)^2,$$

$$R^2 = KA^2 (\sqrt{2} + 1)^2 + KA^2 = KA^2 (4 + 2\sqrt{2}),$$

$$KA = \frac{a_8}{2},$$

$$R^2 = \frac{a_8^2}{4} (4 + 2\sqrt{2}),$$


$$a_8^2 = \frac{4R^2}{4 + 2\sqrt{2}} = \frac{4R^2(4 - 2\sqrt{2})}{8} = \frac{R^2(4 - 2\sqrt{2})}{2} = R^2(2 - \sqrt{2})$$

$$a_8 = R\sqrt{2 - \sqrt{2}}.$$

Ստանում են կանոնավոր ներգծած ութանկյան կողմի յերկրաչափությունից հայտնի արտահայտությունը:

§ 16. ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՐՏԱԳԾԱԾ ԲԱԶՄԱՆԿՅՈՒՆԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Յեթե տված է շրջանագիծը, վորին պետք է արտագծել վորևե կանոնավոր բազմանկյուն, ապա ուղղվելով 2 աղյուսակից կարելի է ներգծել տված շրջանագիծին բազմանկյուն, իսկ հետո շրջանագիծին տանել ներգծած բազմանկյան կողմերին զուգահեռ շոշափողներ:




Գծ. 108

Կառուցել արագձամ քառակուսի.


Տրված շրջանագծի  $a$  և  $b$ ,  $c$  և  $d$  կետերից (զծ. 108) պետք է տանել կենտրոնական գծերից զուգահեռ ուղիղներ. այդ ուղիղների հատման կետերը ներկայացնում են արտագրծած քառակուսու գագաթները (A, B, C և D կետերը):

Կառուցել կանոնավոր ներգծած վեցանկյուն.

1-ին լեղանակ. Տված շրջանագծի A և B կետերում տանում են շոշափողներ, AB ուղիղը շարունակում են և նրա վրա



Գծ. 109




Գծ. 110

վերջնում  $OK = AB$  և  $OM = AB$  հատվածները: K և M կետից տանում են տված շրջանագծին շոշափողներ: Շոշափողների հատման կետերում ստանում են վորոշների վեցանկյան գագաթները:

2-րդ լեղանակ. AB հատվածի միջնակետից, վորը հավասար է

այն շրջանագծի տրամագծին, վորին պետք է արտագծել կանոնաձև վեցանկյուն (գծ. 110), տանում են ուղղահայաց: A կետից ուղղահայացը տանում են մի աղեղով, վորի շառավիղը հավասար է AB-ի: AC ուղիղի միջնակետից տանում են ուղղահայաց և շարունակում մինչև առաջին ուղղահայացի հետ հատվելը O կետում: OC հատվածը հավասար կլինի վորոնելի վեցանկյան կողմին:




Գծ. 111

Վեցանկյունը կարելի է կառուցել կամ ներգծելով այն OC-ին հավասար շառավիղով տարված ոժանդակ շրջանագծին, կամ գտնելով նրա գագաթները A, B և C կետերից OC-ին հավասար շառավիղով տարված ուղիղների հատման կետերում:

Կառուցել կանոնավոր ութանկյուն.

Նախ կառուցում են արտագծած քառակուսի և նրա գագաթներից տանում են



Գծ. 112


O կենտրոնից անցնող աղեղներ, մինչև քառակուսու կողմերի հետ հատվելը (գծ. 111), կառուցման շարունակութունը պարզ չերևում է գծագրից:

112-րդ գծագրում տրված են սեյսլինի և անկյունարդի կիրառության որինակներ՝ մի քանի ներգծած և արտագծած կանոնավոր բազմանկյունների համար:

§ 17. ՇՐՋԱՆԱԳԾԻ ԿԱՍ ՆՐԱ ԱՂԵՂԻ ԿԵՆՏՐՈՆԸ ԳՏՆԵԼԸ

1. Կառուցում կառկինի յեվ ֆանոնի միջոցով.


Տված շրջանագծի և կամ աղեղի վրա նշում են յերեք կետ՝ A, B և C (գծ. 113) և տանում նրանց միացնող ուղիղները՝ լարերը: Լարերի միջնակետերից կանգնեցնում են այդ լարին ուղղահայացներ, վորոնց հատման կետում (O) գտնվում է շրջանագծի կամ աղեղի վորոնելի կենտրոնը:



Գծ. 113


2. Կառուցում անկյունարդի միջոցով.

Տված աղեղի վրա (գծ. 114) դնում են անկյունարդն այնպե՛ս



Գծ. 114

պես, վոր ուղիղ անկյան գագաթն ընկնի աղեղի վրա, Հետևաբար անկյունարդի ուղիղ անկյունը կդառնա ներգծած անկյուն, իսկ այդ պատճառով աղեղի վրա եջերով նշած A և B



Գծ. 115

կետերը միացնող ուղիղը պետք է լինի տրամագիծ:

Կարելի չե այս յեղանակը մի անգամ ել կրկնել և նշել յերկրորդ տրամագիծը՝ CD: Այս յերկու տրամագծերի հատման կետում գտնվում է աղեղի (չբջանագծի) վորոնելի կենտրոնը<sup>1)</sup>:

Տվյալ յերեք կետերով Երջանագծի աղեղ Կանել:

Կառուցումը հնարավոր է միայն այն դեպքում, յերբ տված կետերը չեն գտնվում մի ուղիղի վրա: Տանում են տված կետերը միացնող յերկու ուղիղ (գծ. 115): AB և BC հատվածների միջնուղղահայացների հատման կետը կլինի շրջանագծի վորոնելի աղեղի կենտրոնը: Աղեղը տանում են  $OB = OA = OC$  շառավիղով:

### § 18. ԿՅՈՐԴՈՒՄՆԵՐ


Կցորդումը կամ, այլ կերպ ասած, սահուն անցումն ուղիղից շրջանագծի աղեղին կամ մի աղեղից ուրիշ մեծության շառավիղ ունեցող աղեղին, ստացվում է յերկրաչափության—չբջանագծի շոշափողի, շոշափող շրջանագծերի և յերկրաչափական տեղերի վերաբերյալ յեղրակացությունների հիման վրա:

1-ին ճիւմնական դեպք—ուղիղ գծի կցորդումը Երջանագծի աղեղի հետ:

Սահուն անցման համար՝ ուղիղից դեպի աղեղը կամ հակառակը—աղեղից դեպի ուղիղը, անհրաժեշտ է, վոր դեպի կցորդման


<sup>1)</sup> Յույց տված յեղանակով կառուցելու ճշտությունը մեծ չափով կախված է անկյունարդի վորակից, հատկապես նրա ուղիղ անկյան ճշտությունից: Յեթե այդ անկյան գագաթը մի քիչ բթացած լինի, ապա կառուցումն անբավարար կլինի:

կետը տարած աղեղի շառավիղը ուղղահայաց լինի ուղիղին: 116-րդ գծադրում կցորդման կետ՝ անցման կետը AB ուղիղից դեպի AC աղեղը, հանդիսանում է A կետը: Յեթե տված է AC աղեղը և պահանջվում է այդ աղեղի A կետում տանել ուղիղ՝ սահուն անցումով աղեղից դեպի ուղիղը, ապա նախ պետք է աղեղի կենտրոնը—O-ն—



Գծ. 116

միացնել անցման A կետի հետ, իսկ հետո կառուցել OA շառավիղի AB ուղղահայացը: Իսկ յեթե տված է AB ուղիղը և այդ ուղիղի A կետում պետք է սկսվի ի շառավիղով աղեղը՝ սահուն անցումով ուղիղից դեպի աղեղը, ապա նախ պետք է A կետում կառուցել ուղղահայաց ուղիղին և այդ ուղղահայացի վրա անցման A կետից անջատել աղեղի ի շառավիղին հավասար հատված. ստացվում է O կենտրոնը, վորից և  $OA = r$  շառավիղով տանում են աղեղը:




Գծ. 117

119-րդ գծադրում ցույց է տրված, թե ինչպես պետք է ուղղվել անկյունարդով և քանոնով՝ ուղիղ գիծը և աղեղը կցորդելու, յերբ A կետը տրված է աղեղի վրա:


Անկյունարդի տառչին դիրքում նրա ներքնաձիգով տա նում են  $OA$  շառավիղը, անկյունարդի տակ քանոն են դնում և այնուհետև անցնելով յերկրորդ դիրքին (թողնելով քանոնն անշարժ) նրա վրա գտնվող  $A$  կետից ներքնաձիգով տանում են ուղիղ, վորը ուղղահայաց կլինի  $OA$  շառավիղին, այսինքն շոշափող կլինի աղեղին:

2-րդ երկմական դեպք— քրջանագծերի աղեղների կցորդումը.

Սահուն անցում մի աղեղից մյուսն՝ ստացվում է այն դեպքում, յերբ անցման կետը գտնվում է կցորդվող աղեղների կենտրոնները միացնող ուղիղի վրա: 118-րդ և 119-րդ գծագրերում տրված են շրջանագծերի աղեղների արտաքին (գծ. 118) և ներքին (գծ. 119) շոշափման որինակներ: Յերկու դեպքում էլ անց-



Գծ. 118



Գծ. 119

ման  $A$  կետը գտնվում է  $O_1O_2$  կենտրոնական գծի վրա: Արտաքին շոշափման դեպքում (գծ. 118)  $O_1O_2 = R + r$ , ներքին շոշափման դեպքում (գծ. 119)  $O_1O_2 = R - r$ :


### § 19. ԿՑՈՐԴՄԱՆ ՁԵՎԵՐ ՅԵՎ ՈՐԻՆԱԿՆԵՐ

Կառուցել սահուն անցում սլած յերկու իրար հասող ուղիղներից մեկից մյուսը՝ սլած շառավիղն ունեցող աղեղի միջոցով:


ա) 120-րդ գծագրում կառուցումը կատարված է այն դեպքի համար, յերբ  $AB$  և  $CD$  ուղիղներն ուղիղ անկյուն չեն կազմում:

Կցորդող աղեղի կենտրոնը պետք է հավասարապես հեռա-

ցած լինի յերկու ուղիղներից: Հետևապես կարելի յե կիրառել անկյան կիսորդի հատկութունները՝ վորպես անկյան կողմերից հավասարաչափ հեռացած կետերի յերկրաչափական տեղի: Այդպիսի-



Գծ. 120



Գծ. 121

սի կետերից մեկը կլինի կցորդ աղեղի վորոնելի կենտրոնը. նա պետք է գտնվի  $BOD$  անկյան կիսորդի վրա:

Վորպեսզի ճիշտ նշենք  $O_1$  կենտրոնը տված  $r$  շառավիղով, դարձյալ պետք է կիրառենք յերկրաչափական տեղի հատկութունը, այս անգամ ուղիղ գծից հավասարապես հեռացած կետերի յերկրաչափական տեղը: Այդպիսի յերկրաչափական տեղ հանդիսանում է զուգահեռ ուղիղը: 120-րդ գծագրում տարված է  $AB$  ուղիղին  $bO_1$  զուգահեռը՝ կցորդման աղեղի  $r$  շառավիղին հավասար հեռավորության վրա: Իրա համար  $AB$  ուղիղի կամայորեն վերցրած  $a$  կետում տարված է ուղղահայաց և նրա վրա անջատված է  $r$  շառավիղին հավասար  $ab$  հատվածը, իսկ հետո  $b$  կետից տարված է  $AB$  ուղիղին զուգահեռ ուղիղ: Վորոնելի  $O_1$  կետը գտնվում է յերկու յերկրաչափական տեղերի—  $bO_1$  ուղիղի և անկյան կիսորդի— հատման կետում:


Այժմ մնում է նշել կցորդման կետերը՝ այն կետերը, վորտեղ  $AB$  և  $CD$  ուղիղները միանում են աղեղի հետ: Իրա համար  $O_1$  կենտրոնից իջեցնում են ուղղահայացներ  $AB$  և  $CD$  ուղիղներին,  $c$  և  $d$  կետերը կլինեն կցորդման վորոնելի կետերը: Կցորդ աղեղը պետք է տարվի  $c$  կետից մինչև  $d$  կետը:

Գծագրերը կատարելիս նախ պետք է տանել աղեղը և ապա ուղիղները:

$O_1$  կետը կարելի յե գտնել և առանց կիսորդների (գծ. 121), դրա համար պետք է կառուցել  $AB$  և  $CD$  ուղիղներից հավասա-

բաշարի հեռացած կետերի յերկրաչափական աղբյւր, այսինքն տանել մի ուղիղ զուգահեռ  $AB$ -ին և մի ուրիշ ուղիղ զուգահեռ  $CD$ -ին, ընդլորում  $ab$  և  $ef$  հատվածները պետք է հավասար լինեն աված  $r$  շառավիղին:

բ) 122, 123 և 124-րդ գծագրերում կառուցումները կատարված են այն դեպքի համար, յերբ  $AO$  և  $OB$  ուղիղները փոխ-



Գծ. 122

Գծ. 123

Գծ. 124

ուղղահայաց են կլորացումը պետք է կատարել  $R$  շառավիղ ունեցող աղբյւրով:


122-րդ գծագրում կցորդման աղբյւր  $O_1$  կենտրոնը գտնված է 120-րդ գծագրի նման՝ կիսորդի և  $b$  կետից այդ անկյան  $AO$  կողմին տարած զուգահեռ ուղիղի հատումով:  $b$  կետը նշված է  $OB$  կողմի վրա՝ անկյան գագաթից  $R$  հեռավորութեամբ:

123-րդ գծագրում  $O_1$  կետն ստացված է անկյան գագաթից  $R$  հեռավորութեան վրա գտնվող  $a$  և  $b$  կետերից անկյան կողմերին տարված զուգահեռ ուղիղների հատումով:

124-րդ գծագրում  $O_1$  կետն ստացված է  $a$  և  $b$  կետերից տարված  $R$  շառավիղ ունեցող աղբյւրների հատումով:

124-րդ գծագրում  $O_1$  կետն ստացված է  $a$  և  $b$  կետերից տարված  $R$  շառավիղ ունեցող աղբյւրների հատումով:

Այդ կետերն իրենց կերթին ստացված են  $AOB$  անկյան կողմերը  $O$  գագաթից  $R$  շառավիղ ունեցող աղբյւրով հատելով:




Գծ. 125

2. Կառուցել յերկու զուգահեռ ուղիղների միջև սահուն անցում Երջանագծի աղբյւրով:

125-րդ գծագրում կառուցումը կատարված է այն դեպքի համար, յերբ  $AB$  և  $CD$  ուղիղների միջև հեռավորութեանը 30 մմ է, իսկ կցորդման աղբյւրների կենտրոնները պետք է գտնվեն իրարից 50 մմ հեռավորութեան վրա: Կցորդման աղբյւրի շառավիղը հավասար է  $AB$  և  $CD$  ուղիղների հեռավորութեան կեսին, ավյալ դեպքում հավասար է 15 մմ-ի:


Յեթե պահանջվում է կառուցել սահուն անցում  $AB$  ուղիղից  $CD$  ուղիղը (գծ. 126), ապա պետք է յերկարացնել յերկու



Գծ. 126


ուղիղներն այնպես, վոր  $AB$  ուղիղն հասնի մինչև  $CD$  ուղիղի  $C$  կետից տարած ուղղահայացի  $a$  կետը.  $CD$  ուղիղը պետք է շարունակվի մինչև  $d$  կետը, այսինքն մինչև  $AB$  ուղիղի  $B$  կետից տարված ուղղահայացը: Իրանից հետո կարելի չէ տանել կցորդման աղբյւրները: Գծագրերը կատարելիս նախ պետք է տանել աղբյւրը և ապա նրանց միացնող ուղիղները:

Յեթե  $AB$  և  $CD$  ուղիղները դասավորված լինեն այնպես, ինչպես ցույց է տրված 127-րդ գծագրում, ապա սահուն անցում  $B$  կետից  $C$  կետը կարելի չէ ստանալ յերկու աղբյւրների և  $KM$  ուղիղի միջանկյալ հատվածով: Կցորդման աղբյւրի շառավիղը հավասար է աված զուգահեռ ուղիղների հեռավորութեան մեկ քառորդին:




Գծ. 127

Այն դեպքում, յերբ զուգահեռ ուղիղների հատվածները դասավորված են այնպես, ինչպես այդ ցույց է տրված 128-րդ գծագրում, պետք է միացնել B և C ծայրահետերը և BC հատվածը կիսել (K կետում): Քանի վոր կցորդման աղեղների կենտրոնները պետք է գտնվեն B և C կետերից տրված ուղիղներին տարված ուղղահայացների վրա, ապա K կետից զուգահեռ տանելով AB և CD ուղիղներին՝ ստանում են  $O_1$  և  $O_2$  կետերը ( $O_1, O_2$  ուղիղը ներկայացնում է AB և CD ուղիղներից հավասարաչափ հեռացած կետերի յերկրաչափական տեղը):



Գծ. 128

ձեթե AB ուղիղից CD ուղիղն անցնելու ժամանակ (գծ. 129) անհրաժեշտ է կցորդման աղեղը տանել տված K կետով,




Գծ. 129

ապա այդ կետը միացնում են ուղիղներից մեկի ծայրի հետ (129-րդ գծագրում K կետը միացված է B կետի հետ): BK ուղիղը շարունակված է մինչև CD ուղիղի հետ հատվելը (M կետում):  $O_1$  և  $O_2$  կետերն ստացվում են B և M կետերից տարված ուղղահայացների և BK ու KM հատվածները կիսող ուղիղների հատումից:

3. Տվյալ կետից շոգափող ամենի սվյալ Երջանագծին.

ա) Պարզ, սովորաբար կիրառվող յեղանակը ցույց է տրված 130-րդ գծագրում: Անկյունարդը (կամ քանոնը) դնում են այնպես,



Գծ. 130


Գծ. 131

Գծ. 132

պես, վոր A կետից տարած ուղիղը շոջափի շրջանագիծը: Շոջափման կետերը ( a և b) պետք է գտնվեն շոջափողի և նրան ուղղահայաց շոռավիղի վրա:

Բավականաչափ խնամքով կատարելու դեպքում հեշտությամբ կարելի կլինի խուսափել այն սխալներից, վորոնք պատկերված են 131-րդ գծագրում, աչսինքն շոջափողի փոխարեն հատող կամ թե շրջանագծի հետ վոշ մի ընդհանուր կետ չունեցող ուղիղ տանելուց:

բ) Կառուցումը կարելինի և քանոնի միջոցով ցույց է տրված 132-րդ գծագրում. միացնում են A կետը և շրջանագծի




Գծ. 133

O կենտրոնը և AO հատվածի միջնակետից  $\frac{AO}{2}$  շոռավիղով տանում են ոժանդակ աղեղ: Ոժանդակ աղեղի և շրջանագծի հատումից ստացված a և b կետերը միացնում են A կետի հետ

քանոնով (կամ անկյունարդով): Aa և Ab ուղիղները ներկայացնում են վորոնելի շոշափողները, քանի վոր նրանք համապատասխանաբար ուղղահայաց են Oa և Ob շառավիղներին: AaO և AbO անկյուններն ուղիղ են, վորպես AO տրամագծի վրա հենվող ներգծած անկյուններ:


4. Տված յերկու Երջանագծերին օգնելու Եոճափող:

ա) Պարզ, սովորաբար կիրառվող յեղանակը ցույց և տրված 133-րդ դժագրում. քանոնը (կամ անկյունարդը) դնում ևն



Պժ, 134

աջնպես, վոր տարած ուղիղը շոշափի յերկու շրջանագծերը: Շրջանագծերի կենտրոններից ստացված ուղիղին ուղղահայացներ տանելով ստուգում ևն կառուցման ճշտութունը. ուղղահայացի ծայրը պետք և ընկնի շոշափման կետի վրա:




Պժ. 135

բ) Կարկինի և քանոնի միջոցով կառուցելը ցույց և տրված 134-րդ (արտաքին շոշափում) և 135-րդ (ներքին շոշափում) դժագրերում:

134-րդ դժագրում տարված և ոժանդակ շրջանագիծ O<sub>2</sub> կենտրոնից՝ R և r շառավիղների տարբերության հավասար շառավիղով՝ Հետո O<sub>1</sub> կենտրոնից տարված և շոշափող ոժանդակ շրջանագծին՝ 132-րդ դժագրում ցույց տրված յեղանակով՝ a կետից տարված և շառավիղ և c կետից aO<sub>1</sub>-ին զուգահեռ ուղիղը ce ուղիղը ներկայացնում և վորոնելի շոշափողը: O<sub>1</sub>e շառավիղը հավասար և զուգահեռ և ac հատվածին:

Ներքին շոշափման դեպքում (գժ. 135) տանում ևն ոժանդակ շրջանագիծ O<sub>2</sub> կենտրոնից R+r շառավիղով և O<sub>1</sub> կետից այդ շրջանագծին տանում ևն շոշափող այնպես, ինչպես այդ ցույց և տրված 1 2-րդ դժագրում: Շոշափողի ce հատվածը զուգահեռ և հավասար և aO<sub>1</sub>-ին:




Պժ. 136

136-րդ դժագրում տրված և շրջանագծերի յերկու աղեղների կցորդման որինակ՝ յերկու հատվող ուղիղներով. կառուցումը կարելի յե կատարել 135-րդ դժագրում ցույց տրված յեղանակով:


5. Տված անկյանը ներգծել մի Բանի Երջանագծեր, վորոնի Եոճափեն իրար յեվ անկյան կողմերը:

Բոլոր վորոնելի շրջանագծերի կենտրոնները պետք և դանդվեն աված անկյան կիսորդի վրա (գժ. 137): Իրա համար ևլ կառուցումն սկսում ևն կիսորդ տանելով: Կիսորդի վորես կետը կարող ևն ընդունել անկյան ներգծած շրջանագծերից մեկի կենտրոն: 137-րդ դժագրում կիսորդի վրա վերցված և O<sub>1</sub> կետը, նրանից անկյան կողմին տարված և O<sub>1</sub>a ուղղահայացը, և նրանով, վորպես շառավիղով, տարված և առաջին շրջանագիծը: Հետո կիսորդի վրա գտնվող b կետից տարված և ուղղահայաց անկյան կողմին՝ մինչև նրա հեռ հատվելը (c կետ): Կաղմված Ocb անկյունը կիսում ևն և կիսորդի վրա ստանում O<sub>2</sub> կետը: Այս կետից, վոր-

այն կենտրոնից, տանում են շրջանագծի՝  $O_2b = O_2d$  շառավիղով:  $O_3$  կետը գտնելու համար պետք է  $e$  կետից կիսորդին ուղղահայաց տանել և կազմված  $Afe$  անկյունը կիսել, շրջանագծի շառավիղը փորձվում է  $O_3e$  հատվածով:



Գծ. 137



Գծ. 138.


ստորի և  $AO$  կողմին զուգահեռ  $mk$  ուղիղի հատումից), իսկ հետո շարունակված է 137-րդ գծագրում ցույց տրված յեղանակով:

6. Կառուցել սահուն անցում ուղիղից դեպի օրջանագիծը՝ սվյալ օտաավիղն ունեցող աղեղի միջոցով:

ա) 139-րդ գծագրում  $AB$  ուղիղը շրջանագծին կցորդված է  $r_1$  շառավիղն ունեցող աղեղով, իսկ  $CD$  ուղիղը նույն շրջանագծին կցորդված է  $r_2$  շառավիղն ունեցող աղեղով: Կցորդող աղեղի կենտրոնը գտնելու համար յերկու զեղքում էլ կիրառված

է նույն յեղանակը, այն է՝ կառուցված են շրջանագծից և ուղիղից կցորդման աղեղի շառավիղին հավասար միենույն հեռավորությունն ունեցող կետերի յերկրաչափական տեղերը, յերկրաչափական տեղերի հատումից ստացվում է կցորդման աղեղի կենտրոնը:


Այսպես,  $O_1$  կետը գտնելու համար  $O$  կենտրոնից տարված է շրջանագծին համակենտրոն աղեղ  $R+r$  շառավիղով, և  $AB$ -ին



Գծ. 139

զուգահեռ ու նրանից  $r_1$ -ին հավասար հեռավորությունն ունեցող ուղիղի  $O_1$  կետը գտնվում է աղեղի և ուղիղի հատման կետում: Միացնելով  $O$  և  $O_1$  կետերը՝ գտնում են կցորդման  $a$  կետը: Կցորդման յերկրորդ կետը՝  $b$ -ն գտնում են  $O_1$  կետից  $AB$ -ին ուղղահայաց տանելով:

$O_2$  կետը գտնվում է  $O$  կենտրոնից  $R+r_2$  շառավիղով տարված աղեղի և  $CD$  ուղիղին զուգահեռ ու նրանից  $r_2$  հեռավորությունն ունեցող ուղիղի հատման կետում: Կցորդման  $c$  կետը գտնում են՝ միացնելով  $O$  և  $O_2$  կենտրոնները, իսկ  $d$  կետը՝  $O_2$  կետից  $CD$  ուղիղին ուղղահայաց տանելով:




Գծ. 140

բ) 140-րդ գծագրում կատարված կառուցումը տարբերվում է 139-րդ գծագրում կատարված կառուցումից միայն նրանով, վոր ոժանդակ աղեղը տանում են  $R-r$  շառավիղով: Կցորդման աղեղի կենտրոնը  $O_1$  կետը, ստացվում է տված շրջանագծից և  $AB$  ուղիղից միևնույն  $r$  հեռավորությունն ունեցող կետերի յերկրաչափական անդ ներկայացնող աղեղի և ուղիղի հատման կետում:


7. Կառուցել սահուն անցում ուղիղից դեպի օրջանագիծը՝ սվյալ ուղիղի վրա գտնվող վորոշ կետից սկսվող աղեղով:

Այս դեպքում կցորդման աղեղի շառավիղը պետք է գտնել:

ա) 141-րդ գծագրում կցորդման աղեղը պետք է սկսվի  $AB$  ուղիղի  $b$  կետից: Կցորդման աղեղի  $O_1$  կենտրոնը գտնելու համար պետք է  $b$  կետից ուղղահայաց տանել  $AB$  ուղիղին (այդ ուղղահայացի վրա պետք է գտնվի կցորդման աղեղի կենտրոնը) և նրա վրա վերցնել շրջանագծի  $R$  շառավիղին հավասար հատված:  $K$  կետը պետք է միացնել  $O$  կենտրոնին և  $OK$  հատվածին միջ-



Գծ. 141




Գծ. 142

նուղղահայաց կանգնեցնել: Կցորդման աղեղի կենտրոնը,  $O$  կետը, գտնվում է այդ ուղղահայացի և  $b$  կետից շարունակված  $Kb$  ուղղահայացի հատման կետում: Կցորդման  $a$  կետը գտնվում է  $O$  և  $O_1$  կենտրոնները միացնող ուղիղի վրա: Այսպիսով կցորդման աղեղի շառավիղն ստացվում է  $O_1a = O_1b$  կառուցելու ժամանակ: Իրոք  $O_1O$  և  $O_1K$  ուղիղները, վորպես միևնույն կետից տարված և  $OK$  ուղիղի վրա հավասար պրոեկցիաներ ունեցող թեքեր,


իրար հավասար են: Քանի վոր  $O_1O = O_1a + R$  և  $O_1K = O_1b + R$ , ապա  $O_1a + R = O_1b + R$ , այսինքն  $O_1a = O_1b$ :

բ) 142-րդ գծագրի վրա կատարված կառուցումը նման է 141-րդ գծագրում ցույց տրված կառուցմանը: Կցորդող աղեղը պետք է սկսվի  $AB$  ուղիղի  $b$  կետից: Այդ կետից ուղիղին ուղղահայաց պետք է տանել: Այդ ուղղահայացի վրա կգտնվի կցորդման աղեղի կենտրոնը:

Այդ կենտրոնը գտնելու համար պետք է  $b$  կետից տարած ուղղահայացի վրա անջատել  $R$  շառավիղին հավասար  $bK$  հատվածը: Այժմ յեթե  $K$  կետը միացնենք  $O$  կենտրոնին հետ և ասենք  $KO$  հատվածի միջնուղղահայացը, ապա այդ ուղղահայացը կհատվի  $bK$  ուղղահայացի հետ  $O_1$  կետում, վորը ծառայում է վորպես կցորդման աղեղի կենտրոն: Այս դեպքում կցորդման աղեղի շա-



Գծ. 143



Գծ. 144

ռավիղն ստացվում է հավասար  $O_1b$ -ին կամ  $O_1a$ -ին,  $a$  կետն ստացվում է  $OO_1$  ուղիղի վրա, վորը շարունակված է մինչև  $R$  շառավիղն ունեցող աղեղի հետ հատվելը:


8. Կառուցել սահուն անցում ուղիղից դեպի օրջանագիծը, մի աղեղի միջոցով. վորն սկսվում է սվյալ օրջանագծի վրա գտնվող վորոշ կետից:

Այս դեպքում կցորդման աղեղի շառավիղը պետք է գտնել:

ա) 143-րդ գծագրում կցորդման աղեղը պետք է սկսել շրջանագծի  $a$  կետից: Կցորդման աղեղի կենտրոնը պետք է գտնվի  $Oa$  շառավիղի շարունակություն վրա: Կցորդման աղեղի  $O_1$  կենտրոնը

գտնելու համար պետք է տանել շոշափող՝ շրջանագծի տվյալ  $a$  կետում: Շոշափողի և տվյալ  $AB$  ուղիղի հատվելուց առաջացած անկյունը կհստում են: կցորդող աղեղի կենտրոնն ստացվում է  $aKA$  անկյան կիսորդի և  $Oa$  ուղիղի շարունակության հատումիջ:  $O_1$  կետից ուղղահայաց տանելով  $AB$  ուղիղին՝ կգտնեն  $b$  կետը —  $AB$  ուղիղի և կցորդման աղեղի շոշափման կետը, վորի շառավիղն ստացվում է ռավասար  $O_1a = C_1b$ :

բ) 144-րդ գծագրում կցորդման աղեղի  $O_1$  կենտրոնը պետք է գտնվի  $Oa$  շառավիղի վրա՝ այդ շառավիղի և  $aKB$  անկյան կիսորդի հատման կետում: Այդ անկյունը, ինչպես և 143-րդ գծագրում, կազմված է  $AB$  ուղիղով և տվյալ  $a$  կետից տարված



Քժ. 145

շոշափողով: Ուղղահայաց տանելով  $O_1$  կետից  $AB$  ուղիղին՝ գտնում են կցորդման  $b$  կետը: կցորդման աղեղի շառավիղը հավասար կլինի  $O_1a = O_1b$ -ին:

9. Կառուցել սահուն անցում սված  $R$  օտաավիղով աղեղից դեպի սվայ  $AB$  ուղիղն այնպես, վոր կցորդման աղեղը շոշափի սված  $CD$  ուղիղը:

Տվյալ դեպքում պետք է գտնել կցորդման աղեղի կենտրոնի դիրքն ու նրա շառավիղը:


Քանի վոր կցորդման աղեղը պետք է շոշափի տված  $AB$  և  $CD$  ուղիղներով կազմված անկյան կողմերը, ապա վորոնելի աղեղի կենտրոնը պետք է գտնվի այդ անկյան կիսորդի վրա:

Այդ պատճառով կառուցումն սկսում են  $AKC$  անկյան կիսորդը տանելով (գծ. 145): Այնուհետև պետք է տանել  $AK$  ուղիղին զուգահեռ  $FN$  ուղիղը, տված աղեղի շառավիղին ( $EF = R$ ) հավասար հեռավորության վրա:  $N$  կետում  $FN$  ուղիղը հատում է անկյան կիսորդը:  $N$  կետը պետք է միացնել տված աղեղի կենտրոնին՝  $O$  կետի հետ:  $K$  կետից, վորպես կենտրոնից,  $KM = R$  շառավիղով տանում են աղեղ մինչև  $NO$  ուղիղի հետ հատվելը: Ստացած  $P$  կետը պետք է միացնել  $K$  կետի հետ, իսկ հետո  $O$  կենտրոնից զուգահեռ տանել  $PK$  ուղիղին մինչև կիսորդի հետ  $O_1$  կետում հատվելը:

Այս  $O_1$  կետը կլինի կցորդման աղեղի վորոնելի կենտրոնը, իսկ  $O_1a = O_1b$  հեռավորությունը կլինի նրա շառավիղը:

Կառուցումը հիմնված է նմանության մեթոդի վրա: Յեռանկյունների նմանությունից կարելի է գրել՝  $\frac{OO_1}{PK} = \frac{NO_1}{NK}$  և


$\frac{O_1L}{KM} = \frac{NO_1}{NK}$ : Հետևաբար  $\frac{OO_1}{PK} = \frac{O_1L}{KM}$ , և քանի վոր ըստ կառուցման  $PK = KM$ , ապա  $O_1O = O_1L$ :



Քժ. 146

Քայլ  $OO_1 = Oa + O_1a = R + O_1a$  և  $O_1L = O_1b + bL = O_1b + R$ , հետևաբար  $O_1a = O_1b$ , իսկ քանի վոր  $O_1$  կետը գտնվում է  $AKC$  անկյան կիսորդի վրա, ապա ուրեմն  $O_1c = O_1b = O_1a$ :

Յեթե S կետը միացնենք K կետի հետ և հետո O կետից տանենք SK-ին գուգահեռ ուղիղ, ապա կտասցվի խնդրի յերկրորդ լուծումը, վորը տվյալ գեպքի նկատմամբ չի կիրառվում:




Քժ. 147

Քժ. 148

10.  $R_1$  յեւ  $R_2$  շառավիղ ունեցող աղեղների կցորումք R շառավիղ ունեցող աղեղով (գժ. 146):

Կցորդման աղեղի O կենտրոնը գտնում են  $O_1$  և  $O_2$  կենտրոններով  $R_1 + R$  և  $R_2 + R$  շառավիղներով աքրած ոժանդակ



Քժ. 149

աղեղների հատումով: Կցորդման a և b կետերը գտնվում են  $OO_1$  և  $OO_2$  ուղիղների վրա:


Յեթե O կենտրոնից շրջանագիծ տանենք արված R շառավիղով, ապա 146-րդ գժագրում կատարված կառուցումը վերած-

վում է մի աչնայիսի շրջանագիծ անցկացնելուն, վորը շոշափում է տված յերկու շրջանագիծերը (գժ. 147):

148-րդ գժագրում պատկերված է սահմանային դիրքը. շոշափող շրջանագիծի O կենտրոնը գտնվում է  $O_1O_2$  կենտրոնական գծի վրա: Հետևաբար, յեթե պահանջվում է տանել արված յերկու շրջանագիծերին շոշափող շրջանագիծ այնպես, ինչպես ցույց է արված 148-րդ գժագրում, ապա պետք է միացնել  $O_1$  և  $O_2$  կենտրոնները և AB հատվածը կիսել. O կետը կլինի շոշափող շրջանագիծի կենտրոնը, վորի շառավիղը հավասար է  $Oa = Ob$ :

Յեթե տված R շառավիղը փոքր է հատվածի կեսից, ապա շոշափող շրջանագիծ տանել անհնարին է:

146, 147 և 148-րդ գժագրերում պատկերված գեպքերը տալիս են այսպես կոչված արտաքին շոշափում (գժ. 118): 149-րդ գժագրում կառուցումը կատարված է ներքին շոշափման դեպքի համար. շոշափման A և B կետերը շեն գտնվում O և  $O_1$ , O և  $O_2$  կենտրոնների միջև, կցորդող աղեղի կենտրոնը (O կետը) գտնելու համար տանում են ոժանդակ աղեղ՝  $R - R_1$  և  $R - R_2$  շառավիղով, վորտեղ R-ը կցորդող աղեղի շառավիղն է:




Քժ. 150

150-րդ գժագրում պատկերված է սահմանային դեպքը. շոշափող շրջանագիծի O կենտրոնը գտնվում է  $O_1O_2$  կենտրոնական գծի վրա: Հետևաբար, յեթե պահանջվում է տանել տվյալ յերկու շրջանագիծերին շոշափող շրջանագիծ այնպես, ինչպես ցույց է արված 150-րդ գժագրում, ապա պետք է միացնել  $O_1$  և  $O_2$  կենտրոնները, շարունակել  $O_1O_2$  ուղիղը մինչև a և b կետերը և ab հատվածը կիսել: O կետը կլինի շոշափող շրջանագիծի կենտրոնը, վորի շառավիղը հավասար է  $Oa = Ob$ :

Յեթե արված R շառավիղը փոքր է ba հատվածի կեսից, ապա ընդգրկող շոշափող շրջանագիծ տանել հնարավոր չէ:


11. Կառուցել միջկենտրոն շառավիղն ունեցող աղեղներից կազմված ալիքանակ գիծ:

ա) 151-րդ գծագրում կառուցումը կատարված է ալիքի տված յերկարությամբ ( $S$  չափի): Առանցքային գծի վրա անջատում են տվյալ  $S$  յերկարությանը հավասար հատվածներ: Բաժանելով



Գծ. 151

$O_1, O_3$  հատվածը 4 հավասար մասի, նշում են աղեղների կենտրոնների գիրքը, կցորդման կետերը, և ստանում աղեղի շառա-



Գծ. 152


վիղը՝ հավասար  $\frac{S}{4}$ -ին:

բ) Յեթե, բացի ալիքի յերկարությունից, տված է նաև նրա բարձրությունը (գծ. 152), ապա պետք է տանել յերկայնական առանցքային գիծը, նրա վրա անջատել  $S$  յերկարությունը և կառուցել  $A, B$  և  $C$  կետերը. այս կետերից յուրաքանչյուրն առանցքային գծից  $\frac{t}{2}$  հեռավորության վրա յե գտնվում: Հետո պետք


է միացնել  $A$  և  $B$  կետերը:  $AB$  ուղիղը հատում է առանցքային գիծը  $K$  կետում. այդ կետը կլինի կցորդման կետ: Աղեղի  $O_1$  կենտրոնն ստացվում է  $AK$  հատվածը կիսող ուղիղի և  $A$  կետից տարված լայնական առանցքային գծի հատումով:

$O_2$  կենտրոնը (ինչպես նաև մյուս բոլոր աղեղների կենտրոնները) կարելի յե գտնել՝ վերցնելով առանցքի վրա,  $B$  կետից  $O_1A$  շառավիղի մեծության չափ:

12. Տարեի 9 Երջանագիծ՝ 10 մմ շառավիղով, այնպես վար յուրաքանչյուրը շառավի յերկու կից Երջանագծեր:



Գծ. 153




Գծ. 154


Կառուցումը կատարված է 153-րդ գծագրում: Այդ հիմնված է այն բանի վրա, Վոր յերկու կից շրջանագծերի կենտրոնները միացնող ուղիղը ներկայացնում է այդ ինն շրջանագծերի կենտրոններից անցնող վորոնների շրջանագծին ներգծած կանոնավոր իննանկյան կողմը: Ըստ 58 եջում տրված աղյուսակի՝ կանոնավոր իննանկյան արտագծած շրջանագծի շառավիղը՝  $R \approx 1,462 a$ , վորտեղ  $a$ -ն այդ իննանկյան կողմն է: Մեր որինակում  $a = 2r = 20$  մմ, Հետևաբար  $R \approx 29,2$ : Տանելով շրջանագիծ 29,2 մմ շառավղով, նրա վրա անկավորում են իննը շրջանագիծ՝ տվյալ 10 մմ շառավղով:

13. Տված շառավիղն ունեցող երջանագծին ներգծել 7 երջանագիծ այնպես, փոք նրանք շառավիղն սվյալ երջանագիծը յեվ հաջորդաբար շառավիղն իրար:

Տվյալ շրջանագիծը բաժանում են այնքան հավասար մասերի, ինչքան շրջանագիծ են ներգծելու: 154-րդ գծագրում




Քժ. 155




Քժ. 156

շրջանագիծը բաժանված է 7 մասի: A կետից տարված է շոշափող. AB աղեղը կիսված է Սաացված AKO անկյունը նույնպես կիսված է: AKO անկյան կիսորդը հատում է AO շառավիղը  $O_1$  կետում: Այս կետը ներկայացնում է վորոնելի շրջ-

ջանագծերից մեկի կենտրոնը: Տանելով  $O_1$  կետից շրջանագիծ  $OO_1$  հատվածին հավասար շառավիղով՝ հեշտությամբ կարելի չեզանել մնացած շրջանագծերի կենտրոնները: զրա համար բազական է  $O$  կետը միացնել աված հիմնական շրջանագծի բաժանման կետերի հետ (155-րդ գծագրում ցույց է տրված  $O$  կենտրոնը B կետի հետ միացնող ուղիղի վրա գտնվող  $O_2$  կենտրոնը): Վորոնելի շրջանագծերի շառավիղը հավասար է  $O_1A$  հատվածին:




Քժ. 157




Քժ. 158

14. Կառուցել պատկեր՝ սված չափերով:

ա) Գծագիր 155: Այս գծագրում ունենք կցորդման այն դեպքերը, վորոնք ցույց են տրված 122—126 գծագրերում, ախինքն ուղիղ անկյան կողմերի է յերկու զուգահեռ ուղիղների



Քժ. 159




Քժ. 160

կցորդումը շրջանագծի աղեղի միջոցով: R5 նշանակումը (տես 155-րդ գծագիրը) պետք է հասկանալ այսպես՝ շառավիղը հավասար է 5 մմ-ի:

157-րդ գծագրում ցույց է տրված կառուցման սխեման. բացի զրանից, 156-րդ գծագիրը հիշեցնում է, վոր գծագիրը կատարելիս նախ պետք է տանել կցորդման աղեղները մինչև կցորդման նշված կետերի. իսկ հետո արդեն ուղիղ գծերը:

բ) Գծագիր 157: Կառուցումը կարելի չի կատարել 133-րդ գծագրում (կամ 134 գծագրում) արված ձևով, այսինքն տանելով շոշափող աված յերկու շրջանագծերին: Գծագիրը կատարելիս նախ պետք է տանել կցորդման աղեղները մինչև կցորդման կետերը, իսկ հետո արդեն ուղիղ գծերը:


գ) Գծագիր 158: Կցորդող աղեղների կենտրոնները պետք է վորոշել 139-րդ գծագրում ցույց արված կանոնով:



Գծ. 161

կանոնով: Կցորդման աղեղների սկիզբները արված են շրջանագծի վրա՝ նրա a և b կետերում:

դ) Գծագիր 161 և 162—բռնակ: O<sub>1</sub> կենտրոնի զիւրքը վո-



Գծ. 162

գ) Գծագիր 159: Կցորդող աղեղների կենտրոններն ու շառավիղները պետք է վորոշվեն 141-րդ գծագրում ցույց արված կանոնով: Կցորդման աղեղների սկիզբները արված են ուղիղի վրա a և b կետերում:

ե) Գծագիր 160: Կցորդող աղեղների կենտրոններն ու շառավիղը պետք է վորոշվեն 143-րդ գծագրում ցույց արված

բոլորում են՝ վերցնելով առանցքի վրա՝ a կետից 8 շառավիղի մեծությամբ (գծ. 161): O<sub>2</sub> կենտրոնը գտնված է 140-րդ գծագրում ցույց արված կանոնով (ներքին շոշափում): O<sub>3</sub> կենտրոնը գտնված է O<sub>2</sub> և c կետերից տարված աղեղների հատումով: Կցորդման կետերը նշված են կցորդման աղեղների կենտրոններից տարված ուղիղների վրա:

Հիշենք, վոր 10 և 16 չափսերի առջև դրված նշանները ծառայում են տրամագիծը նշելու համար, իսկ 50 նշանակումը պետք է հասկանալ այսպես՝ շառավիղը հավասար է 50 մմ-ի:


բ) Գծ. 163—կեռ: Կառուցումը պետք է սկսել առանցքների տանելով և նրանց համման կետից պետք է տանել շրջանագիծ՝ 25 մմ շառավիղով:

15. Կառուցել յերկաւրային հեծանի պրոֆիլը:

Յերկաւրային հեծանները ներկայացնում են այսպես կոչված ձևավոր յերկաւրային տեսակներից մեկը: Սովորաաար յերկաւրային հեծանի չափսը, ինչպես նաև ուրիշ տեսակի ձևավոր յերկաւրային չափսը, նշանակում են համարներով: Յերկաւրային հեծանի համարը պրոֆիլի բարձրությունն է՝ արտահայտված սանտիմետրներով: Հեծանների համարներն ու պրոֆիլի բոլոր չափսերը ստանդարտ են, հեծան բաց թողնող արտադրության կողմից սահմանված են վորոշ չափսեր:

164-րդ գծագրում ցույց է արված ձևավոր յերկաւրային տեսակներից մեկը՝ շվեյցեր կամ տաշտածն յերկաւր:


Յենթադրենք, պետք է կառուցել յերկաւրային № 18 հեծանի պրոֆիլը: Պրոֆիլի չափսերը, վերցված համապատասխան աղյուսակից (համամիութենական ստան-




Գծ. 163

դարա № 16 OCT), կլինեն հետևյալները՝  $h = 180$  մմ,  $b = 94$  մմ,  $d = 6,5$  մմ,  $t = 10,7$  մմ,  $R = 8,5$  մմ,  $r = 4,3$  մմ. 165-րդ դժագրում ցույց է տրված, վոր  $t$ -ն չափում են նիստի յեղրից  $\frac{b-d}{4}$  հեռավորության վրա: Մեր որինակում  $\frac{b-d}{4} = \frac{87,5}{4} \approx 22$  մմ:

Յերկատվրային յերկաթի պրոֆիլը կառուցելիս պետք է լուծել հետևյալ խնդիրը. կառուցել թեքությունը և սահուն անցումը մի ուղիղից մյուս ուղիղը՝ տրված շառավիղն ունեցող աղբղի միջոցով: 166-րդ դժագրում ցույց է տրված կառուցման ընթացքը: Առանցքի  $a$  կետից, աջից ու ձախից, անջատված են հետևյալ հատվածները՝  $ab_1 = ab_2 = \frac{94}{2} = 47$  մմ.  $b_1$  և  $b_2$  կետերից անջատված են  $b_1k_1 = b_2k_2 = \frac{b-d}{4} \approx 22$  մմ հատվածները:  $k_1$  և



Գծ. 164



Գծ. 165

$k_2$  կետերով տարված են ուղղահայացներ, վորոնց վրա աջատված են  $k_1m_1 = k_2m_2 = t = 10,7$  մմ հատվածները:


1:6 թեքության կառուցումը ցույց է տրված 166-րդ դժագրում՝ յերկու յեղանակով:

1-ին յեղանակ.  $a$  կետից անջատված են  $ac$  և  $ae$  հատվածներն այնպես, վոր դրանց հարաբերու-

թյունը լինի՝  $ae : ac = 1 : 6$  (որինակ՝  $ae = 10$  մմ,  $ac = 60$  մմ):  $ec$  ուղիղի թեքությունը կլինի 1:6: Յեթե  $m_1$  կետից տանենք զուգահեռ  $ec$ -ին, ապա  $h_1f_1$  ուղիղի թեքությունը նույնպես կլինի 1:6:

2-րդ յեղանակ.  $m_2$  կետից  $b_1, b_2$  ուղիղին տարված է զուգահեռ, վորի վրա անջատված է վորեւե  $m_2n_2$  հատվածը:  $n_2$  կետում կառուցված է ուղղահայաց, վորի վրա անջատված է  $n_2n_3$  հատվածը:  $m_2n_2$  և  $n_2n_3$  հատվածների չափսերը պետք է վերցնել այնպես, վոր դրանց հարաբերությունը լինի՝  $n_2n_3 : m_2n_2 = 1 : 6$  (որինակ՝  $n_2n_3 = 5$  մմ,  $m_2n_2 = 30$  մմ): Յեթե  $m_2$  և  $n_3$  կետերից տանենք ուղիղ, ապա նրա թեքությունը հավասար կլինի 1:6:

Կցորդման աղբղիների  $O_1$  և  $O_2$  կենտրոնները գտնելու համար պետք է կիրառել յերկու փոխհատվող ուղիղների միջև սա-



Գծ. 166


հուն անցում կառուցելու համար ցույց տրված յեղանակները: Գծագիրը կատարելիս նախ պետք է աանել կցորդող աղբղիներ, իսկ հետո արգեն ուղիղները:

16. Կառուցել Եվելլերի պրոֆիլը:

166 ա. դժագրում շվիլերի ամբողջ պրոֆիլը չի պատկերված, այլ միայն նրա յերկու նիստերից մեկը և պատի մի մասը:

Յենթազրեք, վոր պետք է կառուցել № 18 պրոֆիլը. պրոֆիլի չափսերը՝ վերցված համապատասխան աղյուսակից (համաժխութենական ստանդարտ OCT № 6159), կլինեն հետևյալները՝  $h$  (շվիլերի բարձրությունը)  $= 180$  մմ:  $b = 68$  մմ,  $d = 7$  մմ,  $t = 10,5$  մմ,  $r = 10,5$  մմ,  $r_1 = 5,25$  մմ:  $t$ -ն չափում են նիստի յեղրից  $\frac{b-d}{4}$  հեռավորության վրա: Շվիլերի նիստի ներքին յերեսի թեքությունը հավասար է  $10^\circ$ :

Կառուցելու համար պետք է տանել ուղիղ, անջատել նրա վրա  $ab$  հատվածը,  $b=68$  մմ չափով:  $b$  կետից պետք է վերցնել,  $b_1 k_1$  հատվածը հետևյալ չափով՝  $\frac{b-d}{2} = \frac{68-7}{2} = 30,5$  մմ,  $k_1$  կետում պետք է կանգնեցնել ուղղահայաց  $ab_1$  ուղիղին և այդ ուղղահայացի վրա անջատել  $t=10,5$  մմ-ի չափսը: Կտտանանք  $m_1$  կետը: Այժմ  $m_1$  կետից պետք է տանել ուղիղ՝  $10\%$  թեքությունով: Նրա համար կառուցենք  $cae$  ուղղանկյուն յեռանկյունը այնպես, Վոր  $ae$  եջը կազմի  $ac$  եջի  $10\%$ -ը (որինակ՝  $ae=10$  մմ,  $ac=100$  մմ): Այդ յեռանկյան  $ce$  ներքնաձի-



ՊՃ. 166 ա

զը կաա վորոնելի  $10\%$  թեքությունը: Յեթե  $m_1$  կետից տանենք զուգահեռ  $ce$  ներքնաձիգին, ապա այդ ուղիղի թեքությունը կլինի  $10\%$ :


Այս ձևի կառուցում կատարելու փոխարեն կարելի յե կատարել այլ կերպ: Կառուցենք  $m_1 n_2 n_3$  ուղանկյուն յեռանկյունն այնպես, Վոր  $m_1$  կետը լինի այդ յեռանկյան դագաթներից մեկը,  $m_1 n_2$  եջը զուգահեռ լինի  $ab_1$ -ին և  $n_2 n_3$  եջը կազմի  $m_1 n_2$  եջի  $10\%$ -ը (որինակ՝  $n_2 n_3=5$  մմ,  $m_1 n_2=50$  մմ): Անկյունների կլորացումը  $r$  և  $r_1$  շառավիղներով՝ կատարվում է § 39-ում ցույց տրված յեղանակով (զձ. 120—121):

§ 20. ՇՐՋԱՆԱԳԾԻ ԱՂԵՂԻ ԲԱՅՈՒՄԸ


1. Շրջանագծի աղեղն ուղղելը.

Շրջանագծի աղեղի յերկարությունը կարելի յե վորոշել  $l = \frac{\pi R n}{180}$  բանաձևից, Վորտեղ  $l$ -ն աղեղի յերկարությունն է,  $\pi \approx 3,14$ ,  $R$ -ն՝ աղեղի շառավիղն է (միլիմետրներով),  $n$ -ը տվյալ աղեղի աստիճանների թիվն է: Այս բանաձևով հաշվելով աղեղի յերկարությունը՝ ուղիղ գծի վրա վերցնում ենք այդ յերկայնության համապատասխան հատվածը և գրանով ել ուղղում աղեղը:

Յեթե աղեղը  $60^\circ$ -ից մեծ յե, ապա այն կարելի յե վերցնել շոշափողի վրա բավականին ճշտությամբ՝ հետևյալ յեղանակով



ՊՃ. 167




ՊՃ. 168

(զձ. 167): Տանում են տրված աղեղի  $AB$  լարը:  $AB$  ուղիղը շարունակում են և նրա շարունակության վրա վերցնում  $BK$  հատվածը՝ հավասար  $AB$  լարի կեսին:  $B$  կետում շոշափող են տանում աղեղին.  $K$  կետն ընդունելով վորպես կենտրոն՝  $KA$  հատվածին հավասար շառավիղով տանում են աղեղ մինչև շոշափողի հետ հատվելը.  $BC$  հատվածը ներկայացնում է ուղղված աղեղը:

Այս յեղանակը կարելի յե կիրառել նաև  $60^\circ$ -ից մեծ աղեղներն ուղղելու համար. այդպիսի աղեղները պետք է բաժանել  $60^\circ$ -ից փոքր մասերի և յուրաքանչյուր մաս առանձին ուղղել:

168-րդ գծագրում ցույց է տրված աղեղի յերկարությունը շոշափողի վրա փոխադրելու մի ուրիշ որինակ: Չափակարկինի միջոցով BC շոշափողի վրա վերցնում են արված AB աղեղի փոքր մասին համապատասխանող լարերը: Այդ լարերը պետք է վերցնել այն հաշվով, վոր գործնականում աղեղի և նրա լարի տարբերությունը շատ փոքր լինի: 168-րդ գծագրում ցույց է տրված, վոր շոշափողի վրա վերցրած լարը կարելի յե սխել այն կետից, վորը չի համընկնում աղեղի ծայրի հետ, բայց այնքան մոտ է գտնվում նրան, վոր այդ կետը կարելի յե հաշվել շոշափողի վրա գտնվող կետ:

BC շոշափողի հատվածն իր յերկարությամբ շատ քիչ չափով կտարբերվի աղեղի յերկարությունից, յեթե շոշափողի վրա փոխադրելու համար աղեղի շատ փոքր մաս վերցնենք:



Գծ. 169

Այս յեղանակն, այսինքն աղեղի բաժանումը մանր մասերի և նրանց տեղափոխումը շոշափողի վրա՝ աղեղն ուղղելու նպատակով, ոգտադործում են վոչ միայն շոշափողի վրա տեղափոխելու, այլ և տված աղեղը վորևե ուղիղի վրա վերցնելու համար:

2. Ուղղել ամբողջ օրջանագիծը.


Շրջանագծի յերկարությունը կարելի յե վորոշել  $C = \pi d$  բանաձևով, վորտեղ C-ն շրջանագծի յերկարությունն է (միլիմետրերով),  $\pi = 3,14$ , d-ն շրջանագծի արամագիծն է (միլիմետրերով):

Այս բանաձևով հաշվելով շրջանագծի յերկարությունը՝ ուղի-

ղի վրա վերցնում են յերկարությանը համապատասխանող հատվածը և այսպիսով ուղղում ամբողջ շրջանագիծը:

169-րդ գծագրում ցույց է տրված շրջանագիծը մոտավոր կերպով ուղղելու յեղանակներից մեկը: Շոշափողի վրա նրա A կետից վերցված է AK հատվածը, վորը հավասար է տված շրջանագծի արամագծի յեռապատիկին:

C կետից հատում են տված շրջանագիծն աղեղով, վորի շառավիղը հավասար է շրջանագծի շառավիղին (ստացվում է  $60^\circ$ -ի անկյուն): E կետից տանում են ուղղահայաց AB արամագծին: MK հատվածը հավասար է (շատ փոքր սխալով) շրջանագծի յերկարությանը:



Գծ. 170

Ապացույց.

$$MK^2 = MA^2 + AK^2 \text{ (Պյութագորի թեորեմ):}$$

$MA = MO + OA$ , MO-ն հավասար է ներգծած կանոնավոր յեռանկյան կողմի կեսին, այսինքն  $\frac{R\sqrt{3}}{2}$ , վորտեղ  $R = OA$ -ն հավասար է տված շրջանագծի շառավիղին:

$$MA = \frac{R\sqrt{3}}{2} + R,$$

$$AK = 3d = 6R,$$

$$MK^2 = \left(\frac{R\sqrt{3}}{2} + R\right)^2 + (6R)^2 = \frac{3R^2}{4} + R^2\sqrt{3} + R^2 + 36R^2,$$

$$MK^2 = \frac{R^2}{4} (4\sqrt{3} + 151),$$

$$\sqrt{3} \approx 1,732$$

$$MK \approx \frac{R}{2} \sqrt{4 \cdot 1,732 + 151} \approx \frac{R}{2} \sqrt{157,928} \approx 6,285 R \approx 3,1425 d$$

Արդյունքը կարելի յի բազդատել շրջանագծի յերկարութեան արտահայտութեան հետ՝  $\pi d \approx 3,14159 d$ :

3. Ուղղել կիսաբազմաձևը:

170-րդ գծագրում ցույց տրված լեղանակը տալիս է մոտավոր կատուցումը՝ բաժանելով մեծ ճշտութեամբ: Տրված շրջանագծի մեջ տանում են յերկու փոխուղղահայաց տրամագիծ և նրանցից մեկին զուգահեռ տանում են շոշափող: C կետից (զծ. 170) վերցնում են  $60^\circ$ -ի անկյուն և E կետից ու O կետից տանում են ուղիղ՝ մինչև շոշափողի հետ հատվելը: Շոշափողի M կետից վերցնում են MK հատվածը՝ հավասար տված շրջանագծի շառավիղի յեռագատիկին: BK հատվածը հավասար է (ըստակատեսին ճշտութեամբ) կիսաշրջանագծի յերկարութեանը:

Ապացուցյ.

$$BK^2 = BA^2 + AK^2 \text{ (Պյութագորի թեորեմ)};$$

$$BA = 2R;$$

$$AK = 3R - MA;$$

$$BK^2 = (2R)^2 + (3R - MA)^2;$$

MAO ուղղանկյուն յիտանկյան մեջ MA եջը գտնվում է  $30^\circ$ -ի անկյան դիմաց, հետևաբար՝  $MA = \frac{MO}{2}$ , այսինքն

$$MO = 2MA, MA^2 = MO^2 - OA^2 = (2MA)^2 - R^2;$$

$$3MA^2 = R^2;$$

$$MA = \frac{R\sqrt{3}}{3};$$

$$BK^2 = (2R)^2 + \left(3R - \frac{R\sqrt{3}}{3}\right)^2 = 4R^2 + 9R^2 - 2R\sqrt{3} + \frac{R^2}{3} = \frac{R^2}{3}(40 - 6\sqrt{3});$$


$$BK \approx R\sqrt{\frac{40 - 6 \cdot 1,732}{3}} \approx 3,14153R;$$

Արդյունքը պետք է բազդատել կիսաշրջանագծի յերկարութեան արտահայտութեան հետ՝

$$\pi R \approx 3,14159 R;$$

§ 21. ՈՎԱԼՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

171-րդ գծագիրը տալիս է այսպես կոչված ովալի որինակի Ովալը սահմանափակվում է մի կոր գծով, վորը կազմված է շրջանագծի իրար հետ կցորդվող աղեղներից: 171-րդ գծագրում կորը կազմված է չորս աղեղից, աղեղներից յերկուսը տարված են  $O_1$  և  $O_2$  կենտրոններից՝ r շառավիղով, իսկ մյուս յերկուսը  $O_3$  և  $O_4$  կենտրոններից՝ R շառավիղով: Կենտրոնները գտնելու համար 171-րդ գծագրում կիրառված է ովալի տվյալ յերկարութեանը, AB հատվածը, 4 հավասար մասի բաժանելու յեղանակը: Բաժանման  $O_1$  և  $O_2$  կետերը վերցված են վորպես կենտրոններ ծայ-



Գծ. 171


բաղեղների համար:  $O_3$  և  $O_4$  կենտրոնները գտնված են  $O_1$  և  $O_2$  կետերի հեռավորութեանը հավասար շառավիղն ունեցող աղեղների հատումից, վորոնք տարված են նույն  $O_1$  և  $O_2$  կետերից, r շառավիղը հավասար է  $O_1$ -ի և A-ի հեռավորութեանը (կամ  $O_2$ -ի և B-ի), իսկ R շառավիղն ստացվում է  $O_3$  կետը  $O_1$  կետին միացնելուց և  $O_3$   $O_1$  ուղիղը շարունակելուց՝ մինչև  $O_1$  կետրոնից տարված աղեղի հետ հատվելը: a, b, c և d կետերը ներկայացնում են կցորդման կետերը:

Յեթև ովալի տվյալ յերկարութեանը բաժանելը 3 հավասար մասի (զծ. 172), ապա կատարվի ափելի լայն ովալ (միևնույն յերկարութեամբ) քան 171-րդ գծագրում տրվածը:

172-րդ գծագրի վրա կատարված կառուցումը նման է 171-րդ գծագրի վրա կատարված կառուցմանը: 171-րդ և 172-րդ գծագրերում նշված կոր գծերը կոչվում են զսր գծեր<sup>1)</sup>:

173-րդ և 174-րդ գծագրերում տրված է կորը գծերի կառուցումը՝ տրված թռիչքով ( $AB$  հատված) (և սլաքով ( $OC$  հատված):

Գ ծ ա գ ի Ր 173.  $O$  կետից  $OA$  շառավիղով գծում են աղեղ՝ մինչև  $OC$  ուղիղի շարունակության հետ հատվելը:  $A$  և  $C$  կետերը միացնում են իրար ուղիղով, վորը հասում են  $C$  կետից, վորպես կենտրոնից,  $CK$  շառավիղով տարված աղեղով: Տանում




Գծ. 172

են  $AM$  հատվածի միջնուղղահայացը և շարունակում մինչև  $AB$  հատվածի ( $O_1$  կետում), և  $CO$  հատվածի շարունակության հետ ( $O_3$  կետում) հատվելը:  $O_1$  կետը և նրա համաչափ դասավորված կետը ( $OO_1 = OO_2$ ) հանդիսանում են ծայրագլղների կենտրոնները:  $O_3$  հանդիսանում է միջին աղեղի կենտրոնը ( $R = O_3C$ ,  $r = O_1A = O_2B$ ):

Գ ծ ա գ ի Ր 174.  $AB$  հատվածը (թռիչք) բաժանում են 4 հավասար մասի:  $O_1$  և  $O_2$  կետերը հանդիսանում են ծայրագլղ-


1) Ենթադրվում է, որ զսր գծերը կորերի կենտրոններն են:

ների կենտրոնները ( $r = O_1A = O_2B$ ):  $OC$  սլաքի վրա վերցնում են  $CK$  հատվածը՝ հավասար ( $P = O_1A$ ):  $K$  կետն ուղիղ գծով միացնում են  $O_1$  կետի հետ և  $O_1K$  հատվածին տանում միջնուղղա-




Գծ. 173

հայաց. այդ ուղղահայացը շարունակում են մինչև  $CO$  ուղիղի շարունակության հետ հատվելը:  $O_3$  կետը հանդիսանում է միջին աղեղի կենտրոնը ( $R = O_3C$ ):



Գծ. 174




Գծ. 175

Կորը կորերը կիրառում են շինարարական գործում (աղեղների, կամարների զծագրելիս) և շվեյցի ողակներ ու մեքենայի վորոշ գեատրներ զծագրելիս:

Ովալի մի որինակ էլ կարող է ծառայել այսպես կոչված սվոնիդը<sup>1)</sup> (ձվածիր):

Ովոնիդը (կոր) կազմված է շորս կցորդման աղեղներից, այն է՝ տրված  $r$  ( $r = \frac{AB}{2}$ ) շառավիղով տարված կիսաշրջանագծից, B և A կետերից  $R = AB$  շառավիղով տարված յերկու աղեղից և  $r_1$  շառավիղով տարված ծայրաղեղից: Այդ շառավիղը վորոշվում է կառուցելիս.  $O_1$  կետը վերցնում են  $r = \frac{A^3}{2}$  շառավիղով տարված հիմնական շրջանագծի վրա և  $O_1$  կետից ու A, B կետերից տանում են ուղիղներ՝ մինչև B և A կետերից



Գծ. 176

Գծ. 177

$R = BA$  շառավիղով տարված աղեղների հետ a և b կետերում հասվելը:  $r_1 = O_1a = O_1b$ :

$O_1$  կետը կարելի չէ վերցնել ավելի մոտ O կետին, այս դեպքում ովոնիդն ավելի բուլթ է սաացվում:

### § 22. ԽՈՅԱԿ ԿԱՌՈՒՅԵԼԸ


Խոյակը մի կոր է, վորն արտաքուստ հիշեցնում է սպիրալը, բայց կազմված է շրջանագծի իրար հետ կցորդված աղեղներից: 176-րդ գծազրի վրա տված է խոյակի կառուցումը յերկու կենտրոններից: Այդ O և  $O_1$  կենտրոնները պատկանում են հիմ-

<sup>1)</sup> Ովոնիդը լատիներեն ovus բառից, վոր նշանակում է ձու:

նական շրջանագծին, վորի շառավիղը կարող է տրված լինել: Ամբողջ խոյակը կազմված է կիսաշրջանագծերից: Առաջին կիսաշրջանագիծը տարված է  $O_1$ -ից՝  $O_1A$  հատվածին հավասար շառավիղով: Յերկրորդ կիսաշրջանագիծը տարված է O կենտրոնից՝ OB հատվածին հավասար շառավիղով: Այնուհետև  $O_1$  կենտրոնից տարված է կիսաշրջանագիծ՝  $O_1C$  շառավիղով, իսկ O կենտրոնից տարված է կիսաշրջանագիծ՝ OD շառավիղով: Կառուցումը կարելի չէր շարունակել՝ նորից հաջորդաբար փոխելով  $O_1$  և  $O_2$  կենտրոնները: Շրջանագծի փոխարեն կարելի չէ վերցնել խոյակի այլ «աչք»—լեռանկյուն, քառակուսի և այլն: 177-րդ գծազրի վրա խոյակը կառուցված է վեց կենտրոններից, վորոնք վերցված են կանոնավոր վեցանկյան գագաթներում: Վեց անկյան կողմերը շարունակված են, իսկ այնուհետև տարված են աղեղներ 1 կենտրոնից՝ 1—6 շառավիղով, 2 կենտրոնից՝ 2—a շառավիղով, 3 կենտրոնից՝ 3—b շառավիղով և այլն:

### § 23. ՇՐՋԱՆԻ ԵՎՈՒՎԵՆՏԻ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ

Շրջանի եվոլվենտ կոչվում է այն ճանապարհը (այլ կերպ ասած հետագիծը), վոր անցնում է այն թիլի կետով, վորը կարող է



Գծ. 178

փաթաթված լինել շրջանագծի վրա և նրանից ձգված վիճակում բացվելը 178-րդ գծազրի վրա ցույց է տված, թե ինչպես պետք

ե գտնել կետերը, վորպեսզի անցկացնենք կորը — Երջանի եվոլվենքը:

Տված շրջանագիծը վորոշ թվով հավասար մասերի յն բաժանում (178-րդ գծագրի վրա՝ 12 մասի), Բաժանման կետերից շրջանագծին տանում են շոշափողներ: Շոշափողների վրա, շոշափման կետերից սկսած, անջատում են հատվածներ, վորոնք հավասար են համապատասխան աղեղների յերկարություններին՝  $a$  սկզբնական կետից մինչև շոշափման կետը: Որինակ՝ 3—3 հատվածը հավասար է շրջանագծի քառորդի յերկարությանը: Աղեղների յերկարությունները կարելի յե վերցնել հաշվումներով ( $\frac{2\pi R}{12}$ ,  $\frac{2\pi R}{6}$ ,  $\frac{2\pi R}{4}$  և այլն), կամ 92 եջում ցույց տված յեղանակով:

178-րդ գծագրի վրա սահմանափակվել ենք վեց կետով: Կարելի յե շրջանի եվոլվենտ կառուցել, յեթե զլանաձև սկավառակի վրա ամրացնենք թելի մի ծայրը և այն փաթաթենք սկավառակի վրա և այնուհետև բռնենք թելն ազատ ծայրերից, սկսենք քանգել այն, բայց այնպես, վոր թելը միշտ ձգված մնա: Թելի ազատ ծայրը (և նրա յուրաքանչյուր կետը) եվոլվենտ կգծի:


Քանի վոր շրջանը կարելի յե դիտել վորպես անվերջ մեծ թվով կողմեր ունեցող բազմանկյուն, ապա, հիշելով 177-րդ գծագրի վրա կատարված կառուցումը, կարելի յե ստել, վոր շրջանի եվոլվենտը կազմված է անվերջ փոքր աղեղներից, վորոնք ստրված են անվերջ մեծ թվով կենտրոններից: Հետևաբար այդ աղեղների շառավիղներն անընդհատ կփոփոխվեն, և այդ պատճառով կարկինով եվոլվենտ հնարավոր չի անցկացնել: 11 եջի վրա ցույց արվեց, վոր կարկինով չգծագրող կորեր անցկացնելու համար կորափակում են գործածում: Եվոլվենտը (գծ. 178) պետք է անցկացնել կորաքանոնով:

### § 24. ԿՈՐԱՔԱՆՈՆՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Սովորաբար չի հաջողվում կորաքանոնով միանգամից անցկացնել պահանջվող կորը: Պետք է ընտրել մի քանի (յերեքից վոչ պակաս) հարեան կետերից և նրանցով անցկացնել կորի մասը

և այնուհետև ընտրել հարեան կետերի հաջորդ խումբը և այլն: Այս դեպքում ընտրելով, որինակ, 6 հարեան կետեր այնպես, վոր նրանցով կորաքանոնի ոգնությամբ կարելի յե անցկացնել կորի մի մասը, կորն անց են կացնում վոչ բոլոր վեց կետերով, այլ հինգ կետով: Այնուհետև հարեան կետերն ընտրում են՝ սկսելով նախորդ հինգերորդից. այդ կետը նոր խմբի մեջ կլինի առաջինը: Յեթե այժմ ընտրված են չորս հարեան կետերը, ապա կորն անց են կացնում յերեքով և այլն:

Նպատակահարմար է կորի առանձին մասերը միանգամից չմիացնել, այլ թողնել փոքր միջակայքներ, վորոնք հետագա-



Գծ. 179

յում լրացվելու յնն նորից կորաքանոնով, իսկ յերբմն ել՝ նույն իսկ ձևըով: Այդպսիով հաջողվում է խուսափել կորի առանձին ճյուղերի միացման մասերում անկյուններ ստանալուց:


Կորաքանոնի ամենից հարմար մասն ընտրելուց առաջ պետք է աշխատել մի շարք հարեան կետեր ձևըով միացնել սահուն կորով, իսկ այնուհետև արգեն մոտեցնել կորաքանոնը: Սովորաբար անհրաժեշտ է լինում ոգտագործել վոչ թե մեկ, այլ մի քանի կորաքանոն, կորի յուրաքանչյուր մասի համար ընտրելով ամենից հարմար կորաքանոն, իսկ նրա վրա — տված կորի համար ամենից շատ հարմար մասը:

Կորաքանոնով շրջանի եվոլվենտը գծելու համար (գծ. 179) բավականին հեշտությամբ նրա առաջին կետերն ընկնում են կորաքանոնի համապատասխան մասի վրա, քանի վոր կետերը մեկը մյուսին բավականին մոտ են դասավորված: Բայց

յթե եկովենտը շարունակենք, ապա կարող ես հարեան կետերի մեծ հեռավորությունների պատճառով, գծվարություն առաջանալ, հատկապես կորի վերջին մասերում: Այդպիսի դեպքերում պետք է վերջուց մի քանի միջանկյալ կետեր:

§ 25. ԱՐՔԻՄԵԴԻ ՄՊԻՐԱԼԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Արքիմեդի սպիրալը<sup>1)</sup> ներկայացնում է շառավիղի ուղղությամբ հավասարաչափ համընթաց շարժվող կետի հետագծը (ուղին), յերբ շառավիղն իր հերթին հավասարաչափ պտտվում է:



Գծ. 180

Ստանում են 8 կետ, վորոնցով կորաքանոնի ողնությամբ տանում են կորը—Արքիմեդի<sup>2)</sup> սպիրալը: Սկզբնական կետ հանդիսանում է Օ կենտրոնը. առաջին գալարի ծայրը 8 կետուցն է, կորը կարող է շարունակվել. կառուցումը կատարում են նույն յեղանակով:


§ 26. ՅԻԿԼՈՒԴԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Յիկլոիդ<sup>3)</sup> է կոչվում այն կորը, վորը ներկայացնում է շրջանագծի կետերից մեկի հետագիծը (ուղին), յերբ շրջանը գլորվում է ուղիղ գծով:

1) Սպիրալ — Փլանսերեն spirale (լատիներեն spira, հին հունարեն σπειρα—ծուռ):  
 2) Արքիմեդ—Հին ժամանակների գիտնական (մաթեմատիկոս, մեխանիկ):  
 3) Յիկլոիդ անունը ծագում է հին հունարենից:

181-րդ գծագրի վրա ցույց է տրված շրջանագծի և ուղիղի շոշափման A կետի ցիկլոիդի կառուցումը:

Շրջանագիծը բաժանված է 12 հավասար մասի: Բաժանման կետերից տարված են զուգահեռ ուղիղներ այն ուղիղին, վորի վրա շրջանագիծը գլորվում է: Այդ ուղիղի վրա անջատված է  $2\pi R$ -ի հավասար մի հատված և բաժանված է 12 հավասար մասի: Բաժանման յուրաքանչյուր կետից տարված է ուղղահայաց՝ մինչև C կենտրոնով անցնող ուղիղի հետ հատվելը: Բոլոր  $O_1, O_2$  և այլն կետերից տարված են R շառավիղով աղեղներ:




Գծ. 181

մինչև շրջանագծի 1, 2, 3 և այլն կետերով տարված համապատասխան ուղիղների հետ հատվելը. հատումից ստացվում են ցիկլոիդի կետերը, այսինքն A կետի գերքերը, յերբ շրջանը գլորվում է ուղիղի վրա: Շրջանի կես պտույտից հետո A կետն ամենաբարձր գերքումն է լինում, լրիվ պտույտից հետո A կետը նորից ընկնում է ուղիղի վրա: Հետագա գլորման ժամանակ ստացվում է ցիկլոիդի յերկրորդ ճյուղը և այլն: Յիկլոիդն անց են կացնում կորաքանոնով, Յեթե շրջանը գլորվեր վոչ թե ուղիղի վրա, այլ մի այլ շրջանագծի վրա, ապա կստացվեին այսպես կոչված եպիցիկլոիդ և հիպոցիկլոիդ, կորերը. առաջինն ստացվում է, յերբ շրջանը գլորվում է շրջանագծի վրա դրսից, իսկ յերկրորդը՝ յերբ շրջանը գլորվում է շրջանագծի վրա ներսից, կառուցման յեղանակը մնում է նույնը, ինչ վոր ցիկլոիդի համար էր: Տարբերությունն այլ է միայն, վոր AA ուղիղը (գծ. 181) և նրան զուգահեռ ուղիղները փոխարինվում են շառավիղներով, իսկ  $2\pi R$  յերկարությունը պետք է

անջատել վոչ թե ուղղի, այլ աղեղի վրա, վորը կտարվում է R շառավիղով շրջանագծի փոքր բաժանմունքների փոխադրումով այն շրջանագծի ուղիղի վրա, վորի վրա գլորվում է տված շրջանը:

§ 27. ԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԻՐ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՈՎ

Յենթադրենք, վոր տված է  $y^2 = 5x$  հավասարումը. պետք է կառուցել այդ հավասարումին համապատասխանող գիծը: Գիծը կառուցելու համար պետք է գտնել մի շարք կետեր, այսինքն նրանց կոորդինատները: Վերցնում են  $x$ -ի մի շարք արժեքներ, որինակ՝  $x = 1$ ,  $x = 2$  և այլն. այս արժեքները տեղադրում են հավասարումի մեջ և գտնում  $y$ -ի համապատասխան արժեքները:



ԳՃ 182.

Այսպես, լեթե  $x = 1$ , ապա  $y^2 = 5$ ,  
 $y = \pm \sqrt{5} \approx \pm 2,2361 \approx \pm 2,2$ .

$x$ -ի մեկ արժեքին համապատասխանում է  $y$ -ի յերկու արժեք:

$x$ -ի և  $y$ -ի արժեքների համար աղյուսակ կազմելով կառուցում են կետերն  $x$  արսցիսներով և  $y$  որդինատներով,  $x$ -ի արժեքները վերցնելով  $OX$  հորիզոնական ուղիղի վրա, իսկ  $y$ -ի արժեքները՝  $OX$ -ի ուղղահայացների վրա այսինքն գուգահեռ  $OY$ -ին:  $y$ -ի դրական արժեքները վերցնում են  $OX$  ստանցքից վերև, իսկ բացասականները՝ ներքև:  $OX$  և  $OY$  ուղիղ-

ները կոորդինատային առանցքներն են (գժ. 182):

x	0	0,5	1	2	3
y ±	0	0,6	2,2	3,2	3,9


Հետևաբար, ընտրելով կոորդինատներից մեկի համար կամայական արժեքներ, հավասարումից գտնում են մյուս կոորդինատի համապատասխան արժեքները: Այնուհետև վերցնում են կոորդինատային առանցքները և նրանց վրա տեղադրում են

$x$ -ի և  $y$ -ի արժեքները, ընդունելով, որինակ, վոր միավորը գծազրի վրա համապատասխանում է 10 մմ-ի, Ստացված կետերը միացնում են կորագրանոնով:

§ 28. ՍԻՆՈՒՍՈՒԴԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Սինուսոիդը պատկերում է սինուս յեռանկյունաչափական ֆունկցիայի փոփոխության ընթացքը՝ անկյան փոփոխությունից կախված:

183-րդ գծազրի վրա տված է սինուսոիդի կառուցումը՝ շրջանագծի վրա վերցրած  $a, b, c, d, e, f$  կետերը 1, 2, 3 և այլն



ԳՃ 183

կետերից տարված ուղղահայացների վրա տեղափոխելով: Այդ կետերն ուղիղի  $AB$  հատվածը բաժանում են այնքան մասի, վորքան մասի բաժանված է շրջանագիծը:

183-րդ գծազրի վրա շրջանագիծը (և  $AB$  հատվածը) բաժանված է 12 հավասար մասի.  $AB$  հատվածը հավասար է շրջանագծի յերկարության ( $2\pi R$ ): 1, 2, 3 և այլն կետերից տարած ուղղահայացների և  $AB$ -ին գուգահեռ ուղիղների փոխնատումից ստացվում են սինուսոիդի կետերը, քանի վոր ուղղահայացների վրա ստացվում են սինուսի գծի մեծությունները: Սինուսոիդի ստացված կետերը միացնում են կորագրանոնով:

ՊՐՈՅԵԿՏԻՈՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ


Յեթի մենք նայում ենք վորեւ անարկայի և աշխատում ենք պատկերել այդ անարկան հարթության վրա (թղթի վրա, դրատախտակի վրա), ապա ամենագիտողականը հանգիստանում է հեռանկարային պատկերումը. այդպիսի պատկերումն ամենից ավելի յե համապատասխանում այն սպավորությանը, վորը մենք ստանում ենք, յերբ նայում ենք պատկերվող առարկային: Հեռանկարային պատկերի ստացումը կարելի յե պատկերացնել հետևյալ կերպ (գծ. 184 A), սոված անարկայի (184 A գծագրի վրա վերցված է խորանարդ) մակերևույթի կետերից դեպի դիտողի աչքերը տարած ճառագայթները հատում են նկարի հարթութունը. նկարի հարթության վրա ստացվում են մի շարք կետեր, վորոնք պատկերում են անարկայի համապատասխան կետերը:

Այն կետը, վորից նայում են անարկային, կոչվում է դիտակետ. ճառագայթներով հատվող հարթութունը կոչվում է պրոյեկցիաների<sup>1)</sup> հարթութուն:

Խորանարդի հեռանկարային պատկերումը սոված է 184 բ գծագրի վրա:

Խորանարդը զրված է այնպես, վոր նրա առջևի նիստը զուգահեռ է նկարի հարթության. այդ պատճառով խորանարդի առջևի նիստը (և նրան զուգահեռ հետևի նիստը) հեռանկարային

1) Պրոյեկցիա ֆրանսերեն բառ է (projection), վոր նշանակում է անարկայի պատկերումը հարթության վրա:



Գծ. 184

պատկերման մեջ ներկայացնում է քառակուսի ինչ վերարեբում է խորանարդի վերևի, ներքևի և կողմնային նիստերին, ապա նրանք հեռանկարային պատկերման մեջ ազդատված են. քառակուսիների փոխարեն սեղաններ են ստացվել: Ազդատվել են և կողերի մեծությունները: Խորանարդի բոլոր կողերը հավա-


սար են իրար, իսկ հեռանկարային պատկերման մեջ կողերի մի մասը մեծությամբ տարբերվում է մնացածներից:

Կողերից մի քանիսը պատկերված են շարքիսային գծերով, վորոնք, ինչպես ցույց է տված 6-րդ եջում, գործածվում են գոյություն ունեցող, բայց չերևացող, վորևե բանով ծածկված գծերը պատկերելու համար:

Վորևե առարկայի հեռանկարային պատկերը (պրոյեկցիան նկարի հարթութան վրա) փոխվում է դիտակետի և հարթութան դիրքի փոփոխության հետ միասին: Յեթե մեզ պատկերացնենք, վոր դիտակետն անսահման հեռու յե գտնվում, ապա ըուր ճառագայթները կդառնան զուգահեռ. այդ դեպքում ստացված պրոյեկցիան կոչվում է զուգահեռ պրոյեկցիա: Յեթե ճառագայթները պրոյեկցիաների հարթությունն ուղիղ անկյուն տակ չեն հատում, ապա զուգահեռ պրոյեկցիան կոչվում է ռեկանկյուն պրոյեկցիա. յեթե ճառագայթներն ուղղված են ուղղահայաց պրոյեկցիաների հարթությանը, ապա պրոյեկցիան կոչվում է ուղղանկյուն պրոյեկցիա:

Յեթե խորանարդը պրոյեկցիաների հարթության նկատմամբ դրված է այնպես, ինչպես ցույց է տրված 184Ե գծագրի վրա, այսինքն առջևի (և հետևի) նիստը զուգահեռ է պրոյեկցիաների հարթության, ապա խորանարդի ուղղանկյուն պրոյեկցիան ստացվում է մեկ քառակուսու ձևով (գծ. 184 Ե): խորանարդի այդպիսի պատկերման ժամանակ մենք նորից կստանանք աղճատում. պրոյեկցիաների հարթության ուղղահայաց չորս կողերը պատկերվեցին կետերով, չորս նիստերը (վերևի, ներքևի և յերկու կողմնային) պատկերվեցին ուղիղ գծերի հատվածներով: Սակայն, ինչպես մենք հետագայում կտեսնենք, գծագրության մեջ գլխավորապես կիրառվում է առարկաների պատկերումն ուղղանկյուն պրոյեկցիաներով. միայն պատկերը վերցնում են վորթե մեկ, այլ յերկու, յերեք և նույնիսկ ավելի հարթությունների վրա, ընդ վորում մի հարթությունը մյուսի նկատմամբ ուղղահայաց դիրք է ունենում: Այս գեպքում, յեթե մի պրոյեկցիայի վրա վորևե հատված պատկերվում է կետով, ապա մյուս պրոյեկցիայի վրա այդ հատվածը պատկերվում է առանց աղճատման, այսինքն ուղղանկյուն պրոյեկցիաներից կազմված գծագրով մենք կարող ենք ճշգրիտ չափումներ անել:

Սակայն ուղղանկյուն պրոյեկցիաներով կառուցված պատկերը համարյա միշտ դիտողական չեն: Յեթե ուղում են գծագիրը լրացնել դիտողական պատկերով, ապա վորպես այդպիսի պատկեր հաճախ վերցնում են այնպիսին, վորը նման է հեռանկարային պատկերին, բայց ստացվում է զուգահեռ պրոյեկցիայի տեսքով: 184,Բ գծագրի վրա տված է խորանարդի այդպիսի պատկերումը. իրականում զուգահեռ կողերը զուգահեռ են մնացել նաև 184,Գ գծագրի վրա. այնինչ 184,Ե գծագրի վրա վորոշ կողեր ցույց են տված վորպես զուգամիտվող: 184,Գ գծագրի վրա աղճատումը վերաբերում է գլխավորապես խորանարդի վերևի, ներքևի և կողքի նիստերի անկյուններին. ուղիղ անկյունների փոխարեն ստացվել են սուր և բութ անկյուններ: Ինչ վերաբերում է կողքի չափերին. ապա ավելի դիտողական է խորանարդի այն պատկերը, յերբ այն կողերը, վորոնք պատկերված են հորիզոնական ուղղության հետ վորոշ անկյուն տակ, պահպանված են (բաղադր 184,Գ և 184, Ը գծագրերը): Այսպիսով խորանարդը կարելի յե պատկերել բախանալին դիտողական, յերբ նրա առջևի նկարը վերցնենք այնպես, ինչպես




Գծ 185

նա կա (քառակուսի), և նրան կից կառուցենք զուգահեռանիստեր (կամ շեղանկյուններ), վորոնք պատկերում են վերևի և կողքի նիստերը:

Սորանարդի այդպիսի պատկերն ստացվում է շեղանկյուն զուգահեռ պրոյեկցիայի միջոցով և կոչվում է ֆրոնտալ պրոյեկցիա. KCM անկյան մեծությունը (գծ. 184,Ե և խորանարդի կողը պատկերող CN հատվածի յեղանկյունը կարելի յե ընտրել ըստ ցանկության: Հաճախ պատկերը կառուցում են,

յերբ  $\angle KCM = 45^\circ$ , իսկ CN հատվածը հավասար է պատկերվող գծի կեսին: Այդպիսի պրոյեկցիան անվանում են կարինետային: 184, Ք գծագրի վրա տված է յերկու փոխուղղահայաց հարթությունների դիտողական պատկերումը: OY հատվածը OX հատվածի շարունակութան հետ  $45^\circ$  անկյուն է կազմում:

185-րդ գծագրի վրա կարինետային պրոյեկցիայով պատկերված է ուղղանկյուն փորվածք ունեցող ուղղանկյուն սալը: Սալի լայնութունն իրականում հավասար է 30 մմ-ի, իսկ կարինետային պրոյեկցիայի մեջ յերկու անգամ կրճատվել է Փորվածքի



Գծ. 185 ա


լայնութունը և նրա հեռավորութունը սալի յերկար (40 մմ) կողերից նույնպես յերկու անգամ կրճատվում են:

Յեթն պահանջվում է կառուցել կանոնավոր քառանկյուն բուրգի կարինետային պրոյեկցիան, ապա նախ պետք է կառուցել հիմքի պատկերը. ստացվում է  $45^\circ$  և  $135^\circ$  անկյուններն ունեցող ABCD զուգահեռագիծը, վորի AB և CD կողմերը յերկու անգամ կարճ են AD և BC կողմերից (գծ. 185 ա): Այնուհետև պետք է տանել զուգահեռագծի անկյունագծերը և նրանց համան կետից սահել բուրգի բարձրության հավասար ուղղաձիգ ուղղված հատված: Մնում S կետը միացնել A, B, C և D կետերի հետ՝ նշելով անտեսանելի կողերը շարժիսային գծերով, իսկ տեսանելիները՝ հոծ գծերով:

Դիտողական պատկերումների մասին հաջորդ տեղեկութունները տված են  $53 = 58$  պարագրաֆներում:

§ 29. ՏԵՍԻԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԾԱԳՐԻ ՎՐԱ

Գծ. 186 ա-ի վրա տված է գծ. 186-ի վրա նկարված խորանարդի գծագիրը: Ինչպես տեսնում ենք, միևնույն գծագրի վրա տված է խորանարդի յերեք պատկեր: Այդ պատկերներն ստացվում են, յեթե խորանարդի վրա նայենք տարբեր կողմերից՝ վերեից, առջևից և կողքից: Իրոք, յեթե մեր առջև, առջև թե սեղանի վրա, դնենք խորանարդը և նրա վրա նայենք վերեից, ապա ամբողջ խորանարդը կպատկերացվի վորպես քառակուսի. յեթե նայենք առջևից, ապա նորից կտեսնենք քառակուսի, վորը ներկայացնում է ամբողջ խորանարդի պատկերը: Նույնը կստացվի, յեթե նայենք ձախից: Առարկայի պատկերները, յերբ նրա վրա նայում են տարբեր կողմերից, գծագրի վրա կոչվում են տեսքեր. վերեվից յերեվացող տեսք, առջևից յերեվացող տեսք, ձախից յերեվացող տեսք (կամ կարճ՝ առարկայի տեսքը վերեից,



Գծ. 186


Գծ. 186 ա

տեսքն առջևից, տեսքը ձախից): Կարող է լինել նաև տեսք աջից, տեսք հետևից, տեսք ներքևից: Այս անունները ցույց են տալիս, թե վոր կողմից են նայում պատկերվող առարկային: Առջևից յերեվացող տեսքը կոչվում է գլխավոր տեսք:

Այսպիսով ամբողջ գծագիրը կազմում են տված առարկայի առանձին պատկերներից — տեսքերից: Սակայն տեսքերի դասավորության մեջ պահպանում են վորոշ կանոններ, վորոնք պար-

տադիր են դժուար կազմելիս: Ըստ այդ կանոնների՝ գլխավոր տեսքը (տեսք առկից), ձախից յերևացող տեսքը և աջից յերև-վացող տեսքը պետք է դասավորվեն միևնույն մակարդակի վրա. այստեղ ձախից յերևացող տեսքը (կամ աջից յերևացող տեսքը) չեն կարող գլխավոր տեսքից ավելի բարձր կամ ցած գտնվել: Վերևից յերևացող տեսքը դնում են գլխավոր տեսքի տակը, բայց այնպես, վոր վերևից յերևացող տեսքը գլխավոր տեսքի նկատմամբ դեպի աջ կամ ձախ շարժված չլինի:

Այս պայմանները պահպանելու գեպքում կարելի յե պատկերացնել պատկերվող առարկան, կարելի յե վորոշել նրա կառուցվածքի մանրամասնություններն ու նրա դասավորությունն այլ առարկաների նկատմամբ:



Գձ. 187 ա-ի վրա տված է գծագրի ելի մի որինակ: Պատկերվող առարկան ավելի բարդ ձև ունի քան խորանարդը: Ինչպես յերևում է 187 ա գծագրից, առարկայի պատկերները, յեթե նրա վրա նայենք տարբեր կողմերից, տարբեր կլինեն: Գլխավոր տեսքի վրա ամենից պռաջ կպատկերվեն  $A_1$ ,  $A_2$  և  $A_3$  նիստերը.  $A_2$  և  $A_3$  նիստերի պատկերները բաժանված են 1—1 կողի պատկերը ներկայացնող ուղիղի հատվածով: Վերևից յերևացող տեսքը ներկայացնում է մի քառակուսի, վորի ներսում տարված է բեկյալ դիժ— $B_1$  նիստը սահմանագծող կողերի պատկերը: Յեթե պատկերվող առարկայի վրա նայենք ձախից, ապա ամենից առաջ տեսնում ենք  $B_1$  և  $B_2$  յերկու նիստերը. այս նիստերից յուրաքանչյուրը պատկերվում է հատուկ պատկերով, իսկ ամբողջ պատկերը ներկայացնում է առարկան, յեթե նրա վրա նայենք ձախ կողմից: Աջ կողմից յերևացող տեսքը (գձ. 187 ա) պարունակում է  $\Gamma_1$  և  $\Gamma_2$  նիստերի պատկերները և, բացի այդ,  $B_1$  և  $B_2$  նիստերի պատկերները: Այդ նիստերը, յեթե առարկայի վրա նայենք աջ կողմից, չեն յերևում, բայց հնարավոր է պատկերել և այդ նիստերը, կիրառելով հատուկ գծեր—շտրիխային գծեր—անտեսանելի կողերը տեսնելու համար: Աջից յերևացող տեսքը պարունակում է այդպիսի մի գիժ. նա պատկերում է 2—2 կողը:

Անտեսանելի կողերը պատկերելու համար գործածվող շտրիխային գծերը յերկու անգամ ավելի բարակ են տանում, քան տեսանելի կողերը պատկերող հոժ գծերը: Շտրիխները յերկար չեն վերցնում, բայց նրանք պետք է 4 մմ-ից կարճ չլինեն. շտրիխների միջակայքները վերցնում են 1-ից մինչև 2 մմ, նայած թե շտրիխն ինչ յերկարություն ունի:


187 ա գծագրի վրա տեսքերի դասավորության մեջ պահպանված են նույն պարտադիր կանոնները, ինչ վոր 186 ա գծագրի վրա. աջից և ձախից յերևացող տեսքերը գլխավոր տեսքի հետ գտնվում են միևնույն մակարդակի վրա, իսկ վերևից յերև-վացող տեսքը գտնվում է գլխավոր տեսքի տակը, առանց դեպի վորևե կողմ տեղափոխվելու:

Բացի այդ, կարելի յե նշել ելի մի կանոն. ձախից յերևացող տեսքը դնում են գլխավոր տեսքից դեպի աջ, իսկ աջից յերևացող տեսքը—դեպի ձախ: Տեսքերի այդպիսի դասավորությունը (գձ. 186 ա և 187 ա) անվանում են յեվրոպական կամ գերմանական ձևի դասավորություն:

Այսպիսով, գծագիրը կազմված է մի քանի պատկերից, վորոնք դասավորված են վորոշ կանոններով: Դժագրի վրա պատկերված տեսքերով պետք է առարկան պատկերացնել վորպես ամբողջութուն. հասարակ յերկրաչափական մարմինների դեպքում դժվար չէ այդ անել: Պետք է նկատի ունենալ, վոր բոլոր առարկաները, նույնիսկ ամենաբարդերը, կազմվում են հիմնական յերկրաչափական մարմինների, մակերևույթների ու գծերի ձևերից. այդ պատճառով պետք է գիտենալ վերջինների հատկութունները և գծագրի վրա պատկերելը:

§ 30. ԱՌԱՆՅՎԱՅԻՆ ԳԾԵՐ

188-րդ գծագրի վրա տված են ուղղանկյուն զուգահեռանիստերի, յեռանկյուն պրիզմայի, գնդի և ուղիղ շրջանային գլանի ու կոնի պատկերները (գլխավոր տեսքը և վերևից յերևացող




Գծ. 188

տեսքը): Գլանի, կոնի և գնդի պատկերները վրա տարված են նաև շրջանագծերի կենտրոնները վորոշող կենտրոնական գծերը և առանցքային գծերը, վորոնք անցնում են գլխավոր տեսքերով:

Գլանն ու կոնը պատկանում են այսպես կոչված պտտման մարմինների թվին: Պտտման մարմինների համար, վորոնցից ամենապարզերը ուսումնասիրվում են յերկրաչափության մեջ, բնորոշ է առանցքի առկայությունը (գծ. 189), վորի շուրջը պտտվում է այսպես կոչված ծնիչ գիծը, վորի շարժումից ստացվում է պտտման մարմնի մակերևույթը: Յեթե գծագրի վրա

պատկերում են պտտման մարմին, ապա պարտադիր է պատկերել և նրա յերկրաչափական առանցքը համապատասխան պրոյեկցիայի վրա:

Այսպիսով 188-րդ գծագրի վրա գլանի և կոնի գլխավոր տեսքերի վրա տարված առանցքային գծերն ամենից առաջ համապատասխանում են նրանց յերկրաչափական առանցքներին (տես 189-րդ գծագրի վրա  $O'O$  և  $SO$  ուղիղները): Բայց, բացի դրանցից, այդ առանցքային գծերը գլանի և կոնի գլխավոր տեսք ներկայացնող ուղղանկյան և յեռանկյան մեջ (գծ. 188) հանդիսանում են համաչափության առանցքներ:




Գծ. 189

Յեթե գծագրի վրա առանցքային գիծը ծառայում է միայն իբրև տված պատկերի համաչափության առանցք, իսկ ինքը՝ պատկերվող առարկան պտտման մարմին չէ և, հետևաբար, յերկրաչափական առանցք չունի, ապա առանցքային գծեր տանելը պարտադիր չէ: Այդ պատճառով 188-րդ գծագրի վրա գլանի գլխավոր տեսքը պատկերող ուղղանկյան մեջ առանցքային գիծը տարված է, իսկ զուգահեռանիստի գլխավոր տեսքը պատկերող ուղղանկյան մեջ չի տարված, չնայած այդ պատկերն ունի համաչափության առանցքներ:


188-րդ գծագրի վրա գլանի և կոնի պատկերները կազմված են յերկու տեսքերից այնպես, վոր վերևից յերևացող տեսքը (շանագիծը) տեղավորված է գլխավոր տեսքի տակը: Այստեղ շրջանագծի կենտրոնական գծերից մեկը կազմում է գլխավոր տեսքի առանցքային գծի շարունակությունը: Ուրեմն առանցքային և կենտրոնական գծերն ոժանդակում են գծագրի վրա տեսքերի դասավորության կանոնները պահպանելուն:

Յեթե առանցքային գծերը պետք է տանել, ապա նրանցից էլ սկսում են գծագրումը՝ նշելով նաև կենտրոնական գծերը: Նույնպես, յեթե ցանկալի յի ունենալ համաչափության առանցքները (չհազա կառուցումների հարմարության համար), ապա այդ գծերը ևս պետք է տանել հենց սկզբից:


Առանցքային գծերը տանում են բարակ շարիխային—կետագծային գծերի ուղղությամբ, ինչպես այդ ցույց է տված § 62-ում: 190-րդ գծագրի վրա տված է մի օրինակ, չեք բառանցքա-



Գծ. 190



Գծ. 191



Գծ. 192

յին գիծը տանելը պարտադիր է, քանի վոր պատկերված է պանային անցք ունեցող մի գլան, այսինքն պատկերված է պտտման մարմին:

191-րդ գծագրի վրա տված է 192-րդ գծագրի վրա պատկերված առարկայի գծագիրը. դիտարկելով տեսքը ներկայացնում է համաչափության մեկ առանցք ունեցող պատկեր, իսկ վերևից չերևացող տեսքը— համաչափության չերկու առանցք ունեցող պատկեր:

**Այսպիսով.**

ա) առանցքային գծերը պետք է տանել պտտման մարմինների համապատասխան պատկերների վրա.

բ) առանցքային գծեր կարող են տարվել և մոշ պտտման մարմիններ պատկերելիս, բայց միայն այն պայմանով, վոր տեսքերը ներկայացնում են գոնե համաչափության մեկ առանցք ունեցող պատկեր:

**§ 31. ՌԻՂԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՅԵԿՏՈՒՄ**

Տեսքերը, վորոնցից կազմվում է գծագիրը, ստացվում են հարթության վրա ուղղանկյուն պրոյեկտման յեղանակով:

Ա կետի ուղղանկյուն պրոյեկցիան P հարթության վրա (գծ. 193)—կոչվում է a կետը, վորտեղ A կետից P հարթության իջնցրած ուղղահայացը հասում է այդ հարթությանը.


AB հատվածի ուղղանկյուն պրոյեկցիան P հարթության վրա (գծ. 194) հանդիսանում է AB հատվածի ծայրակետերի ուղղանկյուն պրոյեկցիաների միջև գտնվող ab հատվածը: Կարելի է պատկերացնել, վոր AB հատվածի բոլոր կետերից տարված են ուղղահայացներ P հարթությանը. այդ բոլոր ուղղահայացները գտնվում են մի հարթության մեջ:



Գծ 93

Այդ հարթությանն անվանում են պրոյեկտող հարթություն: Պրոյեկտող հարթությունը հատվելով P հարթության հետ՝ տալիս է ուղիղ գիծ. հենց այդ ուղիղի վրա է գտնվում AB հատվածի պրոյեկցիան—ab հատվածը:


ABCD հարթ պատկերի ուղղանկյուն պրոյեկցիան P հարթության վրա (գծ. 195) հանդիսանում է AB, BC, CD և DA կողմերի ուղղանկյուն պրոյեկցիաներով սահմանագծված abcd պատկերը: Մարմնի ուղղանկյուն պրոյեկցիան կառուցելու համար պետք է կառուցել այդ մարմինը սահմանագծող մակերևույթի բոլոր ուղղանկյուն պրոյեկցիաները, և այդ իր հորթին վերածվում է կետերի և գծերի հատվածների ուղղանկյուն պրոյեկցիաների կառուցման Որինակ (գծ. 196), պրիզմայի ուղղանկյուն



Գծ. 194



Գծ. 195



Գծ. 196

պրոյեկցիան ստացվում է նրա բոլոր նիստերի ուղղանկյուն պրոյեկցիաների կառուցումով, իսկ քանի վոր յուրաքանչյուր նիստը ներկայացնում է մի պատկեր, վորը սահմանափակված է ուղիղ գծերի հատվածներով և կետերով—գագաթներով, ապա գիծը վերածվում է A, B, C, D, E, F, G, H կետերի և այդ կետերը միացնող հատվածների ուղղանկյուն պրոյեկցիաների կա-

ուսցման: Իրականում ուղիղի (գծ. 194), պատկերի (գծ. 195) և մարմնի (գծ. 196) ստացված պրոյեկցիաները ներկայացուում են ահողջ AB ուղիղի պրոյեկցիան, և վոչ թե միայն նրա A և B ծայրահետերի պրոյեկցիաները, ամբողջ ABCD պատկերի պրոյեկցիան, և վոչ թե միայն նրա գագաթների և կողմերի պրոյեկցիաները, ամբողջ մարմնի պրոյեկցիան, և վոչ թե միայն գագաթների, կողերի և նիստերից վորեև մեկի պրոյեկցիան:

Այսպիսով ուղղանկյան պրոյեկցիան ստանալու համար պետք է պրոյեկտորը յուրաքանչյուր կետից իջեցնել ուղղահայաց՝ հարթության վրա: Այն հարթությունը, վորի վրա ստանում են պրոյեկցիաները, կոչվում է պրոյեկցիաների հարթություն. հարթությանը տարած ուղղահայացը կոչվում է պրոյեկտոր ուղիղ, կամ պրոյեկտոր ճառագայթ: Տված հարթության վրա պրոյեկտոր բոլոր ճառագայթները զուգահեռ են իրար, քանի վոր նրանք ուղղահայաց են միևնույն հարթության: Յեթև պատկերացնենք, վոր այդ բոլոր ճառագայթները գալիս են մի ընդհանուր կետից (պրոյեկցիաների կենտրոն), ապա պետք է ընդունել, վոր պրոյեկցիաների կենտրոնն այնքան հեռու յե գտնվորմ, վոր բոլոր ճառագայթները զուգահեռ են գարձել—ինչպես ասում են՝ կենտրոնն անվերջ հեռավորության վրա յե գտնվում:

Ուղղանկյուն պրոյեկցիան այլ կերպ կոչվում է օրթոգոնալ պրոյեկցիա. օրթոգոնալ՝ բառը կազմված է հին հունարեն բառերից և համապատասխանում է ուղղանկյուն» բառին:


§ 32. ՈՒՂՂԱՆԿՈՒՆ ՊՐՈՅԵԿՏԻՍՆԵՐ ՅԵՐԿՈՒ ՅԵՎ ՅԵՐԵՔ  
ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ:

Մեկ պրոյեկցիան բավական չէ, վորպեսզի լրիվ պատկերացում կազմենք տված առարկայի մասին: Այդ պատճառով առարկան պրոյեկտում են պրոյեկցիաների յերկու կամ յերեք հարթությունների վրա:


Պրոյեկցիաների հարթությունները մեկը մյուսի հետ ուղիղ անկյուն են կազմում: Հարթություններից մեկը հորիզոնական դիրք է գրավում (պրոյեկցիաների հորիզոնական հարթություն, նշանակվում է H տառով): Մյուս յերկու հարթություններն ուղղաձիգ կլինեն, քանի վոր այդ հարթություններն ուղղահայաց

են H հարթության. նրանցից մեկը կոչվում է պրոյեկցիաների ճակատի հարթություն (նշանակվում է V տառով), իսկ մյուսը՝ կողմնային հարթություն (նշանակվում է N տառով):


197-րդ գծագրի վրա պատկերված է առարկայի պրոյեկտումը յերկու հարթության վրա—հորիզոնական և ուղղաձիգ—ճակատի



Գծ. 197



Գծ. 198



Գծ. 199

հարթության վրա: Այն առարկան, վորի գծագիրն ուղղում են ստանալ, տեղավորում են պրոյեկցիաների հարթության միջև կազմված անկյան մեջ: Հարթությունները հատման դիմը կոչվում է պրոյեկցիաների առանցք. Տված յերկու հարթություններից յուրաքանչյուրի վրա պրոյեկտումը կատարվում է այնպես, ինչպես ցույց է տված § 31-ում: Այն պրոյեկտող ճառագայթները, վորոնց միջոցով ստանում են հորիզոնական պրոյեկցիան, ուղղահայաց են H հարթության. V հարթության վրա պրոյեկտելու համար պետք է վերցնել այդ հարթությանն ուղղահայաց ճառագայթներ:


Ստացված պրոյեկցիաները գծագրի հարթության վրա պատկերելու համար պատկերացնում են, վոր պրոյեկցիաների հարթությունների միջև կազմված անկյունը բացված է մինչև  $180^\circ$ , այսինքն պրոյեկցիաների հարթությունները համատեղվում են 198-րդ գծագրի վրա ցույց է տված անկյունը բաց անելը: Այս դեպքում հորիզոնական հարթությունը տեղավորվում է ճակատի հարթության տակը, հետևաբար, հարթությունների վրա ստացված պրոյեկցիաներն են կդասավորվեն մեկը մյուսի տակ այնպես, ինչպես այդ պատկերված է 199-րդ գծագրի վրա: Յերկու պրոյեկցիարեն իրար հետ կապված են պրոյեկցիաների առանցքին ուղղահայաց ուղիղներով. յուրաքանչյուր կետի ուղղաձիգ պրոյեկցիային համապատասխանում է հորիզոնական պրոյեկցիայի մի կետ, վորը գտնվում է պրոյեկցիաների առանցքին տարած ընդհանուր ուղղահայացի վրա:

Պետք է նկատի ունենալ, վոր տեխնիկական գծագրերի վրա պրոյեկցիաների առանցքն ու պրոյեկցիաներն իրար հետ կապող ուղիղները չեն նշվում, բայց պրոյեկցիաների վորոշակի դասավորությունը մեկը մյուսի նկատմամբ պահպանվում է վորպես պարտադիր պահանջ:


Յեթև իրար հետ բաղդատենք 199-րդ և 191-րդ գծագրերը, ապա հեշտ է տեսնել, վոր գլխավոր տեսքը (գծ. 191) նույն դիրքն է գրավում, ինչ վոր ճակատի պրոյեկցիան (գծ. 199), իսկ վերևից յերևացող տեսքը (գծ. 191) նույն դիրքն է գրավում ինչ վոր հորիզոնական պրոյեկցիան (գծ. 199): Ուրեմն տեսքերի դասավորության՝ § 29-ում ցույց տված կանոնները բղխում են ուղղանկյուն (որթոգոնալ) պրոյեկտման յեղանակից:

200-րդ գծագրի վրա պատկերված է առարկայի պրոյեկտումը յերեք հարթության վրա: Պրոյեկցիաների յերրորդ հարթությունը (կողմնային հարթություն) այս դեպքում ալ կոչում է վերցված: Հարթությունները բաց անելիս (փակելիս) կողմնային հարթությունը  $90^\circ$  յես են ծալում (ուղղում են) գծ. 200-ում սլաքով ցույց տված ձևով: Կողմնային պրոյեկցիան, այսինքն կողմնային հարթության վրա ստացված նկարը, նույն մակարդակի վրա յե դուրս գալիս գլխավոր տեսքի պրոյեկցիայի հետ:

Ինյոր յերեք պրոյեկցիաների դասավորությունն ու նրանց միջև յեղած կապը ցույց են տված 201-րդ գծագրի վրա: Պրոյեկցիաների համատեղված հարթություններն իրարից անջատված



Գծ. 200



Գծ. 201

են յերկու փոխուղղահայաց ուղիղներով. X առանցքը ճակատի հարթությունն անջատում է հորիզոնական հարթությունից, Z առանցքը ճակատի հարթությունն անջատում է կողքի հարթությունից, հորիզոնական հարթությունը կողքի հարթությունից անջատող Y առանցքը (գծ. 200) յերկու անգամ է պատկերվում, վորովհետև հարթությունները փակելիս այդ առանցքը կարծեք թե ըստ յերկարության բաժանվում է յերկու մասի:

201-րդ գծագրի վրա կողքի պրոյեկցիան ներկայացնում է ձախից յեղվացող տեսք. այդ յերևում է պրոյեկտող ճառագայթների ուղղությունից (գծ. 200): Գծագրերը կազմված է 3 տեսքից

(գծ. 201) — գլխավոր տեսքը, տեսքը վերինից և տեսքը ձախից՝ Տեսքերը դասավորված են § 29-ում ցույց տված կանոնների համաձայն. վերինից յերեացող տեսքը գտնվում է գլխավոր տեսքի տակ, ձախից յերեացող տեսքը — գլխավոր տեսքի աջ կողմում՝ Տեսքերի հենց այդպիսի դասավորությունն է ստացվում, յերբ պրոյեկցիաների հարթությունների կազմած անկյունները բաց են անում (գծ. 200 և 201):

Յերբ պրոյեկցիաների հարթությունները համատեղում են, այսինքն յերբ պրոյեկցիաների հարթություններով կազմված անկյունները բաց են անում, ապա ինքը պատկերվող առարկան կարծես թե հեռացվում է, դուրս է ընկնում բացված անկյան միջից: Նրա տեղը մնում են պրոյեկցիաներ, և ահա այդ պրոյեկցիաներով, կամ ինչպես պայմանավորվել են նրանց անվանել գծագրի վրա, տեսքերով — պետք է պատկերացնել պատկերվող առարկան:

§ 33. ԿԵՏԻ ՈՒՂՂԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՅԵԿՏԻԱՆԵՐԸ


202-րդ գծագրի վրա ցույց է տված կետի պրոյեկցիաների կառուցումը յերեք հարթությունների վրա, 203-րդ գծագրի վրա ցույց է տված պրոյեկցիաների դասավորությունը՝ հարթությունները համատեղելուց հետո: Այդպիսի պատկերը եպյուր<sup>1)</sup> է կոչվում: Բազդատելով եպյուրը (գծ. 203) տարածական պատկերի հետ (գծ. 202), տեսնում ենք, Վոր ձախատի  $\alpha$  պրոեկցիայի հեռավորությունն  $X$  առանցքից՝ հավասար է  $A$  կետի  $Aa$  հեռավորությանը  $H$  հարթությունից:  $a$  հորիզոնական պրոյեկցիայի հեռավորությունը  $X$  առանցքից՝ հավասար է  $A$  կետի  $Aa$  հեռավորությանը  $V$  հարթությունից:

Նույնպես և  $a''$  կողքի պրոյեկցիայի դիրքով կարելի յե դատել կետի դիրքի մասին  $H$  և  $V$ -ը հարթությունների նկատմամբ  $a''$  պրոյեկցիայի հեռավորությունն  $Y_1$  առանցքից՝ հավասար է  $A$  կետի  $Aa$  հեռավորությանը հորիզոնական հարթությունից,  $a''$  պրոյեկցիայի հեռավորությունը  $Z$  առանցքից՝ հավասար է  $A$  կետի հեռավորությանը ձախատի հարթությունից:


<sup>1)</sup> Եպյուր — ֆրանսերեն épure բառից է, Վոր նշանակում է գծագիր պրոյեկտ:

203-րդ գծագիրը ցույց է տալիս, թե ինչպես պետք է կատարել  $a''$  պրոյեկցիայի կառուցումը մյուս յերկու,  $a$  և  $a'$  պրոյեկցիաների ոգնությունում:  $a$  կետից տանում են ուղղահայաց  $Y$  առանցքին,  $a_y$  կետը  $O$  կենտրոնով գծած ուղղով փոխադրում են  $Y_1$  առանցքի վրա և կանգնեցնում ուղղահայաց  $Y_1$  առանցքին: Յեթե  $a'$  կետից իջնենք ուղղահայաց  $Z$  առանցքին և շարունակենք, ապա յերկու ուղղահայացների հատման կետում կստանանք  $a''$  կետը:

Եպյուրի վրա մնում են միայն կետի պրոյեկցիաները. այդ պրոյեկցիաներով պատկերացնում ենք կետի դիրքը տարածությունում մեզ: Յեթե պատկերում են  $A$ -ով նշանակված կետը, ապա նրա պրոյեկցիաները նշանակում են  $a$ ,  $a'$ ,  $a''$  (գծ. 202—205):




Գծ. 203




Գծ. 203

Ընդհանրապես, յեթե տված են  $a$ ,  $a'$ ,  $a''$  պրոյեկցիաները, ապա զբաղվելով հասկանում են  $A$  կետը և առում  $A$  կետի պրոյեկցիաները, չնայած եպյուրի վրա վերցված են միայն  $a$ ,  $a'$ ,  $a''$  կետերը: Սովորաբար եպյուրը պարզեցնում են (գծ. 204). հարթությունների համար շրջանակներ չեն գծում և չեն գնում հարթությունների տառային նշանակումները, առանցքների վրա ստացված հատման կետերը չեն նշանակվում և յերբեմն առանցքներն էլ տառերով չեն նշանակվում:  $a_y$  կետը  $Y_1$  առանցքի վրա փոխադրելու համար կարելի յե վարվել վոշ միայն աչնպես, ինչ-




Գծ. 204

Գծ. 205



Գծ. 206



Գծ. 207


պես ցույց է տված 204-րդ զծագրի վրա, այլև այնպես, ինչպես ցույց է տված 205 զծագրի վրա (այդ հարմար է սեյալինով աշխատելու ժամանակ): 206-րդ զծագրի վրա պատկերված են այն դեպքերը, յերբ A կետը գտնվում է V հարթության վրա, B կետը՝ H հարթության վրա, C կետը՝ W հարթության վրա և D կետը՝ X առանցքի վրա:

Նմանք. Պահանջվում է նեխ կտնի զագաթի պրոյեկցիաները յեվ A կետի նորդոնպահ ու կողմի պրոյեկցիաները (զծ. 207):

207-րդ զծագրի ձախ կողմում տված է առաջադրությունը, իսկ աջում — լուծումը: Պետք է ուշադրություն դարձնել a'' պրոյեկցիայի դիրքին, վորը կախում ունի a' պրոյեկցիայի տված դիրքից. նախ պետք է գտնել a պրոյեկցիան, իսկ այնուհետև a և a' պրոյեկցիաների միջոցով՝ a'' պրոյեկցիան:

### § 34. ՈՒՂԻՂԻ ՈՒՂԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՅԵԿՅԱՆՆԵՐԸ

Յեթև ուղիղը զուգահեռ է պրոյեկցիաների հարթության (զծ. 208), ապա այդ ուղիղի հատվածի պրոյեկցիան հավասար է և զուգահեռ պրոյեկտիող հատվածին ( $ab = AB$ ): Այստեղ պրոյեկտող ուղիղների հատվածները հավասար են իրար ( $Aa = Bb$ ): Տված հարթության վրա գտնվող ուղիղի հատվածը համընկ-



Գծ. 208

Գծ. 209

Գծ. 210


Գծ. 211

նում է յուր պրոյեկցիայի հետ՝ այդ հարթության վրա (զծ. 209): Այդ՝ պրոյեկցիաների հարթության զուգահեռ ուղիղի պրոյեկտման մասնավոր դեպքն է.  $ab = Ab$ ,  $Aa = O$  և  $Bb = O$ :


Յեթև ուղիղը ուղղահայաց է պրոյեկցիաների P հարթության (զծ. 210), ապա այդ ուղիղի վերև հատվածի պրոյեկցիան տվյալ հարթության վրա ներկայացնում է մի կետ:

211-րդ գծագրի վրա ցույց ե տված այն AB հատվածի պրոյեկցիան, վորը պրոյեկցիաների տվյալ հարթությանը վոչ զուգահեռ ե ե վոչ ել ուղղահայաց: Այս դեպքում  $ab$  պրոյեկցիան փոքր ե AB հատվածից. պրոյեկտող ուղիղների հատվածները նույնպես հավասար չեն,  $Bb > Aa$ : Պրոյեկցիայի մեծությունը կախում ունի պրոյեկտող հատվածի թեքությունից պրոյեկցիաների տված հարթության նկատմամբ:

Քննարկած դեպքերից կարելի յի այն յեղրակացության հանգել, վոր, նայած պրոյեկտող հատվածի դիրքին պրոյեկցիաների հարթության նկատմամբ, հատվածի պրոյեկցիան կլինի ուղիղ գծի հատված, կամ կեռ: Ընդհանուր առմամբ պրոյեկցիան



Գծ. 212




Գծ. 213


փոքր ե պրոյեկտող հատվածի իրական մեծությունից ե հավասար ե նրան միայն այն դեպքում, յերբ ուղիղի հատվածը զուգահեռ ե պրոյեկցիաների հարթությանը կամ գտնվում ե այդ հարթության մեջ:

212-րդ գծագրի վրա ցույց ե տված AB հատվածի պրոյեկտումը պրոյեկցիաների յերեք հարթությունների վրա, ընդ վորում AB հատվածը պրոյեկցիաների հարթությունից ե վոչ մեկին ել վոչ զուգահեռ ե ե վոչ ել ուղղահայաց: Տվյալ դեպքում տված ուղիղի մասին ասում են, վոր այդ ուղիղն ընդհանուր դիրք ունի:

Ընդհանուր դիրքի ուղիղի եպյուրը (գծ. 213) ցույց ե տալիս այն կապը, վոր գոյություն ունի պրոյեկցիաների միջև: Քանի վոր ուղիղի հատվածը վորոշվում ե նրա յերկու կետերով, ապա այդ հատվածի յուրաքանչյուր պրոյեկցիան նույնպես վորոշվում ե յերկու կետերով այն ե՝ պրոյեկտող հատվածի վրա վերցրած յերկու կետերի պրոյեկցիաներով: Այսպիսով հատվածի



Գծ. 214



Գծ. 215

պրոյեկցիայի կառուցումը վերածվում ե նրա յերկու կետերի (որինակ ծայրակետերի) պրոյեկցիաների կառուցման, ինչպես այդ տրված ե 212-րդ ե 213-րդ գծագրի վրա:

Խնդիր 1. Պահանջվում ե ուղիղի հատվածի տվյալ յերկու պրոյեկցիաներով (գծ. 214) կառուցել այդ հատվածի յերեռդ պրոյեկցիան:

Լուծումը ցույց ե տված 215-րդ գծագրի վրա. պետք ե անցկացնել Z առանցքը ե ցույց տալ Y առանցքի յերկու դիրք — OY<sub>1</sub>-ը՝ համատեղված H հարթության համար, ե OY<sub>2</sub>-ը՝ համատեղված W հարթության համար: Այնուհետև կառուցում են A ե B կետերի կողքի պրոյեկցիաները՝ նրանց a, a' ե b, b' պրոյեկցիաներով: Կառուցումը ցույց ե տրվել 203-րդ գծագրի վրա ե պարզ ե 215-րդ գծագրից:

Եպյուրով պետք ե ներկայացնել AB հատվածի դիրքը տարածության մեջ: AB հատվածը զուգահեռ ե V հարթության: Այդ հետևում ե այն բանից, վոր ab-ն զուգահեռ ե X առանցքին ե  $aa_0 = bb_0$ , այն A ե B կետերը V հարթության վրա պրոյեկտող ուղիղների հատվածները հավասար են իրար: Հետևաբար A ե B կետերը հավասար հեռավորության վրա յեն գտնվում V հար-


թությունից, այսինքն AB հատվածը գուգահեռ է այդ հարթության:

Եւզդիտի զեպքերում  $a'b'$  հագասար է  $AB$ -ին: Այդ նշանակուած է, վոր 215-րդ գծագրի եպյուրի վրա յերևում է  $AB$  հատվածի իրական մեծությունը, վորը չկար, որինակ, 213-րդ գծագրի կպուրի վրա: Յեթե հատվածը գուգահեռ է պրոյեկցիաների հարթություններից մեկնում եկին, ապա նա այդ հարթության վրա պրոյեկտվում է յուր բնական մեծությամբ, իսկ մյուս հարթությունների վրա այդ հատվածի պրոյեկցիաները պրոյեկցիաների ստանդքներին գուգահեռ են:


Մագր 3 Պատկերում է աստեղի նշանակի պրոյեկցիաներ սլած եպյուրի վրա (գծ. 216): Նկար (գծ. 217) սլած է բազիստայան համար:

$AB$ ,  $CD$  և  $EF$  կողերն ուղահայաց են  $H$  հարթության, նրա վրա պրոյեկտվում են վորպես կետեր:  $V$  և  $W$  հարթությունների վրա այդ կողերը պրոյեկտվում են կողերին հավասար հատվածներով (որինակ՝  $a'b' = a''b'' = AB$ ):

$H$  հարթության գուգահեռ  $AC$  կողն այդ հարթության վրա տալիս է  $AC$ -ին հավասար  $ac$  պրոյեկցիան. բայց  $V$  և  $W$  հար-



Գծ. 216



Գծ. 217


թությունների վրա  $AC$  կողի պրոյեկցիաները փոքր են նրա իրական մեծություննց ( $a'c' < ac$ ,  $a''c'' < ac$ ):

Նորից հաստատվում է, վոր հատվածն ստանդ աղճաաման պրոյեկտվում է միայն այն դեպքում, յորք նա գուգահեռ է այն հարթության, վորի վրա պրոյեկտվում է, կամ գտնվում է այդ հարթության մեջ:

Խնդիր 3. Պատկերում է եռեկ կոնի այն ձևիցների պրոյեկցիաները, վորոնք անցնում են հիմքի  $A$ ,  $B$ ,  $C$  յեվ  $D$  կետերով: Այդ կետերը սլած են իրենց հորիզոնական պրոյեկցիաներով (գծ. 218):

Նշում են կոնի գագաթի  $s$ ,  $s'$  և  $s''$  պրոյեկցիաները: Այն նուեռև ճակատի և կողքի պրոյեկցիաների վրա նշում են  $a$ ,  $b'$ ,  $c'$ ,  $a''$ ,  $b''$ ,  $c''$  և այլն կետերը:

Ծնիչների պրոյեկցիաներն ստացվում են, յերբ գագաթի պրոյեկցիաները միացնում են  $A$ ,  $B$ ,  $C$  և  $D$  կետերի պրոյեկցիաների հետ: Յեթե յենթադրեք, վոր կոնն անթափանցիկ է, ապա



Գծ. 218

$SD$  ձնիչը չի տեսնվում, յեթե կոնին նայենք ճակից: Այդ պատճառով կոնի կողքի պրոյեկցիայի վրա  $s''d''$  պրոյեկցիան ցույց է տալիս շարիխային գծերով:


§ 35. ԿԵՏՆ ՈՒՂԻՂԻ ՎՐԱ: ՀԱՏՎՈՂ, ԶՈՒԳԱՀԵՌ ՅԵՎ ԽԱՉՎՈՂ ՈՒՂԻՂՆԵՐ

Յեթե կետը գտնվում է ուղիղի վրա, ապա կետի պրոյեկցիաները պետք է գտնվեն ուղիղի համապատասխան պրոյեկցիաների վրա: Դրա հիմնավորումը կարելի յե գտնել 212-րդ գծագրի վրա:  $A$  և  $B$  կետերը պատկանում են  $AB$  հատվածին, նրանց

պրոյեկցիաները ( $a, a', a'', b, b', b''$ ) պատկանում են  $AB$  հատվածի համապատասխան պրոյեկցիաներին:

**Խնդիր** Պահանջվում է  $AB$  հատվածի վրա գտնել այն կետը, վոր  $H$  հարթությանից 15 մմ հեռավորության վրա չի գտնվում (գծ. 219):

Յեթե վորոնելի կետը պետք է 15 մմ հեռավորության վրա գտնվի  $H$  հարթութունից, ապա այդ կետի ճակատի պրոյեկցիան նույնքան հեռավորութուն պետք է ունենա  $X$  առանցքից: Այդ պատճառով  $X$  առանցքից 15 մմ բարձր գտնվող վորևե կետից տանում են այդ առանցքին զուգահեռ: Մտանում են  $k'$  կետը:



Գծ. 219

Այդ կետը  $AB$  հատվածի վրա գտնվող և  $H$  հարթութունից 15 մմ հեռավորութուն ունեցող կետի պրոյեկցիան է  $K$  կետի հորիզոնական պրոյեկցիան ստանալու համար պետք է  $k'$  կետից իջեցնել ուղղահայաց  $X$  առանցքի վրա և շարունակել մինչև  $ab$  պրոյեկցիայի հետ հատվելը:

220-րդ գծագրի վրա  $K$  կետից տարված են  $AB$  և  $CD$  հատվածները:  $K$  կետն այդ հատվածների համար ընդհանուր է, նրա պրոյեկցիաները գտնվում են տված ուղիղներից չուրաքանչյուրի վրա: Բայց յեթե յերկու հատված մեկ ընդհանուր կետ ունեն, այդ նշանակում է, վոր հատվածներն այդ կետում հատվում են: Այդպիսով տարածության մեջ յերկու հատվածների հատման ցուցանիշ հանդիսանում է եպյուրի վրա նրանց համանուն<sup>1)</sup>


1) Համանուն առիով հասկանում են ճակատի պրոյեկցիան ճակատի պրոյեկցիայի հետ, հորիզոնական պրոյեկցիան՝ հորիզոնական պրոյեկցիայի հետ:

պրոյեկցիաների հատումը, ընդվորում պրոյեկցիաների հատման կետերը հանդիսանում են յերկու հատվածների ընդհանուր կետի պրոյեկցիաները:


Այն հատվածները, վորոնց եպյուրը տված 221-րդ գծագրի վրա, չեն հատվում, վորովհետև նրանց պրոյեկցիաների հատման կետերը չեն հանդիսանում միևնույն կետի պրոյեկցիաները (պրոյեկցիաների հատման կետերը չեն գտնվում  $X$  առանցքին տարած միևնույն ուղղահայացի վրա):

Իրար հետ չեն հատվում նաև 222-րդ գծագրի վրա պատկերված հատվածները. նրանց համանուն պրոյեկցիաները բոլորովին չեն հատվում: Յեթե հատվածները համանուն պրոյեկցիաները չեն հատվում, ապա իրենք՝ հատվածները տարածության մեջ զուգահեռ են: Ուրեմն տարածության մեջ հատվածների զուգահեռության ցուցանիշ հանդիսանում է եպյուրի վրա նրանց համանուն պրոյեկցիաների զուգահեռութունը:


Այն ուղիղները, վորոնք վոչ զուգահեռ են և վոչ էլ հատվում են, կոչվում են խաչվող ուղիղներ:



Գծ. 220



Գծ. 221




Գծ. 222

§ 36. ՀԱՏՎԱԾԻ ԻՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՊՏՏՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՈՎ ԿՏՆԵԼԸ

Յեթե հատվածը զուգահեռ է պրոյեկցիաների հարթություններից դոնե մեկին, ապա նա այդ հարթության վրա պրոյեկտվում է բնական մեծությունը (գծ. 208, 215): Այստեղից կարելի չէ յեզրակացնել, վոր հատվածի իրական մեծությունն ստանալու համար պետք է այդ հատվածը դնել պրոյեկցիաների հարթություններից մեկին զուգահեռ:

223-րդ գծազրի վրա պատկերված է AB հատվածի պտտումը միջին V հարթության զուգահեռ դառնալը: Եպյուրի վրա կրկնված է նույնը, ինչ վոր պատկերված է 223-րդ գծազրի վրա (գծ. 224): B կետը շարժվում է a կետից, վորպես կենտրոնից,




տարած շրջանագծի ուղիղով. ուրեմն B կետի պտտման համար շառավիղ հանդիսանում է aB հատվածը, այդ հատվածը հավասար է AB հատվածի հորիզոնական պրոյեկցիային: Եպյուրի վրա (գծ. 224) ab հատվածը—AB հատվածի հորիզոնական պրոյեկցիան—պտտված է a կետի շուրջը միջին X առանցքին զուգահեռ դառնալով: Բայց հորիզոնական պրոյեկցիայի այդպիսի դիրքը համապատասխանում է AB հատվածի զուգահեռության ճակատի հարթությանը (V): Մնում է գտնել AB հատվածի ուղղաձիգ պրոյեկցիայի նոր դիրքը: Այդ հեշտ է կատարել, յեթե նկատենք, վոր b կետի պտտման ժամանակ b' կետը շարժվում է առանցքի ուղղությունը, առանց բարձրանալու և առանց իջնելու: Ուրեմն b' կետի նոր դիրքը կարելի չէ գտնել, յեթե b<sub>1</sub> կետից ուղղա-

հայաց իջեցնենք X առանցքին. b<sub>1</sub>' կետը կլինի ճակատի պրոյեկցիայի դիրքը՝ հատվածը միջին V հարթությանը զուգահեռ դառնալը պատելուց հետո: Այսպիսի դեպքում a'b<sub>1</sub>' հատվածը ներկայացնում է AB հատվածի ճակատի պրոյեկցիայի նոր դիրքը և a'd<sub>1</sub>' = AB:

225-րդ գծազրի վրա կառուցումը կրկնված է այն դեպքի համար, յերբ հատվածի ծայրը չի հասնում միջին H հարթությանը: b' կետը շարժվում է միայն X առանցքին զուգահեռ առանց բարձրանալու և առանց իջնելու: Այդ համապատասխանում է տարածության մեջ B կետի H հարթությանը զուգահեռ շարժվելուն (223-րդ գծազրի վրա վերցված է սահմանային դեպքը—B կետը գտնվում է H հարթության մեջ):

Խնդիր 1. Պահանջվում է սլաք եպյուրով կառուցել բուրգի մակերևույթի բացվածքը (գծ. 226):

Յեռանխառ բուրգի մակերևույթի բացվածքը կազմված է չորս յեռանկյուններից. նրանցից մեկը ներկայացնում է բուրգի




հիմքը, իսկ մնացած յերեքը—կողմնային նիստերը: Բուրգի հիմքը ներկայացնող յեռանկյունն անմիջապեսորեն կարելի չէ վերցնել հորիզոնական պրոյեկցիայից (abc յեռանկյունը): Կողմնային նիստերը ներկայացնող յեռանկյունները պրոյեկցիաների յերկու հարթությունների վրա պրոյեկտվում են ազատումով, վորովհետև այդ հարթությունների նկատմամբ թեք դիրք ունեն: Յեթե վորոշենք բուրգի կողերի իրական մեծությունները, ապա կարելի չէ կառուցել կողմնային նիստերը ներկայացնող յեռանկյուն-

ներք: Քանի վոր տված բուրգը կանոնավոր և (հիմքը կանոնա-  
վոր չեռանկյուն և և բարձրութունն անցնում և հիմքի կենտ-  
րոնով), ապա բավական և գտնել միայն մեկ կողի իրական մե-  
ծութունը, ասենք թե SA-ինը (sa, s'a'): Կուժումը տված և  
227-րդ գծագրի վրա:

Խնդիր Զ. Պահանջվում և սված գծագրով վարձել ուղիղների հասվածների  
յեղկարույթուններ (գծ. 228):

Քանի վոր վորոնների հատվածներից և վոչ մեկն ևլ ղուգա-  
հեռ չի պրոյեկցիաների առանցքին, ապա գծագրի վրա չկան այդ  
հատվածների իրական մեծութունները: Կիրառելով պտտման  
մեթոդը՝ կարելի չե  
վորոշել յուրաքան-  
չյուր հատվածի յեր-  
կարութունը. քանի  
վոր 228-րդ գծագրի  
վրա հատվածների հո-  
րիզոնական պրոյեկ-  
ցիաները ղրված են  
պրոյեկցիաների ա-  
ռանցքին ղուգահեռ,  
ապա իրենք՝ հատվա-  
ծները ղուգահեռ կլի-  
նեն պրոյեկցիաների  
ճակատի հարթությա-  
նը և, հետևարար, ճա-  
կատի նոր պրոյեկցիա-  
ների o'a', o'b' և o'c'  
յերկարութունն և րը  
հավասար են OA,  
OB և OC թեք հա-  
վածներին:



Գծ. 228

Խնդիր Է. Պահանջվում և ab և a'b' պրոյեկցիաներով սված AB հատվածը  
պստիով ղուգահեռ դարձնել H հարթությանը (գծ. 229):


Յեթե հատվածը ղուգահեռ լինի H հարթության, ապա նրա  
ճակատի պրոյեկցիան ղուգահեռ կլինի պրոյեկցիաների առանցքին:

Ճակատի պրոյեկցիան պտտում են նրա կետերից մեկի ղուրջը  
(229-րդ գծագրի վրա a կետի ղուրջը) մինչև առանցքին ղուգա-  
հեռ լինելը և գտնում են հորիզոնական պրոյեկցիայի ab<sub>1</sub> նոր  
ղիքը. a կետը մնում և տեղում, իսկ b կետը ղարժվում և  
առանցքին ղուգահեռ ուղղությամբ:

ab<sub>1</sub> հատվածը հավասար և AB հատվածի իրական մեծու-  
թյան:

Խնդիր Ը. Պահանջվում և a'b' յեկ ab պրոյեկցիաներով սված AB հատվածը  
պստիով ղուգահեռ դարձնել W հարթությանը (գծ. 230):

Յեթե հատվածը ղուգահեռ լինի W հարթության, ապա նրա  
հորիզոնական և ճակատի պրոյեկցիաներն ուղղահայաց կլինեն X



Գծ. 229


Գծ. 230

առանցքին, այսինքն ղուգահեռ կլինեն Y և Z հարթություննե-  
րին: 230-րդ գծագրի վրա ab պրոյեկցիան պտտված և մինչև  
Y առանցքին ղուգահեռ լինելը, այսինքն ղրված և X առանցքին  
ուղղահայաց: Ճակատի պրոյեկցիայի b' կետը ղարժվում և X ա-  
ռանցքին ղուգահեռ ուղղությամբ. ab և a'b<sub>1</sub> պրոյեկցիաներով  
կառուցում են AB հատվածի կողքի պրոյեկցիան. a''b<sub>1</sub>՝-ը հա-  
վասար և պրոյեկտիվող հատվածի իրական մեծության:

§ 37. ՀԱՐԹ ՊԱՏԿԵՐԻ ՈՒՂՂԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՅԵԿՏԻԱՆԵՐԸ

231-րդ գծագրի վրա տված ե յեռանկյուն եպլուրը: Հորիզոնական պրոյեկցիան ներկայացնում ե պրոյեկցիաների առանցքին զուգահեռ մի հատված: Հետևաբար տված յեռանկյան յուրաքանչյուր զուգահեռ ե կողմը V հարթության, այսինքն յեռանկյունը զուգահեռ ե զրված ճակատի հարթությանը (V): Յեռանկյան ճակատի պրոյեկցիան տվյալ դեպքում պատկերում ե տված յեռանկյունն առանց աղճատման:

232-րդ գծագրի վրա նույն յեռանկյունը զրված ե այնպես, վոր նրա հարթությունը V հարթության հետ վորոշ անկյուն ե կազմում: Հորիզոնական պրոյեկցիան, առանց փոխելու նրա մեծությունը, զրել են X առանցքի նկատմամբ անկյան տակ, այ-



Գծ. 231


Գծ. 232

Գծ. 233

սինքն զուրս են բերել X առանցքի նկատմամբ զուգահեռության դիրքից:


Յեռանկյան ճակատի նոր պրոյեկցիայի կառուցումը վերածվում ե a' կետերի զուգահեռ սեղափոխման՝ X առանցքի նկատմամբ:

233-րդ գծագրի վրա յեռանկյանը նոր պատույտ ե տված. ճակատի պրոյեկցիան c' կետի շուրջը պտտելով՝ X առանցքի նկատմամբ թեքել են, իսկ ճակատի պրոյեկցիայի մեծությունը չի փոփոխվել: Հորիզոնական պրոյեկցիա յի վրա յեռանկյունն արդեն միայն ուղիղի հատվածով չի պա սկերվում, ինչպես 231-րդ



Գծ. 234

Գծ. 235



Գծ. 236

Գծ. 237

և 32-րդ գծագրերի վրա յեր.  $c_2$  կետը մնացել է յուր տեղում, իսկ  $a_2$  և  $b_2$  կետերը տեղափոխվել են X առանցքին զուգահեռ:

**Խնդիր 1.** Պահանջվում է 234-րդ ելյուրի վրա երկու վեցանկյունը H հարթությանը զուգահեռ դարձնել:

Լուծումը տված է 235-րդ գծագրի վրա. ճակատի պրոյեկցիան պատել են մինչև X առանցքին զուգահեռ լինելը. հորիզոնական պրոյեկցիան յուր նոր դիրքում պատկերում է տված վեցանկյունն առանց աղճատման:

**Խնդիր 2.** Պահանջվում է H հարթությունը զուգահեռ երջանին այնպիսի դիմ ես, վոր այդ հարթության հետ  $45^\circ$  անկյուն կազմի (գծ. 236):


Լուծումը տված է 237-րդ գծագրի վրա: Ճակատի պրոյեկցիան, առանց նրա մեծութունը փոփոխելու, պատված է  $45^\circ$  անկյունով: Երջանի հորիզոնական պրոյեկցիայի վրա նշված կետերը շարժվել են X առանցքին զուգահեռ ուղղությամբ և կորագրանոսի միջոցով միացված են կոր գծով: Ստացված պատկերն էլիպս է կոչվում (նայել 42 պարագրաֆը):

Պետք է ուշադրություն դարձնել այն բանի վրա, վոր նոր հորիզոնական պրոյեկցիայի վրա 2—2, 3—3 և 4—4 հատվածները հազասար են նախկին հորիզոնական պրոյեկցիայի 2—2, 3—3 և 4—4 հատվածներին, այսինքն շրջանի այն լարերն ու տրամագծերը, վորոնք զուգահեռ են մնում H հարթության, իրենց մեծութունը չեն փոխում: 2—4 լարերն ու 1—5 տրամագիծը նոր հորիզոնական պրոյեկցիայում կարճանում են, վորովհետև H հարթության նկատմամբ թեք են:


**Խնդիր 3.** Գտնել ABCDE պատկերի իրական մեծությունը (գծ. 238):

Խնդիրը լուծված է այսպես կոչված համատեղման յեղանակով: Այն ուղիղը, վորի հատվածը հանդիսանում է տված բազմանկյան պրոյեկցիաներից մեկը, շարունակում են մինչև առանցքի հետ հատվելը (գծ. 239) և  $P_0$  կետից տանում են առանցքին ուղղահայաց ( $P_0P_n$ ): Այնուհետև  $P_0$  կետից, վորպես կենտրոնից,  $a'$ ,  $b'$ ,  $c'$  և  $d'$  կետերը փոխադրում են առանցքի վրա, իսկ ապա  $a$ ,  $b$ ,  $c$  և  $d$  կետերից տանում են  $P_0P_n$  ուղիղին ուղղահայացներ, իսկ առանցքի վրա ստացված կետերից՝ զուգահեռներ  $P_0P_n$  ուղիղին: Այդ ուղիղների հատման կետեր

ում ստացվում են տված բազմանկյան զագաթները — A, B, C և D կետերը, այն բազմանկյան, վորը կարծեք թե համատեղվել է H հարթության հետ: ABCD-ն վորոնելի պատկերն է, վորն ստացվել է առանց աղճատման:



Գծ. 238




Գծ. 239


§ 38. ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄՆ ԵՊՅՈՒՐԻ ՎՐԱ

240-րդ գծագրի վրա պատկերված է P հարթությունը և նրա համատեղումը H հարթության հետ: P հարթությունը պրոյեկցիաների V հարթության հետ հատվում է  $P_0P_n$  ուղիղով, իսկ H հարթության հետ՝  $P_0P_n$  ուղիղով: Այդ ուղիղները կոչվում են հարթության հետեք և կրճատ նշանակվում են  $P_v$  և  $P_h$ : P հարթությունը H հարթության հետ համատեղելու համար պետք է այդ հարթությունը պատել  $P_n$  հետքի շուրջը: Ենթե P հարթությունը համատեղվում է H հարթության հետ,  $P_v$  հետքը համատեղվում է X առանցքի հետ:



Սերը P հարթությունը համատեղում են H հարթության հետ, այն ամենը, վոր գտնվում է P հարթությունում մեջ, համատեղվում է H հարթության հետ: 240-րդ գծագրի վրա պատկեր



Գծ. 240



Գծ. 241



Գծ. 242

ված և A կետի փոխադրությունը H հարթության վրա P հարթության հետ միասին՝ 241-րդ գծագրի վրա տված և եպլուրը, P հարթությունը պատկերված և միայն  $P_v$  և  $P_h$  հեռքերով,  $a'$  պրոյեկցիան փոխադրված և առանցքի վրա՝ պատկերված  $P_0$  կենտրոնի շուրջը, A կետն ստացվել է  $P_v$  հեռքին ուղղահայաց և զուգահեռ գծերի հատումից:

239-րդ գծագրի լաղղատումը 240-րդ և 241-րդ գծագրերի հետ՝ ցույց է տալիս, զոր 239-րդ գծագրի վրա ABCD քառանկյունը կարծես թե գտնվում էր P հարթության մեջ, և այդ հարթությունը համատեղվեց H հարթության հետ:

239-րդ, 240-րդ և 241-րդ գծագրերի վրա պատկերված հարթությունն ուղղահայաց է V հարթության.  $P_v$  հեռքն ուղղահայաց է առանցքին, իսկ  $P_h$  հեռքը թեքված է դեպի առանցքը, ընդվորում հեռքի թեքության անկյունը հավասար է P հարթության թեքությանը H հարթության նկատմամբ:


242-րդ գծագրի վրա պատկերված են պրոյեկցիաների հարթությունների նկատմամբ զանազան դիրքեր ունեցող հարթություններ. P հարթությունն ուղղահայաց է H հարթության և թեքված է դեպի V հարթությունը, Q հարթությունը զուգահեռ է H հարթության, S հարթությունը զուգահեռ է V հարթության, T հարթությունն ուղղահայաց է պրոյեկցիաների հարթության: Սյս դեպքերից յուրաքանչյուրին համատաստասիանում է հեռքերի վորոշակի դիրք (պրոյեկցիաների առանցքի նկատմամբ) և պլուրի վրա:

Խնդիր 2. Վերոնի ABC պատկերի իրական սխեմ (գծ. 243):

Խնդիրը լուծված է համատեղման միջոցով՝ նկատմանը զանվում է P հարթության մեջ. յուանկյան պրոյեկցիայով ac հատվածով) անց և կացրած ուղիղ՝ մինչև պրոյեկցիաների առանցքի հետ համվելը. ստացվում է հարթության  $P_v$  հեռքը, իսկ  $P_h$  ուղղահայաց է հեռքն ուղղահայաց է առանցքին (բաղղատել 242-րդ գծագրի P հարթության հետ):

Նկատմանը P հարթության հետ միասին համատեղված է V հարթության հետ: ABC-ն յուանկյան վորոնելի տեսքն է:

Այս խնդիրը կարելի չե լուծել և այլ կերպ, այնպես, որ ինչպես լուծվեց 235-րդ գծագրի խնդիրը, այսինքն տված պատկերի պատումով՝ մինչև պրոյեկցիաների հարթութուններից մեկին զուգահեռ լինելը: Յեթ խնդիրը լուծում են համատեղման յեղանակով, ապա պատկերը պատում են այնքան, մինչև պրոյեկցիաների հարթության հետ համատեղվելը, այսինքն պատկերը նույնպես զուգահեռ դիրք է ստանում հարթության նկատմամբ, բայց զերոյի հավասար հեռավորության վրա: Այդ պատճառով համատեղման յեղանակը



Գծ. 243



պատման յեղանակի մասնավոր դեպքն են համարում:

§ 39. ՄԱՐՄՆԻ ՈՒՂՂԱՆԿՑՈՒՆ ՊՐՈՅԵԿՑԻԱՆԵՐԸ

Մարմնի պրոյեկցիաների կառուցումը տված է 197—201-րդ գծագրերի վրա: 201-րդ գծագրով հեշա է հետևել, թե ինչպես պետք է յերկու տված պրոյեկցիաներով կառուցել յերրորդը: Գործը վերածվում է տված մարմնի յեզրագիծը վորոշող մի շարք կետերի յերրորդ պրոյեկցիաների կառուցման: Հետևաբար պետք է վարվել այնպես, ինչպես ցույց է տված 33-րդ և 34-րդ պարագրաֆներում՝ կետի և ուղիղի պրոյեկցիաները կառուցելու մասին:

244-րդ գծագրի վրա տված է մարմնի պատկերումը հաջորդաբար պատումով՝ նախ ճակատի հարթության նկատմամբ, այնուհետև հորիզոնական հարթության նկատմամբ: Յուր առաջին դիրքում մարմինը դրված է այնպես, վոր նրա նիստերը զուգահեռ են պրոյեկցիաների համապատասխան հարթություններին: Յերկրորդ դիրքն ստացել է մարմինը՝ ճակատի հարթության նկատմամբ  $45^\circ$  անկյունով պտտելու միջոցով: Այս դեպքում

մարմնի հորիզոնական պրոյեկցիայի յեզրագիծը չի փոխվում և միայն արված անկյունով պտտվում է, իսկ ճակատի և կողքի




Գծ. 244

պրոյեկցիայի կետերը տեղափոխվում են պրոյեկցիաների X և  $Y_1$  առանցքներին զուգահեռ:

Մարմնի յերրորդ դիրքն ստացվել է մարմինը հորիզոնական հարթության նկատմամբ  $30^\circ$  անկյունով պտտելու միջոցով: Այս անգամ յուր յեզրագիծը չի փոխվում կողքի պրոյեկցիան, նրան


տալիս են պահանջված թեթուցությունը, ճակատի և հորիզոնական պրոյեկցիայի բոլոր կետերը տեղափոխվում են Z և Y առանցքներին զուգահեռ:

Խնդիր 1. Լրացնել ճակատի յեվ կողմի պրոյեկցիաների գծագրումը (գծ. 245):




Գծ. 245

Խնդիր 2. Կառուցել ճակատի պրոյեկցիան՝ սլաժ հորիզոնական յեվ կողմի պրոյեկցիաներով (գծ. 246):



Գծ. 246

Խնդիր 3. Կառուցել կողմի պրոյեկցիան՝ սլաժ հորիզոնական յեվ ճակատի պրոյեկցիաներով (գծ. 247):



Գծ. 247

### § 40. ԲԱԶՄԱՆԻՍՏԻ ՀԱՏՈՒՄԸ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՈՎ


Բազմանիստը հարթութունով հատելիս ստացվում է ուղղագիծ յեկրագիծ ունեցող հարթ պատկեր: Այս պատկերի կողմերը ներկայացնում են նիստերի (այսինքն հարթութունների) հատման գծերը՝ տված հատող հարթության հետ, իսկ հատույթի պատկերի գաղաթները ներկայացնում են բազմանիստի կողերի հատման կետերը՝ հատող հարթության հետ (գծ. 248):

Պրիզմայի հատումը հարթությամբ (գծ. 248):


Պրիզման հատված է պրոյեկցիաների ճակատի հարթությանն ուղղահայաց P հարթութունով: Հատույթում ստացվում է ABCD ուղղանկյունը՝ նրա ճակատի պրոյեկցիան ներկայացնում է ուղիղի հատված. հատույթի հորիզոնական պրոյեկցիան համընկնում է պրիզմայի հորիզոնական պրոյեկցիայի հետ:

Հատույթի իրական մեծությունն ստացվել է հատող հարթութունը պրոյեկցիաների հորիզոնական հարթության հետ համահեղելու միջոցով:

Բուլգի հատումը հարթությամբ (գծ. 249):



Գծ. 248



Գծ. 249


Բուրգը հատված է պրոյեկցիաների ճակատի հարթությանն ուղղահայաց P հարթությունով: Հատույթում ստացվում է քառանկյուն, վորի ճակատի պրոյեկցիան համընկնում է  $P_v$  հեռքի հետ: Բուրգի կողերի ուղղահայաց պրոյեկցիաների վրա ստացված  $k'$  և  $n'$  կետերը կարելի չի փոխադրել բուրգի հորիզոնական է

կողքի պրոյեկցիաների վրա, համապատասխան կողերի պրոյեկցիաների վրա: Ստացվում են  $k, n, k'', n''$  կետերը: Հորիզոնական պրոյեկցիայի վրա  $m$  և  $o$  կետերը կարելի չի գտնել կողքի պրոյեկցիայի ուղղահայաց: Նախ  $m'$  և  $o'$  կետերը տեղափոխում են բուրգի կողքի պրոյեկցիայի վրա (կողերի համապատասխան կողքի պրոյեկցիաների վրա ստացվում են  $m''$  և  $o''$  կետերը), իսկ այնուհետև կողքի պրոյեկցիայից  $m''$  և  $o''$  կետերը փոխադրում են բուրգի հորիզոնական պրոյեկցիայի վրա:

Կողքի պրոյեկցիայի վրա  $m''n''$  և  $o''n''$  հատվածները պատկերված են շարիխային գծերով, վորովհետև հատույթի այդ կողմերը չեն յերևա, յեթե բուրգի վրա նայեն ձախ կողմից:

Հատույթի իրական մեծությունն ստացվել է համատեղման յեղանակով:

250-րդ գծագրի վրա տված են պրիզմայի և բուրգի կողմնային մակերևութների բացվածքները (գծ. 248 և 249), վորոնց վրա տարված են հատույթի պատկերի կողմերը: Պրիզմայի բացվածքի վրա A, B, C և D կետերը հիմքից այնպիսի հեռավորության վրա յեն գտնվում, ինչպիսի հեռավորության վրա եյին



Գծ. 250

Գծ. 250 a

գտնվում  $a', b', c'$  և  $d'$  կետերը (գծ. 248) պրիզմայի ճակատի պրոյեկցիայի հիմքից: Նույնպես և բուրգի բացվածքի վրա (գծ. 250) KA, OB, NC և MD հատվածները վերցված են բուրգի պրոյեկցիաներից (գծ. 249), քանի վոր բուրգի կողերը դույզ սուղույզ զուգահեռ են պրոյեկցիաների ճակատի և կողքի հարթություններին, իսկ այդ պատճառով՝

$$KA = k'o', OB = MD = o''b'' = m''d'', NC = n''c''$$

Յեթե բուրգի կողերից մեկը զուգահեռ չլինի պրոյեկցիանե-

րից մեկնումեկին, ապա նրա իրական մեծությունը պետք է գտնել այնպես, ինչպես ցույց է տված 227-րդ գծազրի վրա:


§ 41. ԿՈՆԻ ՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Կոնը հարթությունով հատելու ժամանակ ստացվում են այսպես կոչված կոնազան հատվյալներ, այն է՝ շրջան, ելիպս, պատարով և հիպերբոլ (գծ. 251):

Շրջան է ստացվում այն դեպքում, յերբ հատող հարթությունն ուղղահայաց է կոնի առանցքին:

Ելիպս է ստացվում այն դեպքում, յերբ հատող հարթությունը հատում է կոնի բոլոր ծնիչները:

Պատարով է ստացվում այն դեպքում, յերբ հատող հարթությունը զուգահեռ է կոնի ծնիչներից մեկին:



Գծ. 251

Յեթե հատող հարթությունը կրկնակի յե հատում կոնի մակերևույթը (զրա համար պետք է կոնը շարունակված լինի գաղաթից այն կողմ, այսինքն պետք է ունենալ իրենց զաղաթ-

ներով միացված է ընդհանուր առանցք ունեցող յերկու կոն), ապա հիպերբոլ է ստացվում: Հիպերբոլը բաղկացած է յերկու մասից (հիպերբոլի յերկու ճյուղերը): 251-րդ գծազրի վրա հիպերբոլն ստացվել է՝ կոնը յուր առանցքին զուգահեռ հարթությունով հատելու միջոցով:


Յեթե հատող հարթությունն անցնում է կոնի առանցքով, ապա ստացվում է հավասարաբուն կամ հավասարակողմ յեռանկյուն:

§ 42. ԵԼԻՊՍԸ, ՊԱՐԱԲՈՒՆ ՈՒ ՀԻՊԵՐԲՈՒԼ ԿԱՌՈՒՅԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ՝ ՀԻՄԵՎԱԾ ԱՅՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՄԻ ԲԱՆԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Ելիպսի համար բնորոշ է այն, վոր նրա վորևե կետի հեռավորությունների գումարը ֆոկուսներից (գծ. 252) հաստատուն մեծություն է, վորը հավասար է ելիպսի մեծ առանցքին:

Այդ պատճառով, յեթե թեղի ծայրերն ամրացնենք  $F_1$  և  $F_2$  ֆոկուսներում և այնուհետև ձգենք թեղը մատիտի սուր ծայրով, ապա մատիտը շարժման ժամանակ ելիպս կզծի:

Ֆոկուսների դիրքը (գծ. 252) հեշտ է գրաններ, յեթե հայտնի յեն ելիպսի մեծ և փոքր առանցքները (նրա գլխավոր տրամագծերը): փոքր առանցքի ծայրից պետք է մեծ առանցքը հատել մի օղեղով, վորի շտապիլը հավասար է մեծ առանցքի կեսին, այսինքն հավասար է  $a$ -ի:




Գծ. 252

1. Ելիպսի կառուցումը, յերբ տված են ֆոկուսներն ու մեծ առանցքը (գծ. 253):

Մեծ առանցքի վրա  $F_1$  ֆոկուսի և ելիպսի  $O$  կենտրոնի միջև վերցնում են կամալական մեծություն մի քանի հատված-

ներ, աստիճանաբար մեծացնելով այդ հատվածները ֆոկուսից դեպի կենտրոնը սանող ուղղութիւնք: Այնուհետև  $F_1$  ֆոկուսից գծում են մի շարք աղեղներ, վորոնց շառավիղները հավասար են  $A$  կետի հեռավորութիւններին՝ բաժանման կետերից: Նույնը պետք է անել և  $F_2$  ֆոկուսից, միայն շառավիղները պետք է վերցնել հավասար  $B$  կետի հեռավորութիւններին  $F_1$ -ի և  $O$ -ի միջև վերցրած բաժանման կետերից: Որինակ (գծ. 253),  $F_1$  ֆոկուսից գծում են  $A5$  շառավիղով մի աղեղ, իսկ  $F_2$  ֆոկուսից —  $B5$  շառավիղով աղեղ: Ստացվում է ելիպսոյն պատկանող մի կետ:




Գծ. 253

Յեթե վերցնենք բաժանման 6 կետը, ապա  $F_1$  ֆոկուսից պետք է գծենք  $A6$  շառավիղով աղեղ, իսկ  $F_2$  ֆոկուսից՝  $B$  և 6 կետերի հեռավորութիւնը հավասար շառավիղով:

Աղեղների հատման տեղերում ստացվում են մի շարք կետեր, վորոնք պատկանում են ելիպսին: Այդ կետերով կորն անց են կացնում կորագանձնով (լեկալով):

2. Ելիպսի կառուցումը, յերբ տված են գլխավոր առանցքները (գծ. 254):

Յերկու գլխավոր առանցքների վրա, վորպես տրամագծերի, կառուցում են ոժանդակ շրջանագծեր և այդ շրջանագծերը բաժանում են վորոշ թվով մասերի (որինակ՝ 12): Այնուհետև փոքր շրջանագծի բաժանման կետերից անց են կացնում մեծ առանցքին զուգահեռ ուղիղներ,



Գծ. 254


Նագծեր և այդ շրջանագծերը բաժանում են վորոշ թվով մասերի (որինակ՝ 12): Այնուհետև փոքր շրջանագծի բաժանման կետերից անց են կացնում մեծ առանցքին զուգահեռ ուղիղներ,

իսկ մեծ շրջանագծի բաժանման համապատասխան կետերից անց են կացնում զուգահեռ ուղիղներ ելիպսի փոքր առանցքին: Համապատասխան գծերի հատումները տալիս են ելիպսի մի շարք կետեր:

3. Ելիպսի կառուցումը, յերբ տված են գլխավոր առանցքները՝ նրան ուղղանկյուն առագծելու միջոցով (գծ. 255):

Գլխավոր առանցքների վրա կառուցում են ուղղանկյուն (գծ. 255): Նրա կողմի կեսը բաժանում են մի քանի հավասար մասերի: Նույնը անում են մի քանի հավասար մասերի յեն բաժանում նաև մոտ զանվող կիսաառանցքը: Յեթե այնուհետև մյուս առանցքի ծայրերից տանեն բաժանման կետերով անցնող ճառագայթներ, ապա համապատասխան ճառագայթների հատման ստացվում են մի շարք կետեր:

Այդ կետերով կարելի է տանել ելիպսի քառորդ մասը և նման կառուցում կատարել մյուս քառորդներն ստանալու համար կամ ստացված առաջին կետերով կառուցել նրանց համաչափ կետերը:



Գծ. 255

(ՊՐԱԲՈՂ)


Պարբերի բոլոր կետերը հավասար հեռավորութիւն վրա յեն գտնվում մի ուղիղից, վոր կոչվում է դիրեկտրիս (ուղիղ), և ֆոկուսից, որինակ՝  $FK = KB$  (գծ. 256):  $A$  կետը կոչվում է պարբերի գագաթ.  $AX$  առանցքը կոչվում է գլխավոր առանցք:

Յեթե տված են պարբերի դիրեկտրիսն ու ֆոկուսը, ապա վերջինի կառուցումը կատարվում է հետևյալ ձևով (գծ. 257):


1) Այնուհետև անկյուններ նշանակելու համար կգործածվեն նաև հունական այբուբենի հետևյալ ատաղներ՝  $\alpha$  (ալֆա),  $\beta$  (բետա),  $\gamma$  (գամմա),  $\delta$  (դելտա)

Փոկուսից իջեցնում են ուղղահայաց դիրեկտրիսի վրա: Ստացված հատվածը կիսում են և այդպիսով վորոշում պարաբոլի A գագաթը:

Սյունահատե պարաբոլի առանցքի վրա կամայորեն վերցնում են մի շարք հատվածներ, աստիճանաբար մեծացնելով այդ



Գձ. 256




Գձ. 257


հատվածներն A-ից դեպի F տանող ուղղութեամբ: Բաժանման կետերից տանում են առանցքին ուղղահայացներ: Ստանում են մի շարք՝ դիրեկտրիսին զուգահեռ ուղիղներ: Յեթի այժմ F ֆոկուսից այդ ուղիղները հատեն ավելներով, վորոնց շառավիղները յուրաքանչյուր անգամ վերցնում են հավասար դիրեկտրիսի հեռավորութեանը մինչև համապատասխան զուգահեռը, ապա կտացվեն պարաբոլին պատկանող մի շարք կետեր:

Պարաբոլն անց են կացնում կորաքանոնով: Յեթի տված ե պարաբոլին պատկանող վորևե կետ, պարաբոլի գագաթը և առանցքի ուղղութեանը (գձ. 258), ապա կտուցումը կատարվում է հետևյալ կերպ:

Տված P կետից տանում են զուգահեռ ուղիղ առանցքին և նույն կետից ուղղահայաց են իջեցնում առանցքին: Այնուհետև A գագաթից կանգնեցնում են առանցքի ուղղահայացը և այդպիսով ստանում ABPX ուղղանկյունը:



Գձ. 258



Գձ 259

Այդ ուղղանկյան AB և BP կողմերը բաժանում են միևնույն թվով հավասար մասերի (որինակ՝ 258-րդ գծաչրի վրա յոթ մասի) և AB կողմի բաժանման կետերից տանում են պարբերովի առանցքին զուգահեռ ուղիղներ, իսկ BP կողմի բաժանման կետերը միացնում են A գագաթի հետ:

Համապատասխան թեք և զուգահեռ գծերի հատումները տալիս են տվյալ պարբերովի պատկանող մի շարք կետեր:

Պարբերովի կառուցումը աված անկյունը կազմող ռեզալիոնների միջոցով:

Տված են պարբերովի շոշափող ուղիղներն A և B կետերում (գծ. 259), վորոնք իրար հետ կազմում են տված  $\alpha$  անկյունը:

Շոշափողների OA և OB հատվածները բաժանում են հավասար մասերի: OA հատվածի վրա բաժանման կետերը համապատասխան են O կետից սկսած, իսկ OB հատվածի վրա՝ B կետից սկսած: Այնուհետև միացնում են միևնույն համարակալով թվյունն ունեցող կետերը: Պարբերովի ներգծում են ստացված բեկյալին:


**ՀԻՊԵՐԲՈՒ**

Հիպերբոլի համար բնորոշ է նրա այն հատկությունը, վոր հիպերբոլի վորևե կետի հեռավորությունների սարբերությունը նրա վորևե կետից՝ հաստատուն մեծություն է, վորը հավասար է հիպերբոլի գագաթների հեռավորության (տես գծ. 260, վորտեղ  $BF_1 - BF_2 = AA_1$ ):

Յեթե հայտնի յեն հիպերբոլի գագաթների և ֆոկուսների գիրքերը, ապա հնարավոր է նրա կառուցումը հետևյալ ձևով (գծ. 260): Հիպերբոլի առանցքի վրա, վորն անցնում է A և A<sub>1</sub> (գծ. 260): Հիպերբոլի գագաթներով և F ու F<sub>1</sub> ֆոկուսներով մի ֆոկուսից սկսած՝ վերցնում են մի շարք հատվածներ, վորոնք աստիճանաբար մեծանում են ֆոկուսից հեռանալու հետ միասին: Ստանում են a, b, c և այլն կետերը:

Այնուհետև յերկու ֆոկուսներն ընդունելով վորպես կենտրոններ՝ գծում են աղեղներ, վորոնց շառավիղները հավասար են բաժանման կետերի հեռավորություններին՝ հիպերբոլի գագաթներից:

գագաթներից: Որինակ՝ F ֆոկուսից գծում են աղեղ Ac շառավիղով, իսկ F<sub>1</sub> ֆոկուսից՝ A<sub>1</sub>c շառավիղով: Ստացվում են հիպերբոլի ճյուղերից մեկին պատկանող մի շարք կետեր: Կրկնելով կառուցումը կամ կառուցելով համաչափ կետերը՝ գտնում են



Գծ. 260

կորի մյուս ճյուղը: Գտած կետերը միացնում են կորագանոնով:

**§ 43. ՈՒՂԻՂ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՆԻ ՀԱՐԹՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱՅԱՆ ՀԱՏՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ**

261-րդ գծաչրի վրա կատարված է կոնի հատումը պրոյեկցիաների ուղղաձիգ հարթությունն ուղղահայաց և պրոյեկցիաների հորիզոնական հարթության նկատմամբ այնպիսի թեքություն ունեցող հարթությամբ, վոր կոնի բոլոր ծնիչները հատվում են տված հարթության հետ: Կոնն ուղիղ շրջանային է և կանգնած է պրոյեկցիաների հորիզոնական հարթության վրա:

Պահանջվում է գտնել հատույթում ստացված ելիպսի պրոյեկցիաներն ու հատույթի իրական ձևը: Ելիպսի պրոյեկցիաները պրոյեկցիաների հորիզոնական և կողմնային հարթությունները:

ների վրա նույնպես ելիպսներ են, ընդ վորում այդ ելիպսները հավասար կլինեցին, չեթե հատող հարթութունը լինելով լինել դեպի պրոյեկցիաների հորիզոնական հարթութունը  $45^\circ$  անկյունով:

Ելիպսի պրոյեկցիաներին պատկանող կետերը դանելու համար անց են կացնում մի շարք ծնիչներ: Այդ նպատակով հորիզոնական պրոյեկցիայի վրա անց են կացնում 12 ծնիչները պրոեկցիաներ՝ միացնելով  $s$  կետը շրջանագծի բաժանումների հետ (0, 1, 3 և այլն): 7, 8, 10 և այլն կետերը պրոյեկտում են կոնի ուղղաձիգ պրոյեկցիայի հիմքի վրա, ստանում են 7', 8', 10' և այլն կետերը, միացնելով այդ կետերն  $s'$  կետի հետ՝ ստանում են ծնիչների ուղղաձիգ պրոյեկցիաները:


Ծնիչների պրոյեկցիաները կողմնային հարթության վրա ստացվում են տված յերկու պրոյեկցիաների ոգնությամբ յերրորդ կառուցելու սովորական յեղանակով:

Հատող հարթության  $P_v$  ուղղաձիգ հետքի հատման կետը, ծնիչների ուղղաձիգ պրոյեկցիաներից վորեւ մեկի հետ՝  $c'$ , հանդիսանում է վորպես մի կետ, վորը մի կողմից պատկանում է ծնիչի ուղղաձիգ պրոյեկցիային, մյուս կողմից՝ վորոնելի համաման գծի ուղղաձիգ պրոյեկցիային: Այդ պատճառով պրոյեկտելով  $c'$  կետը ծնիչի հորիզոնական պրոյեկցիայի վրա, այսինքն  $S10$ -ի և  $s2$ -ի վրա (քանի վոր ծնիչի մեկ տեսանելի ուղղաձիգ պրոյեկցիայով կարելի չե կառուցել  $S10$  և  $S2$  յերկու հորիզոնական պրոյեկցիաները), գտնում են հորիզոնական պրոյեկցիային պատկանող  $c$  և  $c_1$  կետերը:

Կարելի չի ր սահմանափակվել ելիպսների մեծ և փոքր առանցքները հորիզոնական և կողմնային պրոյեկցիաների մեջ գտնելով և այնուհետև ելիպսները կառուցել § 41-ի մեջ ցույց տված յեղանակներից մեկնումեկով: Այս դեպքում մեծ առանցքը հորիզոնական պրոյեկցիայի վրա և փոքր առանցքը կողմնային պրոյեկցիայի վրա ստացվում են  $a'$  և  $b'$  կետերի պրոյեկտումից, իսկ փոքր առանցքը հորիզոնական պրոյեկցիայի վրա և մեծ առանցքը կողմնային պրոյեկցիայի վրա գտնելու համար նախ  $a'$   $b'$  հատվածը կիսում են. ստացած  $d$  կետը վորոնելի ելիպսի փոքր առանցքի ուղղաձիգ պրոյեկցիան է:

$d$  կետից անց են կացնում  $sT$  հատվածը՝ ծնիչի ուղղա-

ձիգ պրոյեկցիան:  $T$  կետը պրոյեկտում են շրջանագծի վրա. ստանում են  $T$  կետ. վերջինը միացնելով  $s$ -ի հետ՝ ստանում են ծնիչի հորիզոնական պրոյեկցիան: Այժմ մնում է  $d'$  կետը պրոյեկտել  $sT$ -ի վրա. ստացված  $d$  կետը (և նրա համաչափ մյուս  $d$  կետը) պատկանում է ելիպսի հորիզոնական պրոյեկցիային ու



Գծ. 261


նրա  $dd$  փոքր առանցքին: Ելիպսի  $d'd'$  մեծ առանցքը կողքի տեսքում պրոյեկտվում է սովորական յեղանակով:

Հատույթի մակերեսի իրական մեծութունն ստացվում է, յերբ հատող հարթութունը համատեղում են պրոյեկցիաների հորիզոնական հարթության հետ: Կառուցումը պարզ է գծագրից: Նկատենք միայն, վոր բավական է գտնել միայն  $AB$  մեծ առանցքը և  $DD$  փոքր առանցքը և նրանցով կառուցել ելիպսը:


§ 44. ԿՈՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅՑԻ ԹԱՅՎԱԾԻԸ

262-րդ գծագրի վրա պատկերված է ուղիղ շրջանային կոնն ու նրա մակերեսի բացվածքը: Կոնի կողմնային մակերեսի բացվածքը ներկայացնում է մի սեկտոր, վորի շառավիղը հավասար է կոնի շառավիղին:

սար և կոնի ծնիչի յերկարության, իսկ աղեղի յերկարությունը հավասար և հիմքի շրջանագծի յերկարության, այսինքն  $2\pi R$ -ի: Տված  $R$ -ի և  $L$ -ի միջոցով բացվածքի սեկտորը կառուցելու համար պետք է գտնել  $\alpha$  անկյան մեծությունը:  $\alpha = \frac{R}{L} \cdot 360^\circ$  բա-




Գծ. 262



Գծ. 263

հաձևով. այդ անկյունը կարող է վորոշվել: Յեթե, որինակ,  $R = 25$  մմ,  $L = 75$  մմ, ապա  $\alpha = \frac{25}{75} \cdot 360^\circ = 120^\circ$ : Պետք է կառուցել գտած  $\alpha$  անկյունը և այդ անկյան կողմերի վրա վերցնել  $L$  յերկարությունը.  $S$  կետից, վորպես կենտրոնից, տանել  $L$ -ին հավասար շառավիղով աղեղ:

263-րդ գծագրի վրա տված է այն կոնի կողմնային մակերևույթի բացվածքի կառուցումը, վորը հատված է հարթությունով այնպես, վոր հատվածքում ստացվել է ելիպս (գծ. 261):



Գծ. 264

Սեկտորը կառուցում են այնպես, ինչպես բացատրված է վերը: Այնուհետև անկյունը բաժանում են 12 հավասար մասի և աղեղի վրա գտնում 1, 2, 3 և այլն կետերը: Միացնելով  $S$  գագաթին այդ կետերի հետ՝ ստանում են մի շարք ծնիչներ, այն է՝  $SO$ ,  $S1$  և այլն:


Ելիպսի բացվածքին պատկանող  $A$ ,  $C$ ,  $K$  և այլն կետերը գտնելու համար պետք է գիտենալ ծնիչների կոնի գագաթից մինչև այդ կետերը վերցրած հատվածների իրական մեծությունները: 261-րդ գծագրի վրա  $S'B$  հատվածը պրոյեկտվում է բնական մե-

ծուխյամբ, քանի վոր  $s'b'$  ծնիչի ամբողջ պրոյեկցիան հավասար է նրա իրական մեծության: Հետևաբար 263-րդ գծագրի վրա  $SB$ -ն հավասար է  $s'b'$ -ին: Ճիշտ այդպես  $SA$ -ն հավասար է  $s'a$ -ին: Մյուս շոշափողների հատվածների իրական մեծությունները գտնելու համար  $e'$ ,  $k'$  և այլն կետերը (գծ. 261) փոխադրում են  $s'b'$  կողմնային ծնիչի վրա և այնտեղ գտնում  $s'E'$ ,  $s'K$  և այլն հատվածները, այսինքն շոշափողների հատվածների իրական մեծությունները, վորը և փոխադրում են 263-րդ գծագրի վրա:

264-րդ գծագրի վրա տված է հատած կոնի կողմնային մակերևույթի բացվածքը: Յեթե կոնը գծելու համար տված կլինան հիմքերի արամագծերը և կոնի բարձրությունը, ապա ծնիչի յերկարությունը, վորն անհրաժեշտ է բացվածքը կառուցելու համար. կարող է վորոշվել գծագրից (գծ. 264):

### § 45. ԳԼԱՆԻ ՀԱՏՈՒԹՄԸ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՈՎ

265-րդ գծագրի վրա տված է ուղիղ շրջանային կոնի թեք հարթությունով առաջացած հատվածքի կառուցումը: Հատվածքում ստացվում է ելիպս: Քանի վոր հատող հարթությունն ուղղահայաց է պրոյեկցիաների ճակատի հարթությանը, ապա ելիպսի ճակատի պրոյեկցիան համընկնում է  $P_v$  ուղիղի հետ




Գծ. 265

(հատող հարթության ուղղահայաց հեռքը): Հատույթի հորիզոնական պրոյեկցիան (ելիպս) համընկնում է իր գլանի հորիզոնական պրոյեկցիայի հետ, այսինքն պատկերվում է շրջանագծով:

Ելիպսի կողմնային պրոյեկցիան կառուցելու համար նշում են գլանի մի քանի ծնիչներ բոլոր պրոյեկցիաների վրա, գլանում են նրանց հատման կետերը ճակատի պրոյեկցիայի վրա  $P$  հարթության հետ և յուրաքանչյուր կետի յերկուական (ճակատի և հորիզոնական) պրոյեկցիաներով գտնում են կողմնային պրոյեկցիան:

Յեթե  $P$  հարթության թեքության անկյունը  $H$  հարթության նկատմամբ հավասար է  $45^\circ$ -ի, ապա հատվածքի պատերի կողմնային պրոյեկցիան շրջան է:

Գլանի կողմնային մակերևույթի բացվածքը ներկայացնում է մի ուղղանկյուն, վորի հիմքը հավասար է  $2\pi R$ -ի, իսկ բարձրությունը հավասար է գլանի բարձրության: Բացվածքի վրա ծնիչները նշանակում են այնպես, ինչպես նրանք նշանակված են գլանի պրոյեկցիաների վրա, և ծնիչների հատվածները ճակատի կամ կողմնային պրոյեկցիաներից փոխադրում են բացվածքի վրա:  $A$ ,  $K$ ,  $B$  և այլն կետերը միացնում են կորաքանոնով. ստացված կորը ներկայացնում է ելիպսի բացվածքը:




Գծ. 266

Հատույթի իրական մեծությունը կարող է կառուցվել ելիպսի մեծ և փոքր առանցքներով, այսինքն 254-րդ և 255-րդ գծագրերի վրա նշված յեղանակով: Դրա համար պետք է համատեղման յեղանակով գտնել ելիպսի մեծ և փոքր առանցքները: 265-րդ գծագրի վրա կիրառված է 254-րդ գծագրի վրա ցույց տված յեղանակը:


Յեթե գլանը հատում են յուր առանցքին զուգահեռ հարթություններով, ապա ստացվում են այդ գլանի մի շարք ծնիչներ (գծ. 266):

Մարմինների փոխադարձական ժամանակ հատվում են նրանց մակերևույթները, վորի հետևանքով ստացվում են հատման գծեր, վորոնք կոչվում են նաև անցման գծեր:

267-րդ գծագրի վրա պատկերված է յերկու պրիզմայի փոխհատումը: Քանի վոր պրիզմայի մակերևույթը կազմված է հարթ նիստերից, ապա հատման գիծը կազմված է ուղիղ գծերի հատվածներից: Ուղիղի յուրաքանչյուր հատված վորոշվում է նրա ծայրակետերով. այդ կետերն ստացվում են այնտեղ, վորտեղ մի պրիզմայի կողը մտնում է մյուս նիստի մեջ: 267-րդ գծագրի վրա նշված են K, M և N կետերը. K և M կետերն ստացվել են



Գծ. 267



Գծ. 268

վորպես AC և BD կողերի մուտքի կետեր յեռանխառ պրիզմայի մեջ, N կետը՝ վորպես ST կողի մուտքի կետը քառանիստ պրիզմայի մեջ:

268-րդ գծագրի վրա պատկերված է յերկու գլանների փոխհատումը: Ստացվում է անցման կոր գիծ, վորը կառուցելու համար պետք է գտնել մի շարք կետեր: Այդ կետերը գտնելու համար պետք է հատվող մարմինների մակերևույթների վրա վերցնել վորոշ գծեր, վորոնք և տալիս են կետեր՝ վորոնելի անցման գիծը տանելու համար: 267-րդ գծագրի վրա նշված են K, M և N կետերը. K և M կետերն ստացվել են յերկու գլանների ծնիչ-

ների հատումից, իսկ N կետը՝ փոքր գլանի T ծնիչի և մեծ գլանի մակերևույթի վրա գտնվող C շրջանագծի հատումից, Բայց գլանների մակերևույթները վրա ծնիչներ ու շրջանագծեր վերցնելու համար պետք է այդ գլանները հատել հարթություններով (տես, որինակ, 266-րդ գծագիրը, վորտեղ ցույց է տված, թե ինչպես են ստացվում գլանի ծնիչները): Հետևաբար մակերևույթների հատման գիծը կառուցելու համար պետք է այդ մակերևույթները միաժամանակ հատել ոժանդակ հարթություններով, ստանալ մակերևույթների հատման գծերն՝ այդ հարթությունների հետ, և նշել այդ գծերի հատման կետերը, վորոնցով և անցնում է անցման վորոնելի գիծը:

Սովորաբար սկսում են այն կետերը գտնելուց, վորոնք բնորոշում են վորոնելի գիծը (որինակ՝ ծայրակետերը). այնուհետև գտնում են ոժանդակ կետեր, վորոնց քանակը կախում ունի գծի բարդությունից:

Ոժանդակ հարթությունները պետք է այնպես ընտրել, վոր տված մարմինների մակերևույթի վրա ստացվեն պարզ գծեր: Որինակ՝ գլանի դեպքում հարմար են գլանի առանցքին ուղղահայաց կամ զուգահեռ հարթությունները. կոնը պետք է հատել առանցքին ուղղահայաց կամ առանցքով անցնող և կամ զազաթով անցնող հարթություններով: Այս կամ այն ոժանդակ հարթության պետքականուցյունը պետք է վորոշել յուրաքանչյուր դեպքում առանձին՝):

Հաճախ անհրաժեշտ է լինում անցման գիծը պատկերել գծագրի վրա: Մեքենաշինարարական դետալներում անցումը մի ձեվից մյուսին մեծ մասամբ ուղեկցվում է կորացումով. այդ դեպքերում ցույց են տալիս անցման գծերը, քանի վոր առանց այդ գծերի այնպեսի ապավորություն է ստացվում, վոր կարծեք թե մակերևույթը հարթ է:

Անցման գծերի կառուցման խնդիրները լուծելիս պետք է քննարկել այն յերկրաչափական ձևերը, վորոնք տեխնիկական ձևերի հիմք են ծառայում: Հարցը վերածվում է յերկրաչափական մակերևույթների (հարթ և կոր) հատման մի քանի դեպքերի:


1) Հարթությունների պատկերումն ու նշանակումը եպյուրի վրա՝ տես § 38, 240—242 գծագրերը:

§ 47. ՅԵՐԿՈՒ ՊՐԻՉՄԱՆԵՐԻ ՓՈՒՀԱՏՈՒՄԸ

269-րդ դժագրի վրա տված և 267-րդ դժագրի վրա պատկերված դեպքի կառուցումը: Քառանկյուն պրիզմայի ABCD նիստի հատումը յեռանկյան պրիզմայի թեք նիստի հետ (KM ուղիղը) կողմնային պրոյեկցիայի վրա պատկերվում և  $k'$  և  $m''$  կետերով: այս կետերին համապատասխանում են  $k$  և  $m$  կետերը հորիզոնական պրոյեկցիաների վրա և  $k'$  և  $m'$  կետերը ճակատի պրոյեկցիայի վրա: ABCD նիստն ինքը ներկայացնում և ոժանդակ հարթութուն, վորի ուղնությամբ գտնված են  $k'$  և  $m'$  կետերը: Այս հարթութունը հատվելով յեռանկյուն պրիզմայի թեք նիստի հետ, առլիս և մի ուղիղ, վորը ճակատի պրոյեկցիայում հատում և  $a'c'$  և  $b'd'$  հատվածները  $k'$  և  $m'$  կետերում:

§ 48. ՊՐԻՉՄԱՆՅԻ ՅԵՎ ԲՈՒՐԳԻ ՓՈՒՀԱՏՈՒՄԸ

Պրիզմայի վերևի նիստով (զձ. 270) կարելի յե անցկացնել ոժանդակ հարթութուն, վորը հատվելով տված բուրգի հետ՝ տա-




ԿՃ. 269

լիս և բուրգի հիմքի քառանկյան համան քառանկյուն: Այս քառանկյան վրա նշված են  $k$  և  $m$  կետերը.  $k$  կետը բուրգի կողի պրոյեկցիայի վրա, իսկ  $m$  կետը՝ պրիզմայի կողի պրոյեկցիայի

վրա: Նույնը կարելի յե անել նաև պրիզմայի ստորին հիմքի հետ ( $n$  և  $o$  կետերը): Հորիզոնական պրոյեկցիայի վրա  $k$  և  $n$  կետերը կարող են վորոշվել  $k'$  և  $n'$  կետերի դիրքերով, վորոնք հեշտությամբ կվորոշվեն ճակատի պրոյեկցիայի վրա:  $m$  և  $o$  կետերով վորոշում են  $m'$  և  $o'$  կետերի դիրքը ճակատի պրոյեկցիայի վրա:

Քանի վոր SA կողը ճակատի հարթության վրա պրոյեկտվում և բնական մեծությամբ, ապա կողմնային մակերևույթի




Գձ. 270

բացվածքը կառուցելու ժամանակ կարելի յե վերցնել  $SK = s'k'$ ,  $SN = s'n'$  հատվածները:  $K$  և  $N$  կետերով պետք և անցկացնել AB-ին զուգահեռ ուղիղներ և նրանց վրա վերցնել  $KM = km$  և  $NO = no$  հատվածները, քանի վոր  $km$ -ը և  $no$ -ն հավասար են պրոյեկտվող հատվածներին:

§ 19. ՅԵՐԿՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳԼԱՆՆԵՐԻ ՓՈԽՆԱՏՈՒՄԸ

1-ին դեպք. Գլանների առանցքները փոխադրամասաց են (գծ. 271):

Ամբողջ կառուցումը վերածվում է հատման գծի ճակատի պրոյեկցիան գտնելուն, քանի վոր գլանների տված դասավորութայան դեպքում հատման գիծը հորիզոնական հարթութայան վրա




Գծ. 271

Գծ. 272

պրոյեկավում է վորպես շրջանագիծ, իսկ կողմնային հարթութայան վրա՝ շրջանագծի աղեղ, վորը գտնվում է  $b''$  և  $d''$  կետերի միջև:  $b''$  կետը հնարավորություն է տալիս հեշտութայամբ գտնելու  $b'$  կետի դիրքը ճակատի պրոյեկցիայի վրա: Անցման կորի ճակատի պրոյեկցիան անցնում է  $a'$ ,  $b'$  և  $c'$  կետերով:  $k'$  և  $m'$  միջանկյալ կետերը գտնված են հատող հարթութայան միջոցով, վորը կողմնային հարթութայան վրա նշանակված է  $S_w$  հետքով:  $S$  ոժանդակ հարթութունը, հատելով չերկու գլանները, տալիս է նրանց ծնիչները: Այդ ծնիչների ճակատի պրոյեկցիաների հատումից վորոշվում են  $k'$  և  $m'$  վորոշնելի

կետերը: Գլանների հատումն ոժանդակ հարթութայամբ՝ պատկերված է 272-րդ գծագրի վրա:

273-րդ գծագրի վրա կառուցված է 271-րդ գծագրի հորիզոնական զլանի մակերևույթի մասի բացվածքը: AC հատվածը վերցնում են 271-րդ գծագրի հորիզոնական պրոյեկցիայի ac հատվածին հավասար: Նույնպես և  $O_1K$  և  $O_2M$  հատվածները բացվածքի վրա վերցված են 271-րդ գծագրից: Ինչ վերաբերում է BD,  $O_1K$  և  $O_2M$  (գծ. 273) հատվածներին, ապա նրանք ներկայացնում են  $b''d''$  և  $a''k''$  ուղղված աղեղները (տես կողմնային տեսքը 271-րդ<sup>1)</sup> գծագրի վրա): Հետևաբար 273-րդ գծագրի վրա BD,  $O_1K$ ,  $O_2M$  հատվածներն ավելի մեծ են քան համապատասխան հատվածները 271-րդ գծագրի վրա:




Գծ. 273

Միացնելով A, K, B, M, C կետերը և նրանց համաչափ կետերն առանցքային գծի մյուս կողմում, գլանի կողմնային մակերևույթի բացվածքի վրա ստանում են փակ կոր:


274-րդ գծագրի վրա պատկերված է յերկու հավասար տրամագծեր ունեցող գլանների փոխհատման դեպքը: Անցման կորի ճակատի պրոյեկցիան ներկայացնում է ուղիղ գծի հատված: Իրոք, այդ հատվածը ներկայացնում է այն ելիպսի պրոյեկցիան, վորն ստացվում է չուրաքանչյուր գլանի հատումից հարթութայամբ, ինչպես 265-րդ գծագրի վրա յեր:

Յուրաքանչյուր գլանի կողմնային մակերևույթի բացվածքի կառուցումը կատարում են 265-րդ գծագրի վրա ցույց տված լեղանակով. յերկու գլանների բացվածքները միատեսակ են ստացվում (գծ. 275):

1) Աղեղներն ուղղելու մասին տես § 20-ը:



Գծ. 274




Գծ. 275

2-րդ դեպք. Գլանների առանցքները չեն հասվում ուղիղ անկյան անկյունի:

Այս դեպքում հաստման գծի հորիզոնական պրոյեկցիան շրջանագիծ չի լինի. այդ պրոյեկցիան պետք է գտնել կետերով, ինչպես և ճակատի պրոյեկցիան:

Թեք գլանի նիստի հորիզոնական և կողմնային պրոյեկցիա-

ները կառուցելու համար պետք է անցկացնել ուժանդակ կիսաշրջանագիծ (գծ. 276) և այն բաժանել մասերի: Ճակատի պրոյեկցիայի վրա կիսաշրջանագծի բաժանման կետերով անցկացնելով գլանի ազանցքին զուգահեռ ուղիղներ՝ ստանում են 1—1, 2—2 և 3—3 հատվածները, վոր կարելի չե վերցնել հորիզոնական և կողմնային պրոյեկցիաների վրա անփոփոխ, ինչպես ցույց է



Գծ. 276

աված 276-րդ գծադրի վրա: Ստացված կետերը պատկանում են շրջանի պրոյեկցիաներին—ելիպսներին:

Գլանների հաստման կորի պրոյեկցիաները կառուցելու համար ընտրում են ուժանդակ հարթություններ, վորոնք զուգահեռ են թեք գլանի ծնիչներին և միաժամանակ զուգահեռ են պրոյեկցիաների ճակատի հարթության: Այս դեպքում նիշտ է ստանալ յերկու գլանների համար ել ծնիչներ, վորոնց հաստման կետերը պատկանում են հաստման վորոտելի գծին:

Հետևենք, որինակ,  $b'$  կետը գտնելուն: Հատույթի ոժանդակ հարթությունը թեք գլանը հատում է ծնիչով, նրանցից մեկը ցույց է տված ճակատի պրոյեկցիայի վրա 1 կետում՝ գլանի առանցքին զուգահեռ: Գտնելով  $b''$  կետը կողքի տեսքի վրա, հորիզոնական գլանի պրոյեկցիայի վրա, դրանով նշում են յերկու գլանների ծնիչների հատման տեղը: Տանելով հորիզոնական գլանի առանցքին ուղիղ՝ մինչև թեք գլանի ծնիչի պրոյեկցիայի հետ հատվելը, գտնում են վորոնելի  $b'$  կետը, վորը պատկանում է յերկու գլանների հատման գծի ճակատի պրոյեկցիային:  $b$  կետը գտնում են կետի հորիզոնական պրոյեկցիայի ( $b$ ) սովորական կառուցումով՝ նրա յերկու պրոյեկցիաներով, ճակատի ( $b'$ ) և կողքի ( $b''$ ) հարթությունների վրա: Ամենացածի կետը ճակատի պրոյեկցիայի վրա ( $c'$ ) գտնում են միջին ծնիչի վրա՝  $c''$  կետով (տես կողքի տեսքը):  $c'$  և  $c''$  կետերով գտնելով  $c$  կետը հորիզոնական պրոյեկցիայի վրա, վորոշում են անցման կետը ծնիչի պրոյեկցիայից անցման կորի պրոյեկցիային:  $a$  և  $d$  կետերի կառուցումը կատարում են ճակատի պրոյեկցիայի վրա նշված  $a'$  և  $d'$  կետերով:

Անցման կորի հորիզոնական և ճակատի պրոյեկցիաների համար կետեր գտնելու հետագա կառուցումները կատարվում են այնպես, ինչպես և  $B$  կետը գտնելիս:

### § 50. ԳԼԱՆԻ ՀԱՏՈՒՄԸ ԿՈՆԻ ՀԵՏ


Կառուցումը կատարված է 277-րդ գծագրի վրա՝ հորիզոնական ոժանդակ հարթությունների ուղիղությամբ, վորոնք կոնի մակերևույթը հատելիս շրջանագիծ են տալիս, իսկ գլանային մակերևույթի վրա — ծնիչներ: Հատման կորի կետերը հորիզոնական պրոյեկցիայի վրա ստացվում են, յերբ շրջանագծերը հատվում են ծնիչների հետ: Այս կետերով գլանի ծնիչների ճակատի պրոյեկցիայի վրա ստանում են մի շարք կետեր՝ ճակատի հարթության վրա հատման կորն անցկացնելու համար:

Կառուցումը, ինչպես սովորաբար, սկսում են  $x$ ,  $y$ ,  $y'$  բնորոշող կետերից: Այնուհետև գտնում են միջանկյալ կետեր՝ կորը ճշգրտորեն անցկացնելու համար անհրաժեշտ քանակությամբ:

Որինակ, այն հարթությունը, վորի հետքերը նշանակված

են  $S_V$ -ով և  $S_W$ -ով, միաժամանակ հատում է գլանն ու կոնը, ստաշինից անջատելով  $a''x'a''$  (տես կողքի տեսքը) շերտը (горбыль — խորակ), իսկ կոնի հետ հատվելով տալիս է շրջան, վորի շառավիղը վորոշվում է կողքի տեսքի վրա, վորպես  $ok$ :

Հորիզոնական պրոյեկցիայի վրա անցկացնելով  $R = ok$  շրջանագիծը և վորտաղելով այնտեղ կողքի տեսքից  $a''a''$  կետերը՝



Գծ. 277


ստանում են  $a$  կետերը — գլանը և կոնը միևնույն հարթությամբ հատելուց առաջացած հատման գծերի ընդհանուր կետերի հորիզոնական պրոյեկցիաները:

Պրոյեկտելով  $a$  կետերն  $S_V$  հետքի վրա՝ գտնում են  $a'$  կետերը, վորոնք պատկանում են գլանի և կոնի հատման գծի ուղիղաձիգ պրոյեկցիային:

Վորպես որինակ տված և կոնական ջղերի և առանցքա-

կալի խուփի հիմնական գլանաձև մակերևույթի հատման կտրերի կառուցումը (գծ. 278):

Վերևի կոնական ջղի հատման գիծը խուփի հետ կողքի տեսքում գծագրում են  $x''$  և  $y''$  յերեք բնորոշ կետերով, նույնպես և հորիզոնական պրոյեկցիայում ստացվում և ուղալային գիծ  $x$  և  $y$  կետերով, փոխադրելով նրանց ուղղաձիգ պրոյեկցիաներից: Անհրաժեշտ չէ, վոր այդ փոխադրությունն առաջադրման իրականացվի պրոյեկցիաների առանցքների հատման կետից այնպես, ինչպես ա.դ. ցույց և տված 277-րդ գծագրի վրա: Բավական է



Գծ. 278

առանցքային գծերի վրա  $O$  կետից (գծ. 278) չափակարկինով անջատել համապատասխան ուղղաձիգ պրոյեկցիաներից վերջրած հեռավորությունները, կամ անկյունարդով և ուղղաձիգով միջոցով պրոյեկտել  $x'$  կետերն առանցքային գծի վրա հորիզոնական պրոյեկցիայի մեջ:

Կողմնային կոնական ջղերի և առանցքակալի խուփի հիմնական գլանային մակերևույթի հատման գծերի կառուցումը 278-րդ գծագրի վրա՝ կատարված է հորիզոնական ոճանդակ հար-

թությունների ողնությամբ գտած կետերով: Այդ հարթությունները հատվելով կոնական ջղերի հետ (այստեղ կոնական ջղի տեղանիական ձևի հիմք է ծառայում հատած կոնի յերկբաչափական ձևը) տալիս են համակենտրոն շրջանագծեր, իսկ առանցքակալի խուփի հետ հատվելով (գլանային մակերևույթ) տալիս են ծնիչներ:

Հորիզոնական հարթության վրա գտնելով մեկ և մյուս գծերի հատման կետերը՝ փոխադրում են այդ կետերը կողմնային տեսքի վրա՝ վորտեղ ստանում են մի կոր գիծ—հատման գծի պրոյեկցիան:


### § 51. ՎԵՑՆԻՍ ՊՐԻՉՄԱՅԻ ՀԱՏՈՒՄԸ ԿՈՆԻ ՀԵՏ

279-րդ գծագրի վրա յերկու պրոյեկցիաներով պահերված ուղիղ շրջանային կոնի և ուղիղ վեցնիստ պրիզմայի հատման գիծը գտնելու համար հարմար են հորիզոնական ոճանդակ հարթությունները, վորոնք հատվելով վեցնիստ պրիզմայի հետ տալիս են կանոնավոր վեցանկյուն (տես հորիզոնական պրոյեկցիան), իսկ կոնի հետ հատվելով—մի շարք համակենտրոն շրջանագծեր: Հորիզոնական հարթության վրա ստացված շրջանագծերի և վեցնիստի հատման կետերը պրոյեկտելով համապատասխան ոճանդակ հարթությունների հետքերի վրա՝ ստանում են կետեր—հատման գծի ճակատի պրոյեկցիան կառուցելու համար:

Հատելով, որինակ, կոնը և պրիզման այն հարթությունով, վորի հետքը նշանակված է  $S_v$ -ով, վորոշում են կոնի մակերևույթը տված հարթությամբ հատելուց առաջացած շրջանագծի  $R$  շառավիղը: Հորիզոնական հարթության վրա գծելով  $O$  կենտրոնից  $R$  շառավիղն ունեցող շրջանագիծ՝ ստանում են շրջանագծի և վեցանկյան  $a$  կետերը—թվով 12 հատ: Պրոյեկտելով այդ կետերը  $S_v$  հետքի վրա՝ ստանում են տված մակերևույթների հատման գծի ճակատի պրոյեկցիայի վրա գտնվող  $a$  կետերը: Հատման գծի ուղղաձիգ պրոյեկցիայի ա՛հնարարձը  $b$  կետերը գտնված են այն հատող հարթության ողնությամբ, վորի հետքը նշանակված է  $T_v$ -ով:

Վորպեսզի վորոշենք, թե ինչ բարձրության վրա պետք է վերցնել  $T$  հարթությունը, հորիզոնական պրոյեկցիայի վրա պետք է տանել վեցանկյան ներգծված շրջանագծի աղեղ՝ մինչև առանց-

քի հետ  $k$  կետում հասնելը:  $k$  կետն ընդունելով վորպես հորիզոնական պրոյեկցիա՝ գտնում են նրա համապատասխան  $k'$  ուղղաձիգ պրոյեկցիան (կոնի ծնիչի վրա): Հենց  $k'$  կետով ել պետք է անցնի  $T_v$  հետքը: Վեցանկյան ներգծած շրջանագիծը ներկայացնում է կոնի հատման գիծը  $T$  հարթութան հետ, իսկ քանի



Գծ. 279


հանդիսանում են հիպերբոլի ճյուղեր, քանի վոր ստացվում են կոնի հատումից՝ առանցքին զուգահեռ հարթություններով:

Այսպիսի զեպը մենք տեսնում ենք կոնական յերեսուկ (фаска) ունեցող վեցնիստ պտուտակամայրի (գայիկա) զեպքում (գծ. 280): Այսպիսի պտուտակամայրի կողմնային նիստերը սանձանափակվում են կորերով (հիպերբոլիկերով), վորոնց կառուցումը կատարվում է վերը ցույց տված չեղանակով, այսինքն հատող հարթությունների ոգնությունը (գծ. 279):

Պտուտակամայրի զմազրելիս սովորաբար հիպերբոլի տեղ

անց են կացնում շրջանագծի աղեղներ: Որինակ՝ 280-րդ գծագրի վրա կարելի յի, վորոշելով  $a'$  և  $c'$  կետերի ղիրքերը, գտնել այդ կետերով անցնող աղեղների կենտրոններն ու շառավիղները:

Պետք է հիշել, վոր իրականում պտուտակամայրերի վրա կոնական յերեսուկի զեպքում հիպերբոլներ են ստացվում, իսկ




Գծ. 280


յերբ տանում են շրջանագծի աղեղներ, ապա այդ անում են կառուցման հեշտություն համար միայն:

§ 52. ՏԱՐԲԵՐ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՆՀԱՏՄԱՆ ՈՐԻՆԱԿՆԵՐ

281-րդ գծագրի վրա պատկերված է բռնակը (рукоятка), վորը ներկայացնում է գնդական մակերևութի հատման որինակ կոնական և գլանային մակերևութների հետ: Բռնակի գնդային մասը ներքեից կտրված է. գնդային մակերևութի հատումն ուղղաձիգ գլանային բացվածքի հետ՝ տալիս է հատման գիծ, վորի ճակատի պրոյեկցիան ուղիղ գիծ է, իսկ հորիզոնականը՝ շրջանագիծ: Նման բան է ստացվում գնդային մակերևութի հատու-



Գձ. 281



Գձ. 282

մից հորիզոնական գլանային բացվածքի հետ, փոխվում են միայն հատման գծի պրոյեկցիաների տեղերը, այսինքն՝ հորիզոնական պրոյեկցիան կլինի ուղիղ գիծ, իսկ ճակատի պրոյեկցիան — շրջանագիծ:


Վերջապես բռնակի գնդային մասը հատվում է կոնականի հետ մի գծով, վորի ճակատի պրոյեկցիան, բռնակի մասերի 281-րդ գծագրի վրա ցույց տված փոխադարձ դասավորության դեպքում, ուղիղ գիծ է, իսկ հորիզոնական պրոյեկցիան մի կոր է, վորը գծվում է չերեք ընտրոշ կետերով:

282-րդ գծագիրը ներկայացնում է առանցքակալի խուփը (պատկերված է նրա մեկ կետը միայն) յերեք պրոյեկցիաներով:

Հիմնական ձևը գնդային է, ունի կոնական շղեր բոլորի համար և վերևից կոնաձև հավելված: Վորջինը հատվելով գնդի հետ՝ տալիս է շրջանագիծ, վորը յերևում է հորիզոնական պրոյեկցիայի մեջ, և յերկու ուղղաձիգ պրոյեկցիաների վրա ստացվում է ուղիղ գիծ:

Բոլորային անցքերի տակ գանձող շղերի հատումը խուփի հիմնական ձևի հետ՝ ներկայացնում է մի կոր գիծ, վորի կառուցումը կատարվում է կետերով, ինչպես այդ ցույց է տված 282-րդ գծագրի վրա: Վորպես ոժանդակ հարթութուններ վերցված են հորիզոնական հարթութուններ, վորոնք ինչպես կոնի, այնպես և գնդի հետ հատվելով տալիս են շրջանագծեր, առաջին դեպքում՝ գծված  $O_1$  կենտրոնից, իսկ յերկրորդ դեպքում՝  $O$  կենտրոնից: Այդ շրջանագծերի հանդիպման կետերը հորիզոնական հարթության վրա նշում են հատման գծի հորիզոնական պրոյեկցիան: Այդ կետերով պահում են կետեր ճակատի և կողմնային պրոյեկցիաների վրա սժանդակ հատող հարթությունների հետքերի վրա:

283-րդ գծագրի վրա տված է համակցված մտրվնի հորիզո-




Գձ. 283

նախան պրոյեկցիան կառուցելու որինակ. այդ մարմինը կազմված է յերկու զլաններից և պրիզմատիկ վորվածք ունեցող հատած կոնից: Տված է ճակատի պրոյեկցիան, վորի վրա յերևում է վորվածքի խորութիւնը: Հորիզոնական պրոյեկցիան (տեսքը վերևից) ճիշտ գծելու համար պետք է անց կացնել ոժանդակ հատող հարթութիւն վորվածքի հիմքից (այդ հարթութեան հետքը  $S_v$ -ն է): Յերբ կոնը հատվում է  $S$  հարթութիւնով, ստացվում է շրջան, վորի տրամագիծը հալասար է  $k'm'$  հատվածին:  $k'$  կետը պրոյեկտում են հորիզոնական պրոյեկցիա յիկնատրոնական գծի վրա և  $ok$  շառավիղով գծում են աղեղ:

§ 53. ԴԻՏՈՂԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄՆԵՐ

Պատկերելով առարկան այնպես, ինչպես նա յերևում է աչքին, ստանում են չափազանց զիտողական պատկեր, բայց մասերի չափերի զգալի ազճատումով:

Որթողոնալ (ուղղանկյուն) պրոյեկցիաների սխտեմը հնարավորութիւն է տալիս մարմինը պատկերել առանց չափերի ազճատման, բայց վորոշ դեպքերում բարդ առարկաներ գծագրե-



Գծ. 284

լիս հեշտ չէ պարզ տեսողական պատկերացում կազմել առարկայի ձևի մասին: Այդ պատճառով ցանկալի յե հնարավորութիւն ունենալ՝ վորպես որթողոնալ պրոյեկցիաների լրացում տալ բավականին զիտողական և միաժամանակ կառուցման համար յոչ բարդ պատկերումներ:

284-րդ գծագրի վրա համադրված են խորանարդի չորս պատկերումներ:  $B$ ,  $B$  և  $\Gamma$  պատկերացումների էյական տարբերութիւնն  $A$  պատկերումից (հեռանկարային) հանդիսանում է խորանարդի կողերի և նիստի զուգահեռութեան պահպանումը: Այդ պատկերումները ներկայացնում են խորանարդի պլան-

յեկցիաները մեկ հարթութեան վրա, ընդ վորում հարթութունը վերցված է այնպես, վոր միանգամից ստացվի առարկայի (խորանարդի) պատկերը յերեք կողմից: Այս դեպքում, պահպանելով կառուցման վորոշ կանոններ, կարելի յե ստանալ առարկայի զլխավոր չափերն անմիջական չափումներով:

Հետագայում  $B$  պատկերումը կանվանենք Ֆրոնտալ պրոյեկցիա,  $B$  պատկերումը—իզոմետրիկ պրոյեկցիա,  $\Gamma$  պատկերումը—դիմետրիկ պրոյեկցիա: Այս բոլոր պրոյեկցիաները կոչվում են աֆոնոմետրիկ պրոյեկցիաներ. «աքսոնոմետրիա» բառը նշանակում է «չափում ըստ առանցքների»<sup>1)</sup>:  $B$ ,  $B$  և  $\Gamma$  պատկերներից յուրաքանչյուրը կարելի յե ներկայացնել դասավորված ըստ  $X$ ,  $Y$  և  $Z$  առանցքների. 285-րդ գծագրի վրա նշված են վերը հիշատակված պրոյեկցիաների համար կիրառվող առանցքների կազմած անկյունները:  $Z$  առանցքն ուղղաձիգ է:  $B$ ,  $B$  և  $\Gamma$  տիպի պատկերումները (գծ. 284), հեռանկարային պատկերման հետ նմանութիւն ունենալու և իրականում իբար գուգահեռ յեղած կողմերի զուգահեռութեան պահպանման պատճառով հաջախ անվանում են զուգահեռ հեռանկար:

§ 54. ՖՐՈՆՏԱԼ ՊՐՈՅԵԿՏԻԱ


Պայմանավորվենք Ֆրոնտալ պրոյեկցիան կառուցելու համար ընդունել, բացի 285-րդ գծագրի վրա նշված անկյուններից, նաև  $\gamma$  առանցքին զուգահեռ չափերի կրճատում՝ յերկու անգամ<sup>2)</sup>: Գառակուսի հիմք ունեցող պրիզմայի այդ պայմաններով կառուցված Ֆրոնտալ պրոյեկցիան պատկերված է 286-րդ գծագրի վրա: Կառուցումը կարելի յե կատարել՝ յենելով պրիզմայի ճակատի պրոյեկցիայից, վորը (պրիզման գրված է այնպես, վոր նրա նիստերը զուգահեռ լինեն պրոյեկցիաների հարթութիւններին: Վերցնելով  $a'b'c'd'$  ճակատի պրոյեկցիան (գծ. 287), պետք է  $a'$ ,  $b'$  և  $c'$  կետերից անցկացնել  $Y$  առանցքին զուգա-

1) Գծագրական յերկարաչափական դասընթացում և աքսոնոմետրիայի հատուկ ձեռնարկներում ցույց է տրվում, վոր քննարկվող իզոմետրիկ և դիմետրիկ պրոյեկցիաները ներկայացնում են ուղղանկյուն աքսոնոմետրական պրոյեկցիաների հատուկ դեպքեր, իսկ Ֆրոնտալ պրոյեկցիան ներկայացնում է շեղանկյուն աքսոնոմետրական պրոյեկցիաների դեպքերից մեկը:

2) Այս դեպքում ստացված պատկերումը կոչվում է կարինեսային պրոյեկցիա:

հետ ուղիղներ և նրանցից մեկի վրա վերցնել պրիզմայի հիմքի կեսին հավասար մի հատված: այնուհետև  $K'$  կետից պետք է անցկացնել  $b'c'$  և  $a'b'$  կողմերին զուգահեռ ուղիղներ:

288-րդ գծագրի վրա աված է այն բուրգի ֆրոնտալ պրոյեկցիայի կառուցումը, Վորը պատկերված է որթագոնալ պրոյեկցիաներով: կառուցելով բուրգի հիմքը ( $AB = ab, CD = \frac{cd}{2}$ ),  $\circ$



Գծ. 285


Գծ. 288

կետից անում են  $OS$  ուղղաձիգ հատվածը, հավասար բուրգի բարձրությունը: Մնում է  $S$  կետը միացնել հիմքի զագաթների հետ՝ անասանիկ կոլերը նշելով կետագծերով: Իսկ անասանիկները—հոծ գծերով:

Փրոնտալ պրոյեկցիան հանձնարարվում է կիրառել այնպիսի մարմիններ պատկերելու համար, վորոնք սահմանավակված են հարթութուններով, կամ այնպիսի շրջանագծեր պատկերելու համար, վորոնք գտնվում են պրոյեկցիաների ճակատի հարթության զուգահեռ հարթութունների մեջ: Իրոք, ներգծած շրջանագծով քառակուսու ֆրոնտալ պրոյեկցիան պատկերվում է (գծ. 289) առանց գոփոխության, այն նրա քառակուսին մնում է քառակուսի, իսկ շրջանագիծը—շրջանագիծ, յեթև այն հարթու-

թյունը, վորի մեջ գտնվում է քառակուսին, զուգահեռ է պրոյեկցիաների ճակատի հարթությանը:


Յեթև շր անագիծը գտնվում է հորիզոնական հարթության մեջ, ապա նրա ֆրոնտալ պրոյեկցիան ընդունում է 290-րդ գծագրի վրա պատկերված տեսքը: Պրոյեկցիան կառուցելու համար



Գծ. 287

Գծ. 288

պետք է շրջանագիծը  $CD$  տրամագծին զուգահեռ լարերի ոգնությամբ բաժանել մասերի: Այնուհետև  $AB$  տրամագիծը վերցնում են զուգահեռ  $X$  առանցքին, իսկ  $CD$  տրամագիծը, յերկու ան-




Գծ 289

Գծ. 290

գամ փոքրացրած, — զուգահեռ  $Y$  առանցքին:  $AB$  տրամագծի վրա նշում են 1, 2, 3 և այլն կետերն այնպես, ինչպես նրանք նրգված ենին շրջանագծի վրա  $CD$ -ին զուգահեռ տարած լարերը

պիտք և յերկու անգամ փոքրացած լինեն: Շրջանի պրոյեկցիան դառնում և ելիպս, վորի մեջ առանցքը թեք և AB արամագծի նկատմամբ: Մրա հետևանքով գլանների և կոների պատկերման ժամանակ ստացվում և վորոշ թեքվածության (խոտորնակության) տպավորություն. այդ տպավորությունն ուժեղանում և հատկապես այն դեպքում, յերբ Ֆրոնտալ պրոյեկցիան կիրառում են առանց ըստ Y առանցքի կրճատման<sup>1)</sup>: 291-րդ գծա-



ԳՃ 291

գրի վրա պատկերված և խորանարդ (վորի քառակուսիներին ներգծված են շրջանագծեր), գլաններ, կոներ, վորոնք կառուցված են առանց ըստ Y առանցքի կրճատման:

Այսպիսով Ֆրոնտալ պրոյեկցիայի մասին պետք և նկատել, վոր նա հարմար և և արտահայտիչ, յերբ պատկերում են այնպիսի մարմիններ, վորոնք սա՛մանափակված են պրոյեկցիաների ճակատի հարթությանը զուգահեռ հարթություններով և շրջաններով: Մնացած դեպքերում նախընտրելի յև իզոմետրիկ կամ դիմետրիկ պրոյեկցիայի կիրառումը:

§ 5<sup>7</sup>. ԻԶՈՄԵՏՐԻԿ ՊՐՈՅԵԿՑԻԱ


Իզոմետրիկ<sup>2)</sup> պրոյեկցիայի մեջ առանցքներն իրար հետ կազմում են  $120^\circ$  անկյուն: Պետք և վորպես կոորդինատների սխիզը բնդունված O կետից գծել կամայորին վեցրած շառավիղով շրջանագիծ և նրա վրա նշել յերեք կետ այնպես, ինչպես

1) Պատահում են Ֆրոնտալ պրոյեկցիայի զանազան ձևեր՝ ըստ առանցքի թեքության Y ( $30^\circ, 45^\circ, 60^\circ$ ) և ըստ առանցքի կրճատման Y ( $\frac{1}{2}, \frac{1}{3}$ ):


Հաճախ Ֆրոնտալ պրոյեկցիան կիրառում են առանց ըստ Y առանցքի կրճատման:

2) Իզոմետրիկ — հավասար չափում:

կանոնավոր յուանկյուն ներգծելիս (տես § 14): Միացնելով O կետը շրջանագծի վրա նշված կետերի հետ՝ ստանում են իզոմետրիկ առանցքների ուղղությունները (գծ. 292): Յերբ Z առանցքն ուղղաձիգ ուղղություն ունի, X և Y առանցքները




ԳՃ. 292



ԳՃ. 293

հորիզոնական ուղղության հետ  $30^\circ$  անկյուն են կազմում (գծ. 293).  $30^\circ$  անկյունը կարելի յև կառուցել յերկրաչափական սովորական յեղանակով կամ 10 : 17 հարաբերությունով:


294-րդ գծագի վրա պատկերված և խորանարդն իզոմետրիկ պրոյեկցիայով. խորանարդի նիստերին շրջանագծեր են ներգծված: Սորանարդի կողերն, իրենց բնական մեծությունների հետ բաղադատած, կարճանում են միևնույն չափով (0,82): Հետևաբար խորանարդի իզոմետրիկ պրոյեկցիայի յեղրագիծ կազմող վեցանկյան բոլոր կողմերն




ԳՃ. 294

իրար հավասար են, խորանարդի նիստերը (քառակուսիներ) պատկերված են  $60^\circ$  սուր անկյուն ունեցող շեղանկյունների


տեսքով, իսկ շրջանագծերն՝ ելիպսների տեսքով: Հաճախ կառուցում են իզոմետրիկ պրոյեկցիա՝ առանց ըստ առանցքների կրճատման, այսինքն ստանում են փոքր ինչ մեծացրած պատկեր: 0,82 կրճատումը հեշտ է ստանալ համեմատական մասշտաբի ուղնությամբ, վորը պատկերված է 294 ա գծագրի վրա: Յեթե



Գծ. 294 ա



Գծ. 295



Գծ. 296

45°-ի հավասար ABC անկյան AB կողմի վրա վերցնենք Ba հատվածը և a կետից BC-ին ուղղահայաց տանենք, ապա 30°-ի հավասար DBC անկյան DB կողմի վրա կտացվի Bd հատվածը, վորը կազմում է 0,82 Ba: Նույնպես և Bd հատվածը  $\approx 0,82 Ba$ :

Ապացուցում (յեռանկյունաչափություն).

$$Bc = Ba \cdot \cos 45^\circ \approx Ba \cdot 0,71$$

$$Bc = Bd \cdot \cos 30^\circ \approx Bd \cdot 0,87$$

հետևաբար՝

$$Bd \cdot 0,87 \approx Ba \cdot 0,71$$

$$Bd \approx \frac{0,71}{0,87} Ba \approx 0,82 Ba:$$



295-րդ գծագրի վրա պատկերված է պրիզմա: Կառուցումը պետք է սկսել վերևի նիստից, վերցնել A կետը—պրիզմայի զազաթներից մեկը, այդ կետից տանել X և Y առանցքներին զուգահեռ ուղիղներ, այդ ուղիղների վրա անջատել պրիզմայի հիմքի կողմերին հավասար կամ 0,82 կրճատումով հատվածներ և վերևի նիստի կառուցումը վերջացնել, գիտենալով, վոր քառակուսին դառնում է շեղանկյուն, իսկ ուղղանկյունը—քառակուսի Այնուհետև A, B և D կետերից պետք է անցկացնել Z առանցքին զուգահեռ ուղիղներ և նրանց վրա անջատել պրիզմայի բարձրությանը հավասար կամ 0,82 կրճատումով հատվածներ: Ստացված E, F և H կետերը պետք է միացնել այնպես, ինչպես ցույց է տված 295-րդ գծագրի վրա:

296-րդ գծագրի վրա տված է յեռանիստ պրիզմայի պատկերումն որթոգոնալ պրոյեկցիաներով և իզոմետրիկ պրոյեկցիայով:

Կառուցումն սկսված է պրիզմայի վերևի նիստից, AB հատվածը տարված է զուգահեռ X առանցքին: Այնուհետև հորիզոնական պրոյեկցիայի c կետից իջեցված է ուղղահայաց ab կողմին: k կետը ֆոխսարված է AB հատվածի վրա ( $AK = ak$ , յեթե իզոմետրիկ պրոյեկցիան կառուցում են առանց կրճատման, իսկ յեթե կրճատումով են կառուցում, ապա  $AK = 0,82ak$ ): K կետից տանում են Y առանցքին զուգահեռ և նրա վրա վերցնում են KC հատվածը, վորը հավասար է kc-ի, կամ կրճատված՝ 0,82 kc-ի: Մնում է A և B կետերը միացնել C-ի հետ և ապա այդ կետերից տանել Z առանցքին զուգահեռներ և վերջինների վրա

անջատել պրիզմայի բարձրությունը բնական մեծությունը կամ 0,82 կրճատումով:


297-րդ և 298-րդ գծագրերի վրա կառուցված է վեցնիստ բուրգի իզոմետրիկ պրոյեկցիան: Կառուցումն սկսված է բուրգի հիմքից: Վեցանկյան մեջ (գծ. 297) նշված են X և Y առանցքը:



Գծ. 297

Գծ. 298


Ներքևի ուղղությունները: Այդ առանցքները փոխադրված են իզոմետրիկ պրոյեկցիայի վրա և նրանց վրա անջատված են համա-



Գծ. 299

պատասխան հատվածներ 7 և 8 կետերից տարված են ուղիղներ՝ առանցքներին զուգահեռ: Յեթն իզոմետրիկ պրոյեկցիան կառուցում են առանց կրճատման, ապա 1—4, 7—8, 2—3 և 6—5 հատվածները պահպանում են իրենց մեծությունը: Օ կետից պետք է տանել Z-ին զուգահեռ ուղիղ և նրա վրա անջատել SO հատվածը (գծ. 297), վորը հավասար է բուրգի բարձրության: Անտեսանելի կողերը տարված են շտրիխային գծերով:

Յեթն ուղիղը զուգահեռ չէ առանցքին, ապա իզոմետրիկ պրոյեկցիայի մեջ այդ ուղիղը պետք է կառուցել նրա ծայրակետերով: 299-րդ գծագրի վրա տված է կարկառ (յեղուստ, դուրս ցցված մաս) ունեցող սալի պատկերումը: Իզոմետրիկ պրոյեկցիայի կառուցումն սկսված է KN և KM հատվածներից, վորոնք զուգահեռ են տարված X և Y առանցքներին: Կարկառը



Գծ. 300


կառուցելու համար նրա զագաթներից մեկը կոորդինացիայի յե յենթարկված, այսինքն չափված է նրա հեռավորությունը K կետից: Այդ նպատակով հորիզոնական որթողնալ պրոյեկցիայի վրա d կետից տարված է d—1 ուղղահայացը km կողմին: Իզոմետրիկ պրոյեկցիայի վրա անջատված է K—1 հատվածը, վորը հավասար է հորիզոնական պրոյեկցիայի k—1 հատվածին, իսկ այնուհետև անց է կացված X առանցքին զուգահեռ 1—D հատվածը, վորի վրա և անջատված է 1—d-ին հավասար մի հատված: Այնուհետև D կետից տարված են X, Y և Z առանցքներ:

ըին զուգահեռ յերեք հատված: DA հատվածը հավասար է d'a' հատվածին, DC հատվածը հավասար է d'c' = dc հատվածին: C կետից անց ե կացրած Z առանցքին զուգահեռ հատված CB = c'd': Միացնելով A և B կետերը՝ ստանում են թեք հատվածի իզոմետրիկ պրոյեկցիան:

Պետք է հիշել, վոր իզոմետրիկ պրոյեկցիայի անկյուններն աղճատվում են և չեն կարող անմիջականորեն (որինակ փոխադրիչով) չափվել: Իզոմետրիկ պրոյեկցիայի մեջ անկյունները պետք է կառուցել իրենց կողմերով: Որինակը տված է 300-րդ գծագրի վրա:

§ 56. ԿՈՐ ԳԾԵՐՆ ԻԶՈՄԵՏՐԻԿ ՊՐՈՅԵԿՑԻԱՅԻ ՄԵՋ

Կոր գծերն իզոմետրիկ պրոյեկցիայի մեջ պետք է կառուցել կետերով: Որինակը տված է 301-րդ գծագրի վրա, վորտեղ կորի վրա վերցված են h բարձրությունների համապատաս-




Գծ. 301

խան մի շարք կետեր: Իզոմետրիկ պրոյեկցիայի մեջ b հատվածն ուղղված է զուգահեռ X առանցքին, իսկ h հատվածը — զուգահեռ Z առանցքին: Շարունակությունը պարզ յիբևում է գծագրից:

Պրոյեկցիաների հարթություններից մեկին զուգահեռ գտնվող շրջանագծի իզոմետրիկ պրոյեկցիայի կառուցումը կարելի չէ կա-

տարել այնպես, ինչպես ցույց է տված 290-րդ գծագրի վրա, այսինքն առանցքներից մեկին զուգահեռ լարերի ուղնությամբ: 302-րդ գծագրի վրա պատկերված է XOY, XOZ և YOZ հարթությունների մեջ գտնվող շրջանագծերի իզոմետրիկ պրոյեկցիաները: Առանցքին զուգահեռ լարերը կրճատում են ըստ տվյալ առանցքի կրճատման: Յեթե շրջանը ներկայացնենք քառակուսուն ներդված, ապա A, B, C և D կետերը կլինեն շոշափման կետեր և կհանան ելիպսների և շեղանկյունների շոշափման կետեր: Այս ելիպսներից յուրաքանչյուրի մեջ կարող են նշվել մեծ և




Գծ. 302


փոքր առանցքների ուղղությունները (գծ. 303): Յուրաքանչյուր ելիպսի մեծ առանցքն ուղղահայաց է իզոմետրիկ առանցքներից մեկին.  $K_1M_1 \perp Z$ ,  $K_2M_2 \perp Y$ ,  $K_3M_3 \perp X$ :

Յեթե կառուցում են իզոմետրիկ պրոյեկցիան ըստ առանցքների՝ 0,82 կրճատումով, ապա  $K_1M_1$ ,  $K_2M_2$  և  $K_3M_3$  հատվածներն իզոմետրիկ ելիպսների մեջ հավասար են պատկերվող շրջանագծի տրամագծին,  $N_1P_1$ ,  $N_2P_2$  և  $N_3P_3$  հատվածները հավասար են այդ տրամագծի 0,58-ին, իսկ ST հատվածը՝ այդ տրամագծի 0,82-ին:


Յեթե իզոմետրիկ պրոյեկցիան կառուցում են առանց ըստ առանցքների կրճատման, ապա նշված հատվածները (ելիպսի մեծ և փոքր առանցքները) համապատասխանաբար հավասար են




Գծ. 303



Գծ. 304



Գծ. 305




Գծ. 306

պատկերվող շրջանագծի տրամագծի 1,2-ին և 0,7-ին, իսկ ST հատվածը հավասար է տրամագծին: Այս առնչություններով կարելի լի ոգավել շրջանագծի իզոմետրիկ պրոյեկցիաները կառուցելու համար:

304-րդ գծագրի վրա կատարված է յերկու գլանային անցք ունեցող սալի իզոմետրիկ պրոյեկցիայի կառուցումը: Շրջանագծի իզոմետրիկ պրոյեկցիան կարելի լի կառուցել 302-րդ գծագրի վրա ցույց տված յեղանակով, այսինքն լարերի ոգնությունը, կամ կետերով, վորոնք չափված են անկյուններից մեկից (302-րդ գծագրի վրա ցույց է տված յերկու կետերի կառուցումը նրանց կոորդինատներով A անկյան կողմերի վերաբերմամբ): Յեթե ոգավենք ելիպսի առանցքների չափերով կառուցումից (գծ. 303), ապա պետք է O կետից (ելիպսի կենտրոնից) անցկացնել չորս



Գծ. 307



Գծ. 308


ուղիղ (305) տխպես, ինչպես տարված են  $K_1M_1$ ,  $P_1N_1$  և ST ուղիղները 303-րդ գծագրի վրա, և այդ գծագրերի վրա անջատել պատկերվող շրջանագծի տրամագծին (d) հավասար հատվածներ ( $K_1M_1$  ուղղությունը),  $0,58d$  ( $P_1N_1$  ուղղությունը) և  $0,82d$  (ST ուղղությունը): Յեթե սալի պրոյեկցիան կառուցված լիներ առանց ըստ առանցքների կրճատման, ապա վերը նշված հատվածները պետք է հավասար լինեին  $1,2d$ ,  $0,7d$  և  $1d$ :

306-րդ գծագրի վրա տված են գլանի և կոնի իզոմետրիկ

պատկերացումները, իսկ 307-րդ գծագրի վրա՝ սնամեջ գլանը, վորի մի մասը կտրված է. կարումը կատարվել է X և Y առանցքների ուղղությամբ:

§ 57. ԴԻՄԵՏՐԻԿ ՊՐՈՅԵԿՏԻԱ

Իզոմետրիկ պրոյեկցիայի մեջ ըստ բոլոր առանցքների միաժամանակ կրճատում է կատարվում. դիմետրիկ<sup>1)</sup> պրոյեկցիայի մեջ ըստ մի առանցքի կատարված կրճատումը զանազանվում է ըստ մյուս յերկու առանցքների կատարված կրճատումներից: Դիմետրիկ առանցքների կառուցումը ցույց է տված 308-րդ գծագրի վրա. 7° և 41° անկյունները կարելի չեն վերցնել փո-



Գծ. 309

խազրիչով կամ մոտավորապես կառուցել 1:8 և 7:8 հարաբերություններով: Z և X առանցքների ուղղությամբ հատվածներն անջատում են առանց կրճատման, իսկ Y առանցքի ուղղությամբ՝ 0,5 կրճատումով:

309-րդ գծագրի վրա դիմետրիկ պրոյեկցիայով պատկերված է խորանարդը, վորի նիստերին ներգծված են շրջաններ: Այս շրջանները պատկերվում են ելիպսներով. ելիպսներից մեկը մոտ է շրջանին, նրա մեծ և փոքր առանցքների հարաբերությունը

1) Դիմետրիկ պրոյեկցիա — յերկշափ պրոյեկցիա


հավասար է 10:9-ի: Յերկու հավասար ելիպսների մեջ մեծ և փոքր առանցքների հարաբերությունը հավասար է 3:1-ի:

Դիմետրիկ պրոյեկցիան կառուցելու յեղանակը նույնն է, ինչ վոր իզոմետրիկ պրոյեկցիայի կառուցումը. պետք է վերցնել միայն առանցքների այլ ուղղություններ և առանցքների ուղղությամբ այլ կրճատումներ:

§ 58. ՇՐՋԱՆԻ ԻԶՈՄԵՏՐԻԿ ՊՐՈՅԵԿՏԻԱՅԻ ՊԱՐԶԵՑՐԱԾ ԳԾԱԳՐՈՒՄԸ

310 և 311-րդ գծագրերի վրա տված է XOY, XOZ և YOZ հարթությունների մեջ գտնվող շրջանների իզոմետրիկ պրոյեկցիաներ ներկայացնող ելիպսների (տես § 55) փոխարեն ովալների կառուցման յերկու յեղանակ:

Գծ. 310. Ովալը ներգծում են շեղանկյանը, վորը ներկայացնում է այն քառակուսու իզոմետրիկ պրոյեկցիան, վորի մեջ



Գծ. 310

ներփակված է պատկերվող շրջանը: կառուցման ընթացքը.

1) պետք է փոքր անկյունազծի ծայրից տանել ուղղահայաց շեղանկյան կողմին —  $DK \perp AB$ .


2)  $R = DK$  շառավիղով տանել աղեղներ D և B կետերից.

3) ՕՅ-ին հավասար շառավիղով տանել աղեղ մինչև շեղանկյան մեծ անկյունագծի հետ հատվելը:

4) D և B կետերը միացնել  $O_1$  և  $O_2$  կետերի հետ և միացնող ուղիղները շարունակել՝ մինչև աղեղների հետ հատվելը (310-րդ գծագրի վրա սարված և մեկ ուղիղ և նշանակված և M կետը):

5)  $r = O_1M$  շառավիղով տանել ծայրի աղեղներն  $O_1$  և  $O_2$  կենտրոններին:

Գծագիր 311: Ովալը գծում են իր լերկարությունով, վոր հավասար և ելիպսի մեծ առանցքին: Այդ առանցքի մեծության և ուղղության մասին խոսված և § 56-ի մեջ: Կառուցման ընթացքը<sup>1)</sup>:



Գծ. 311

1) վերցնում են ելիպսի մեծ առանցքը՝ մեծությամբ և ուղղությամբ (311-րդ գծագրի վրա սոված և կառուցումը յերկու զեպքերի համար՝  $AB \perp Z$  և  $AB \perp X$ ).

2) տանում են  $OA = OB$  շառավիղով ոժանդակ շրջանագիծ:

3) շրջանագիծը բաժանում են յերեք հավասար մասի (բաժական և նշել բաժանման կետերից մեկը՝ k):

4)  $O_1$  կետը միացնում են K կետի հետ և ստանում  $O_1$  կենտրոնը:

5)  $O_2$  և  $O_1$  կետերով անց են կացնում ուղիղ:

1) Այս յեղանակը հաղորդել և Ա. Գ. Վինոգրադովը:

6)  $r = O_1B$  շառավիղով  $O_1$  կետից տանում են աղեղ՝ մինչև  $O_1K$  ուղիղի (N կետը) և  $O_2O_1$  ուղիղի հետ հատվելը (M կետը):


7)  $O_1N = O_2M$  շառավիղով  $O_1$  և  $O_2$  կետերից տանում են աղեղներ: M և N կետերը կցորդման կետերն են:

$O_3$  կենտրոնը կարող են գտնել  $O_1$  կենտրոնի նման կամ նշել AB ուղիղի վրա  $O_1$  կենտրոնին համաչափ  $O_3$ :  $OO_3 = OO_1$ :

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ

§ 59. ԴԵՏԱՍԻ (ՄԱՆՐԱՄԱՍՆԻԿԻ) ԳԾԱԳԻՐԸ

312-րդ գծագրի վրա աված է մի որինակ մեքենաշինարարության բնագավառից: Գծագրի վրա պատկերված է վորևե մե-




խանիգմի մասը—առանցքակալը<sup>1)</sup>: Տվյալ դեպքում առանցքակալը ներկայացնում է մի ամբողջութուն, մի գետալ: Հետևաբար 312-րդ գծագրի վրա աված է գետալի գծագրերը:

1) Առանցքակալ—նշանակում է գլանի (վալի) հենարան:

§ 60. ՏԵՍԻՐԵՐԻ (ԳՐՈՅԵԿՑԻԱՆԵՐԻ) ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Տեսքերը (զլխավոր տեսք, տեսք վերևից, տեսք ձախից) 312-րդ գծագրի վրա դասավորված են յեվրոպական (գերմանական) յեղանակով (§ 29): Դրա մասին դատել կարելի յե վերևից յերևացող տեսքի դիրքից. վերևից յերեվացող տեսքը պատկերված է գլխավոր տեսքի տակ: Տվյալ առանցքակալի համար ձախից յեվ աջից յերեվացող տեսքը միատեսակ են: 312-րդ գծագրի վրա կողմնային տեսքը դասավորված է զլխավոր տեսքից աջ, հետևաբար այդ—ձախից յերևացող տեսքն է:


Տեսքերի դասավորման յեվրոպական (գերմանական) յեղանակից զատ գոյություն ունի մի ուրիշ յեղանակ—ամերիկյան



ԳՃ. 313


յեղանակը: Այս պեպքում վերևից յերեվացող տեսքը պետք է դասավորված լինի գլխավոր տեսքից վերև, ձախից յերեվացող տեսքը կլինի գլխավոր տեսքից ձախ, իսկ աջից յերեվացող տեսքը—գլխավոր տեսքից աջ (գժ. 313): Հետևաբար ամերիկյան յեղանակի դեպքում պատկերը դասավորում են զլխավոր տեսքի այն կողմը, վոր կողմից նայում են. յերվոպական յեղանակի դեպքում պատկերը դնում են զլխավոր տեսքից այն կողմ՝ պայթեկառոց նառազայթիների ուղղությամբ (գժ. 314):

ԽՍՀՄ-ում տեսքերի դասավորման վերաբերյալ ստանդարտ յեզանակ ընդունված է յեվրոպականը (գերմանականը):



Գծ. 314

Յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է վորոշել այն հարցը, թե պատկերի լրիվ պարզության համար քանի՞ տեսք



Գծ. 315

և հարկավոր է հաճախ վերցնում են յերեք տեսք: Յեթե պատկերվող մալմինը բարդ է, ապա յեռեք տեսքը կարող է անբա-

վարար լինել: Բայց մի քանի տեսքերի առկայությունն այնտեղ, վորտեղ կարելի յեր յուրա գնալ նրանց ամենափոքր թվով, հանդիսանում է գծագրի աննպատակ խճողում: ՅԼԾ-րդ գծագրի վրա տված է միայն մեկ պրոյեկցիայով պատկերման որինակ, տրամադժերի չափերի առկայության դեպքում պատկերվող առարկայի ձևը միանգամայն հասկանալի յե:

§ 61. ՄԱՍՇՏԱՐ

Յ12-րդ գծագրի վրա պատկերը կառուցված է 1:5 մասշտաբով: Այդ նշանակում է, վոր տված ծրագրի վրա յուրաքանչյուր հատվածը իրական յերկարությունից 5 անգամ փոքր է: Գծագրի վրա մասշտաբը նշում են հետևյալ մակագրով՝ Մ 1:2 կամ Մ 1:5 և այլն (Մ 1:2 կամ Մ 1:5 և այլն):

Յեթե գծագիրը շատ մեծ չի ստացվում կամ, ընդհակառակը, պատկերվող առարկան շատ փոքր չէ, ապա ամենից լավն է առարկայի պատկերումը ընական մեծությամբ: Յեթե անհրա-




Գծ. 316

ժեշտ է մասշտաբը կիրառել, ապա ըստ ստանդարտի պետք է վերցնել՝ փոքրացնելու համար—1:2, 1:5, 1:10, 1:20, 1:50. մեծացնելու համար—2:1, 5:1, 10:1. Փոքրացնելու համար կարելի յե վերցնել նաև 1:2,5 մասշտաբը:

Վերը նշված մասշտաբները կոչվում են րվային մասշտաբներ: Մեքենաշինարարական գծագրության մեջ միայն թվային մասշտաբներն են կիրառում և այն էլ միայն գծագիրը կառուցելու համար, և վոչ թե դետալների չափերը վորոշելու համար: Բոլոր անհրաժեշտ չափերը պեժ է գծագրի վրա նեված լինեն րվաճեանային գրությամբ, բնդ վորում այդ գրությունը պեժ է ցույց տա այն իրական չափը, վոր պեժ է ունենա սված դեժարը:

Շինարարական գծագրերի վրա, պլանների (հատակազծերի) վրա և այլն, կիրառում են այսպես կոչված գծային մասշտաբը: 316-րդ գծագրի վրա պատկերված է 1:100 թվային մասշտաբին համապատասխանող գծային մասշտաբը: Հետևաբար գծագրի վրա յուրաքանչյուր սանտիմետրին համապատասխանում է բնականում 100 սմ = 1 մ: Մասշտաբը կառուցելու համար վերցված է 11 սմ, առաջին սանտիմետրը բաժանված է 10 հավասար մասերի, մնացածները բաժանված չեն. զերոն զրված է 10 մանր մասերի բաժանված առաջին սանտիմետրի վերջում: Այսպիսով զե-րոյից զեպի աջ հաշվում են ամբողջ մետրերը, իսկ զեպի ձախ-մետրի տասերորդական մասերը (0,1 մ): Այս մասշտաբի ամե-նափոքր բաժանումը համապատասխանում է 0,1 իրական յե-րկարու թվան: Ուրեմն մասշտաբի ճշտութունը 0,1 մ է (զրաֆի-կական մասշտաբի ճշտութունը մասշտաբի ամենափոքր բաժա-նումին համապատասխանող իրական յերկարութունն է): Որի-նակ՝ տված մասշտաբով պետք է վերցնել 7,3 մ: Կարկինի մի ծայրը դնում են ամբողջ մետրների յոթերորդ բաժանումի վրա



Գծ 316 ա

(հաշվելով զերոյից զեպի աջ) մյուս ծայրը—յերրորդ փոքր բա-ժանումի վրա (հաշվելով զերոյից զեպի ձախ):

316-րդ գծագրի վրա պատկերված գծային մասշտաբի ուղ-նությամբ կարելի չէ վերցնել չափեր մասշտաբային միավորի տասերորդ մասերով միայն: Յեթե պահանջվում է չափերն ավե-լի ճշտությամբ վերցնել, ապա կարելի չէ կիրառել այսպես կոչ-ված լայնական մասշտաբը: Լայնական մասշտաբի կառուց-վածքը ցույց է տված 316 ա գծագրի վրա, վերանդ պատկերված է գծային մասշտաբը (1:10000 թվային մասշտաբով) և կառու-ցումը լրացված է զերոյից զեպի ձախ լայնական մասշտաբով:

Վորպես մասշտաբային միավոր վերցված է 20 մմ-ի հավասար մի հատված, վորը պատկերում է 200 մ յերկարություն:

Զերոյից զեպի ձախ վերցված են մասշտաբային միավորի տասերորդ մասերը. այդպիսի մասերից յուրաքանչյուրը պատ-կերում է 20 մմ: Կառուցելով KP ուղղահայացը, նրա վրա P կետից վերցնում են կամայական յերկարությամբ 10 հավասար հատված և բաժանման կետերից տանում են PL ուղիղին զու-գահեռ ուղիղներ: LMN յեռանկյունից հետևում է, վոր NM = 0,1 KM, այսինքն MN-ը պատկերում է 20 մ յերկարություն:

Յեթե KP հատվածը բաժանված է 10 հավասար մասերի, ապա KP հատվածի բաժանման կետերից KM-ին զուգահեռ տա-րած ուղիղների այն հատվածները, վորոնք գտնվում են NLM անկյան կողմերի միջև, աստիճանաբար փոքրանում են՝ յուրա-քանչյուր անգամ հատվածի յերկարության 0,1 մասի չափով: Որինակ՝ CD = 0,6 KM (այդ հետևում է NLM և CLD յեռան-կյունների նմանութունից), իսկ քանի վոր NM-ը համապա-տասխանում է 20 մ-ի, ապա CD-ն պատկերում է 0,6 · 20 մ, այսինքն 12 մ: Ամենափոքր հատվածը հավասար է 0,1 NM, այսինքն 0,01 կմ, և հետևաբար պատկերում է 2 մ-ի հավասար յերկարություն:

316 ա գծագրում պատկերված մասշտաբով վերցրած AB հատվածը պատկերում է 872 մ-ի հավասար յերկարություն. AB = AD + BC + CD, վորանդ AD-ն պատկերում է 800 մ, BC-ն՝ 60 մ և CD-ն՝ 12 մ:

§ 62. ԳԾԵՐ ԳԾԱԳՐԻ ՎՐԱ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՇՐՋԱՀԱՇՈՒԹՅՈՒՆԸ (ՕБВОДКА)

317-րդ գծագրի վրա անվանված են գծագրի տարբեր գծեր: Կիրառում են շրջահատվածային գծի յեբեք ախ՝ հոծ գծեր, շտրի-խային գծեր, շտրիկակետազծեր. այս գծերը տարբերվում են հաստությամբ:


Գծազրի գծերը	Շրջանածության գծերը	Հաստությունը
Տեսանելի ուրվագծի գծեր	հոծ	$S - 0,4 \text{ մմ} - \text{ից} - 1,2 \text{ մմ}$
Անտեսանելի ուրվագծի գծեր	շտրիխային	$\frac{S}{2} - \text{ից} \text{ մինչև } \frac{S}{3}$
Կենտրոնական և ստանցքային գծեր	շտրիխակետագծ.	$\frac{S}{4}$ և ավելի փոքր
Չափերի և չափերը դուրս բերելու գծեր	հոծ	$\frac{S}{4}$ և ավելի փոքր
Կոտրվածքի և խզման գծեր	հոծ	$\frac{S}{2} - \text{ից} \text{ մինչև } \frac{S}{3}$
Շտրիխաման գծեր	հոծ	$\frac{S}{4}$ և ավելի փոքր

Հարմար  $s$  ( $0,4$  մմ-ից մինչև  $1,2$  մմ) հաստության ընտրությունը կախում ունի պատկերի մեծությունից ու բարդությունից և գծազրի նշանակումից: Գծի հաստությունը տվյալ գծազրի բոլոր տեսքերի համար պետք է մտա միևնույնը:

Շտրիխային և շտրիխակետագծային գծերի մեջ պետք է համար յերկարություն շտրիխներ տանել: Շտրիխների յերկարությունը մեծացնում են գծերի հաստության հետ միասին:

Անտեսանելի ուրվագծի գծերի շրջանածության դեպքում պետք է տանել  $4$  մմ-ից վոչ կարճ շտրիխներ: Շտրիխների միջև պետք է արանք պահել շտրիխից մոտավորապես  $4$  անգամ փոքր չափով:

Առանցքային և կենտրոնական գծերի շրջանածության դեպքում իրավոյ շտրիխակետագծային գծերը պետք է վերջացնել շտրիխով և վոչ թե կետով. շտրիխները յերկարությունը պետք է վերջնել մոտավորապես  $20$  մմ. փոքր պատկերների դեպքում շտրիխների յերկարությունը փոքրացնում են:  $12$  մմ-ից փոքր արամագիծ ունեցող շրջանագծերի մեջ կարելի յե տանել հոծ կենտրոնական գիծ: Կոտրվածքի և խզման գծերը ձեռքով են տանում:



Գծ 317

### § 63. ՉԱՓԵՐԸ ԳԾԱԳՐԻ ՄԵՋ ԱՌՆԵԼԸ


Խնչպիսի մասնատրվով ել կառուցված լինի գծազրի, բայտ յտվեր պետք է ետվեն իրատան մեծությունը, այսինն այն չափեր, վոչ սվայոլ դետակն իրատանում պետք է ունենա:

Գծազրի վրա պետք է տված լինեն բոլոր հնարավորություններ՝ չափերը պատրաստելու և գծազրի վրա տանելու համար. անհրաժեշտ չափի բացակայությունը զրկում է տված գծազրով ոգտվելու հնարավորությունից:


Չափերի թվանշանները գնում են չափերի գծի բացվածքի մեջ կամ նրա վերելը: Չափերի գծերը կարելի յե տանել ուր՝ ոգծի, առանցքային, կենտրոնական և չափերը դուրս բերելու գծերի միջև: Չափերի գծերի ծալրերում սլաքներ են գնում (Գծ. 312): Չափերը դուրս բերող գիծը շարունակում են սլաքներից այն կողմ՝ մոտ  $2$  մմ-ով:

318-րդ գծազրի վրա ցուցում է տված, թե ինչպես պետք է թվանշաններն անցկացնել չափագծերի վրա, և բերված են չափերը ճիշտ և սխալ անցկացնելու որինակներ:

Թվանշանի բարձրությունը պետք է ուղղահայաց լինի չափագծին: Աւղղածիւ ուղղված չափագծի վրա թվանշանը դնում են այնպես, վոր կարգացվի գլուխը դեպի ձախ թեքելով: Յեթե չափագիծը թեքութուն ունի, ապա թվանշանը պետք է այնպես դնել, վոր չափագիծը հորիզոնական հարթություն վրա ընկնելու դեպքում թվանշանը «վտտի վրա կանգնի»:




ԳՃ. 319



Շառագիղի չափը ցույց տալիս կարելի է թվանշանի առաջը դնել R տառը. որինակ՝ R50 = = շառագիղ 50: Քառակուսու չափը նշանակում են այսպես՝ 30 X 30:

Մեքենաշինարարական գծագրերի վրա չափերը նշում են միլիմետրներով՝ առանց վերևի բացատրության կամ ցուցումի (գծ. 312 և 318):

319-րդ գծագրի վրա ցույց է տված, թե ինչպես են գետալները չափում, չերբ բնականից հանույթ են կատարում:



ԳՃ. 319 ա

§ 64. ԴԵՏԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՎԱԾ ՅԵՎ ԱՆՄՇԱԿ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ

312-րդ գծագրի վրա առանցքակալի վորոշ մակերևույթներ նշված են հատուկ նշաններով: Այսպես՝ գլանալին անցքը (տրամագիծ 75) նշված է յերկու յեռանկյուններից կազմված նշանով. ստորին նիստը՝ մի քանի յեռանկյունով, և այլն:

320-րդ գծագրի վրա նշված են գործածվող նշանները: Յեթե մակերևույթը վոչ մշակման է յենթարկվում և վոչ էլ մաքրման,



ապա մի հատուկ նշանակում չեն կիրառում: Յեթե մակերևույթից պահանջվում է, վոր նա,



չնայած հատուկ մշակման չենթարկվելուն՝ այնուամենայնիվ պետք է բավարար չափով հարթ լինի, ապա դնում են 320-րդ գծագրի վրա առաջին տեղում ցույց տված նշանը:



312-րդ գծագրի վրա այդ նշանով նշված է առանցքակալի սալի վերևի նիստը:




Մեկ յեռանկյունով նշանակում են մշակման նկատելի հետքեր ունեցող մակերևույթը:

Դժ. 320

Դժ. 320

Յերկու յնուանկյունով նշանակում են մաքուր մակերևույթը, վորի վրա մշակման հետքերը շատ քիչ են նկատվում:

Վեցնիստ գլխիկով հեղույթ



Դժ. 321

Յերեք յեռանկյունով նշանակում են բարձր աստիճանի մաքուր և հարթ մակերևույթ:

Յեթե տված դիտալի բոլոր մակերևույթները միատեսակ

մշակման են յենթարկվում, ապա անում են «միատեսակ մշակում» մակագրությունը և դնում են վերը ցույց տված նշաններից մեկը (յեռանկյուններ):

§ 65. ՊԱՐՈՒՅՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ

Պարույր ունեցող դետալներ պատկերելիս պարույրի պայմանական նշանակման համար կիրառում են շարելիսային գծեր (գծ. 321): Այդ նշանակումը վերաբերում է պարույրին՝ անկախ նրա չափերից ու պրոֆիլից, այսինքն յեռանկյունային է նա, թե քառակուսի, տրապեցային և այլն: Պարույրի պայմանական պատկերման հետ միասին կիրառում են նաև նրա պայմանական նշանակումը, 312-րդ գծագրի վրա տված է այդպիսի նշանակման որինակ՝ «խողո-

վակի պարույր  $\frac{3''}{8}$ », տվ-

յալ դեպքում պետք է կատարվի այսպես կոչված

խողովակային պարույր  $\frac{3''}{8}$

չափով: Ուրիշ պարույրներ նշանակվում են այլ կերպ:

Յեթե պարույրի պրոֆիլը յեռանկյուն է, ապա այդ պարույրը բոլորովին չեն նշում, իսկ յեթե պրոֆիլը յեռանկյուն չէ (որինակ՝ տրապեցային է), ապա հաճախ մակագրության հետ միասին այդ պրոֆիլը նշում են գծագրի վրա, գծելով առանձին կամ այնպես, ինչպես ցույց է տված 322-րդ գծագրի վրա:

Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ մեքենայինարարական գծագրության գրքերից:


§ 66 ԿՏՐՎԱԾՔՆԵՐ (ՏՐԱՄԱՏՆԵՐ)

Գծագրերի մեջ մեծ մասամբ անհրաժեշտ է լինում առարկան ցույց տալ կտրված վիճակում, վորպեսզի օրա ներքին կառուցվածքը հասկանալի լինի: Պարզ մարմինների համար կարելի



Դժ. 322

յի վոչ տեսանելի մասերը պատկերելու համար սահմանափակվել շարիխային գծեր տանելով (տես, որինակ, 302-րդ գծագիրը)։ Բայց յեթե առարկան բարդ ներքին կառուցվածք ունի, ապա շարիխային գծերը կարող են չափազանց շատ լինել, նրանք կարող են մեկը մյուսին ծածկել, հատվել իրար հետ, և հետևանքը կլինի այն, վոր ամբողջ գծագիրն անընթեռնելի կդառնա։ Այդ պատճառով խուսափում են մեծ քանակութամբ շարիխային գծեր գործածելուց և նրանցով ոգտվում են միայն պարզ ներքին



Գծ. 323

կառուցվածք ունեցող մարմինների զեպքում, իսկ ավելի կամ պակաս բարդ մարմինների գծագրերի զեպքում շարիխային գծերը միայն ոժանդակող նշանակութուն ունեն։ Գծագրվող առարկայի ներքին կառուցվածքը պատկերելու համար գլխավոր նշանակութուն ունեն այսպես կոչված կտրվածքները։

323-րդ գծագրի վրա գլխավոր տեսքի և ձախից յերևացող տեսքի փոխարեն տեղավորված են կտրվածքները։ 1 կտրվածքն ստանալու համար պետք է տված մարմինը կտրել S հարթութունով (ձախատի հարթութունը գուգահեռ)։ 2 կտրվածքն ստանալու համար պետք է կտրել T հարթութունով (կողքի հար-

թությանը զուգահեռ)։ Բայց իրականում առարկան մնում և չհատված, հետևաբար հատումն ամբողջ առարկայի զուտ պաշմանական պատկերումն է՝ ինչպես կտրված առարկայի։

Կտրվածքների պայմանականութունն ամենից առաջ յերեվում է նրանից, վոր տված առարկայի վոչ մի պրոյեկցիան չի փոփոխվում այն բանից, վոր մյուս պրոյեկցիայի տեղը վերցված է կտրվածքը։ 323-րդ գծագրի վրա հորիզոնական պրոյեկցիան անփոփոխ է մնում։ Չնայած գլխավոր տեսքի և կողքի տեսքի փոխարեն վերցված են կտրվածքները։


Այնուհետև, մի կտրվածք մյուսից կախում չունի. յուրաքանչյուր կտրվածքն ստանում են հատուկ հատող հարթության ոգնությամբ. մի կտրվածքն անելուց բոլորովին չի հետևում, վոր պետք է մյուս կտրվածքներն ել անել։

Դատարկ մասերը պատերից ավելի լավ զանազանելու համար պատերն շարիխում են, այսինքն ծածկում են զուգահեռ գծերով։ Շարիխման դերը գերազանցապես այն է, վոր կտրված պատերը խիստ զանազանվեն փորվածքներից։

Կտրվածքներ անելիս տարածված սխալներից մեկը հանդիսանում է բոլոր անհրաժեշտ գծերը չտանելը։ Որինակը տված է 324-րդ գծագրի վրա. կտրվածքի վրա բաց է թողած յերեք ուղիղ, վորոնք տալիս են գլանի հետևի պատերի գծագրութունը։ Կտրվածքը պետք է կատարվի այնպես, ինչպես ցույց է տված 225-րդ գծագրի վրա։

325-րդ գծագրի վրա տարած առանցքային գիծը հանդիսանում է կտրվածքում ստացված պատկերի համար համաչափության առանցք, այսինքն այն բաժանում է յերկու միանգամայն միատեսակ մասերի։ Այսպիսի զեպքում կարելի յի վարվել այնպես, ինչպես ցույց է տված 326-րդ գծագրի վրա, այսինքն տալ արտաքին պատկերի կեսը և կտրվածքի կեսը, միացնելով նրանց առանցքային գծով։ Այս ձևը հնարավորութուն է տալիս, առանց նոր տեղ գրավելու, տվյալ առարկայի համար տալ վոչ միայն վերևից յերևացող տեսքն ու կտրվածքը, այլև գլխավոր տեսքը, վորը չկար 325-րդ գծագրի վրա։ Յեթե 325-րդ և 326-րդ գծագրերի վրա պատկերված առարկաների նման պարզ առարկաների զեպքում այդպիսի յեզանակը մեծ ոգուտ չի տալիս, ապա բարդ կառուցվածք ունեցող զեսալների


համար չափազանց ոգտակար է և նպատակահարմար գծագիրը խտացնել՝ միացնելով տեսքի կեսը կտրվածքի կեսի հետ, քանի վեր այդ գեպքում գծագրական աշխատանքը փոքրանում է, ամ-



Գծ. 324

Գծ. 325

Գծ. 326



Գծ. 327


Գծ. 328

բողջ գծագիրը փոքր տեղ է ընդունում, իսկ գծագրի պարզութիւնը չի պակասում:

Այդպես էլ սովորաբար անում են, չէրը կտրվածքի պատկերը միանգամայն համաչափ է: Որինակը տված է 327-րդ գծագրի վրա: Ֆլանցի պատկերը կազմված է վերևից յերեայոդ տես-

քից, զլիսավոր տեսքի կեսից և կտրվածքի կեսից. կտրվածքը կատարված է պրոյեկցիաների ճակատի հարթությանը զուգահեռ հատող հարթութիւնով:


Իհարկէ սխալ կլիներ հորիզոնական պրոյեկցիան գծել առանց «քառորդի» (գծ. 328), այն հիման վրա, վոր կտրվածք կա-



Գծ. 329

կտրվածքները զուտ պայմանական պատկերումներ են և ուրիշ պրոյեկցիաների վրա չպետք է անդրադառնան և չեն էլ կարող անդրադառնալ:

Մի անգամ էլ նշենք, վոր տեսքի կեսի յեվ կտրվածքի կեսի սահմանք հանդիսանում է առանցքային գիծը: Հոծ գիծ տանել այն հիման վրա, վոր սկզբվածք է արված, չի կարելի, քանի վոր իրականում զետալի կտրվածք չկա (ինչպես վոր նա ամբողջ էր, այնպես էլ մնաց), այդտեղ վոչ մի գիծ չի ստացվում, և չի կարելի առանտ-



Գծ. 230

քային գիծը ծածկել վոչ մի գծով, բացի իրոք գոյությունն ունեցող գծերից:

329-րդ գծագրի վրա տված ե միևնույն մարմնի յերեք կտրվածքների կատարման որինակ: Յուրաքանչյուր կտրվածքը կատարված ե հատուկ կտրող հարթության ուղղությամբ, այն կտրվածքը, վորի վրա կա ըստ AB-ի մակագրությունը, կատարված ե պրոյեկցիաների ճակատի հարթության զուգահեռ հարթությունով (AB-ն հետքն ե), ըստ CD-ի կտրվածքը կատարված ե պրոյեկցիաների կողքի հարթությանը զուգահեռ հարթությունով (CD-ն հետքն ե), ըստ EF-ի կտրվածքը կատարվում ե պրոյեկցիաների հորիզոնական հարթությանը զուգահեռ հարթությունով (EF-ը հետքն ե): Յուրաքանչյուր կտրվածքից վերցված ե կեսը և միացված ե (ընդհանուր առանցքի շուրջը) տեսքի կեսի հետ (բոլոր պատկերները համաչափ են):

330-րդ գծագրի վրա ցույց ե տված չերկու առանձնահատուկությունն ունեցող կտրվածք:

1) Ննալած վոր փոքր անցքերը չեն ընկնում կտրող հարթության վրա, այնուամենայնիվ կտրվածքի վրա դուրս են գալիս:

2) չերկու կողերը գծված են հատվածքի վրա, այն ինչ նրանցից մեկը չի գտնվում կտրվածքի հարթության վրա, յերկու կողերն ել շտրիխած չեն:

Վերջին առանձնահատուկության վերաբերմամբ պետք ե նկատի ունենալ, վոր հոծ (առանց դատարկության) դետալների մի ամբողջ շարք, վորոնց համար կտրող հարթությունն ուղղված ե նրանց հիմնական առանցքով կամ յերկար կողի յերկայնքով, ցույց են տալիս առանց շտրիխելու, յեթե անգամ նրանք գտնվեն կտրվածքի հարթության մեջ (բոլոր, պտուտակներ, գամեր, բռնակներ, գնդիկներ, ատամներ և այլն):

§ 67. ԵՍԿԻՉՆԵՐ<sup>1)</sup> ՅԵՎ ԳԾՄԳՐԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՐՃԱՏ ՅՈՒՑՈՒՄՆԵՐ

Եսկիզի վրա պատկերումը կատարում են առանց մասշտաբի պահպանման: Եսկիզի մյուս տարբերությունը գծագրից այն ե, վոր եսկիզը գերազանցապես ձեռքով են կատարում:

1) Եսկիզ (Ֆրանսերեն esquisse) նշանակում ե ուրվագիծ, այսինք ձեռքով կատարված նկար: Եւ յ իմաստով գործածում են կրոկ բառը, վորժած անղված ե Ֆրանսերեն croquis բառից չոր նույնպես նշանակում ե ուրագիծ:

Զնայած եսկիզը կատարում են առանց վորոշակի մասշտաբի, այնուամենայնիվ պետք ե հետևել այն բանին, վոր առարկայի չափումների առնչությունները պահպանվին զոնն աչքաչափի ճշտությամբ:

Սովորաբար եսկիզը կատարում են պրոյեկցիոն գծագրության կանոններով: Առարկան պատկերում են անհրաժեշտ քանակությամբ տեսքերով, կտրվածքներով և բոլոր անհրաժեշտ չափերի նշումներով: Դեպքեր են լինում, յերբ եսկիզը գծագրի դեր ե կատարում:

Եսկիզների վրա, ինչպես և գծագրի վրա, նախ պետք ե տանել առանցքային գծերը և նրանցից լեղնելով կատարել հետագա կառուցումը:

Գծագիր կատարելիս համապատասխան ֆորմատ և մասշտաբ ընդունելուց հետո պետք ե նշել բոլոր տեսքերի, կտրվածքների և մակագրերի դիրքերը, իսկ աչնուհետև նշել և տանել առանցքային և կենտրոնական գծերը:

Բոլոր տեսքերն ու կտրվածքները գծագրելուց հետո անց են կացնում բոլոր չափերը դուրս բերող գծերն ու չափագծերը և նրանց վրա գնում են համապատասխան չափերը, իսկ աչնուհետև՝ մակագրությունները: Մատիտով գծագրելիս փոքր շառավիղներ ունեցող շրջանագծերի ու աղեղների համար հանձնարարվում ե ոգտվել կարկինով՝ սկսած 1 մմ շառավիղից: Բայց արագության համար անհրաժեշտ ե սովորել մինչև 3 մմ շառավիղ ունեցող շրջանագծերն ու աղեղները ձեռքով գծել:

Տուշով շրջանածելու համար պետք ե նշել կցորդման բոլոր աղեղների կենտրոնները: Պետք ե նշել նաև կցորդման կետերը, վորպեսզի տուշելու ժամանակ գծերն անհրաժեշտ չափից ավելի հեռու չգնան:

Տուշով գծելը կատարում են ռեյսֆեդերով<sup>1)</sup> և կարկինի մեջ ամրացրած շրջանային ծայրով: Ռեյսֆեդերը և շրջանային ծայրը տուշով լցնելու համար ամենից լավ և ոգտվել փետուրով, ռեյսֆեդերը և շրջանային ծայրը տուշով թրջել չի կարելի, և լավ ե նրանց լցնելու համար չոգտվել մետաղյա ծայրերով ու թղթով, քանի վոր առաջինից կարող ե ռեյսֆեդերը չանգոմածքներ ստանալ, իսկ թղթից հաճախ կեղտոտվում ե: Գործիքը չի կարելի

1) Ռեյսֆեդեր գերմաներեն բառ ե՝ Reissfeder:

հեղտոտ թողնել, աշխատանքի ընթացքում պետք է հաճախ մաքրել  
 այն, իսկ վերջացնելուց հետո խնամքով սրբել չորացած տուչը:  
 Տուչով գծելը պետք է սկսել առանցքային և կենտրոնական  
 գծերը տանիլուց: Այնուհետև տանում են տեսանելի յեղրագիծը  
 հետևյալ կարգով. 1) մեծ շրջանագծերը, 2) փոքր շրջանագծերը,  
 3) շրջանագծերի աղեղները, 4) կորաքանոնով տարվող կորերը,  
 5) յեղրագծի ուղիղ գծերը՝ հորիզոնական, ուղղաձիգ, թեք:

Նույն հերթականությամբ պահպանում են վոչ տեսանելի  
 յեղրագիծը գծելիս (շարիխային գծեր): Այնուհետև՝ չափերը դուրս  
 բերող գծերը, չափագծերը, սլաքները և չափերի թվանշանները:  
 Վերջապես շարիխում են, դնում են մակազրույթյունները և  
 գծագիրն առնում են շրջանակի մեջ:

§ 68. ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐԻՖՏԸ

Մակազրույթյունների համար շրիֆտների տեսակները տված  
 են 216-րդ և 217-րդ եջերում: Տառերը սուղի նկատմամբ թեք  
 են գրում: Թեքության անկյունը 75° է:



Գծ. 231

Ռուսական (հայկական) ալֆավիտում անջատված են շրիֆտ-  
 ների ութը չափ՝ № 20, № 14, № 10, № 7, № 5, № 3,5, № 2,5,




Գծ. 231 ա

№ 1,5, շարիխի չափը ներկայացնում է մեծատառի բարձրու-  
 թյունը միլիմետրներով: Հատինական ալֆավիտում յերեք չա-  
 փեր են տված՝ № 7, № 5 և № 3,5: Այս գեպըում ևս շրիֆտի  
 չափը վարչում է մեծատառի բարձրությամբ:

Ռուսական (հայկական) ալֆավիտի ութ չափերից յեր-  
 ևուրը (20 և 1,5) հանձնարարվում է ըստ հնարավորին չոգտա-

գործել: Փոքրատառի բարձրությունը կազմում է մեծատառի  $\frac{1}{3}$   
 (հայերենում  $\frac{1}{2}$ -ը) կամ հասնում է (տառապոչերի հետ միասին)  
 մեծատառի բարձրության (որինակ՝ Ե, Ս, Գ և այլն տառերը, տես  
 գծ. 331): Տառագծերի հաստությունը պետք է վերցնել մոտա-  
 վորապես շրիֆտի բարձրության  $\frac{1}{8}$  մասի չափ: Մակազրույթյան



Գծ. 332

մեջ տողերի միջև յեղած հեռավորությունը պետք է փոքր չլի-  
 նի շրիֆտի բարձրության 1,4-ից: Յեթե մակազրույթյունը միայն  
 մեծատառից է կազմված, ապա տառերի հեռավորությունը պետք  
 է վերցնել այնպես, ինչպես ցույց է տված շրիֆտի որինակի  
 մեջ: Մի քանի տառերի զուգորդման ժամանակ, որինակ՝ А և Г,



Գծ. 332 ա

Г և D, P և A, T և A, Ն և Ս, Ա և Ս և այլն, տառերի միջև  
 հեռավորության թվացող մեծացում է առաջանում: Այսպիսի  
 դեպքերում պետք է սովորական հեռավորությունը փոքրացնել  
 (տես շրիֆտի որինակները 216 եջում և գծ. 332-ի վրա՝ «КРАН»,  
 «СТАНОК», «ГАЙКА», ՎՆԱՍ, ԱՂՎԵՍ և ԱՆՏԱԿ բառերը):

1 թվանշանն այնքան տեղ է զբաղում, վորքան բռնում է  
 նրա հաստությունը, նրան դնում են հարևան տառերից կամ թվե-  
 րից, նորմալ հեռավորության վրա (գծ. 332—41,712 թվերը):



Nº 10

ԱԲԳԴԵԶԸԹԺԻ

ԼԽԾԿՀՁՂՃՄՅ

ՆՇՈՉՊՁՌՌՍՎՏ

ՐՑԻՓՔՖ

1234567890 №

աբգդեզըթժիլ խծկ  
հձղնմյնշոչպջռսվ  
տրյլփքֆև

Nº 7

ԱԲԳԴԵԶԸԹԺԻԼԽԾԿՀ

ՁՂՃՄՅՆՇՈՉՊՁՌՌՍՎՏ

ՐՑԻՓՔՖ 1234567890 №

աբգդեզըթժիլ խծկ հձղնմ  
յնշոչպջռսվ տրյլփքֆև

Nº 5

ԱԲԳԴԵԶԸԹԺԻԼԽԾԿՀՁՂՃ

ՄՅՆՇՈՉՊՁՌՌՍՎՏՐՑԻՓՔՖ

1234567890 №

աբգդեզըթժիլ խծկ հձղնմ  
յնշոչպջռսվ տրյլփքֆև

Nº 3,5

ԱԲԳԴԵԶԸԹԺԻԼԽԾԿՀՁՂՃՄՅՆՇՈՉ

ՊՁՌՌՍՎՏՐՑԻՓՔՖ 1234567890 №

աբգդեզըթժիլ խծկ հձղնմ  
յնշոչպջռսվ տրյլփքֆև

Nº 2,5

ԱԲԳԴԵԶԸԹԺԻԼԽԾԿՀՁՂՃՄՅՆՇՈՉՊՁՌՌՍՎՏՐՑԻՓՔՖ

1234567890 №

աբգդեզըթժիլ խծկ հձղնմ  
յնշոչպջռսվ տրյլփքֆև

№10

АБВГДЕЖЗИКЛ  
 МНОПРСТУФХ  
 ЦЧШЩЫЬЭЮЯ  
 1234567890 №  
 абвгдежзиклмно  
 прстуфхцчшщѳѵ  
 зюя

№7

АБВГДЕЖЗИКЛМНОП  
 РСТУФХЦЧШЩЫЬЭЮ  
 Я 1234567890 №  
 абвгдежзиклмнопрст  
 уфхцчшщѳѵзюя

АБВГДЕЖЗИКЛМНОПРСТУ  
 ФХЦЧШЩЫЬЭЮЯ

1234567890 №

абвгдежзиклмнопрстуфхцчш  
 ѳѵзюя

№3,5

АБВГДЕЖЗИКЛМНОПРСТУФХЦЧШЩЫ  
 ЪЭЮЯ 1234567890 №

абвгдежзиклмнопрстуфхцчшщѳѵзюя

№2,5

АБВГДЕЖЗИКЛМНОПРСТУФХЦЧШЩЫ  
 ЪЭЮЯ 1234567890 №

абвгдежзиклмнопрстуфхцчшщѳѵзюя

№5

ABCDEFGHIJKLMNOPS  
 TUVWXYZ VII XV XIII

abcdefghijklmnopqrstu  
 vwxyz

№3,5

ABCDEFGHIJKLMNOPS  
 TUVWXYZ VII XV XIII

abcdefghijklmnopqrstu  
 vwxyz

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն

3

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ԲԱՃԻՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՍՌՈՒՅՈՒՄՆԵՐ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Եջ

§ 1. Կետ, գիծ, պատկեր (ֆիգուր)	7
» 2. Քանոն և անկյունարդ	9
» 3. Կարկին և կորաքանոն	11
» 4. Գծագրական տախտակ, թղթի ֆորմատներ	13
» 5. Ուղիղ գծեր տանելը, ուղղահայացներ կառուցելը	15
» 6. Զուգահեռ ուղիղներ տանելը	23
» 7. Անկյունների կառուցումը	25
» 8. Ուղիղ գծի հատվածը մասերի բաժանելը	35
» 9. Շրջանագծի աղեղը մասերի բաժանելը	39
» 10. Անկյան բաժանումը մասերի	40
» 11. Կառուցման որինակներ	41
» 12. Համաչափության հատկությունների կիրառումը պատկերներ կառուցելիս	46
» 13. Կոորդինատների մեթոդի կիրառումը պատկերներ կառուցելիս	48
» 14. Շրջանագիծը հավասար մասերի բաժանելն ու նրա մեջ կանոնավոր բազմանկյունների ներգծելը	51
» 15. Կանոնավոր բազմանկյունների կառուցումը տված կողմով	58
» 16. Կանոնավոր արտագծած բազմանկյունների կառուցումը	64

§ 17. Շրջանագծի կամ նրա աղեղի կենարոնը գտնելը	63
» 18. Կցորդումներ	64
» 19. Կցորդման ձևեր և որինակներ	66
» 20. Շրջանագծի աղեղի ուղղելը	91
» 21. Ովալները կառուցումը	95
» 22. Խոլակ կառուցելը	98
» 23. Շրջանի եվոլվենտի կառուցումը	99
» 24. Կորաքանոնով աշխատելու յեղանակները	100
» 25. Արքիմեդի սպիրալի կառուցումը	102
» 26. Ցիկլոիդի կառուցումը	102
» 27. Գծի կառուցումն իր հավասարումով	104
» 28. Սինուսոիդի կառուցումը	105

**ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՃԻՆ**

**ՊՐՈՅԵԿՑԻՈՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

Ներածություն	106
§ 29. Տեսքերի դասավորությունը գծագրի վրա	111
» 30. Առանցքային գծեր	114
» 31. Ողղանկյուն պրոյեկտում	116
» 32. Ուղղանկյուն պրոյեկցիաներ յերկու և յերեք հարթությունների վրա	118
» 33. Կետի ուղղանկյուն պրոյեկցիաները	122
» 34. Ուղիղի ուղղանկյուն պրոյեկցիաները	125
» 35. Կետն ուղիղի վրա: Հատվող, զուգահեռ և խաչվող ուղիղներ	129
» 36. Հատվածի իրական մեծությունը պտտման լեղանակով գտնելը	132
» 37. Հարթ պատկերի ուղղանկյուն պրոյեկցիաները	136
» 38. Հարթություն պատկերումն եպլուրի վրա	139
» 39. Մարմնի ուղղանկյուն պրոյեկցիաները	142
» 40. Բազմանիստի հատումը հարթությունով	145

ԵՂ

§ 41. Կոնի հատումը հարթությոնով	148
» 42. Ելիպսը, պարաբոլն ու հիպերբոլը կառուցելու լեղանակները՝ հիմնված այդ պատկերների մի քանի հատկությունների վրա	149
» 43. Ուղիղ շրջանային կոնի հարթությամբ առաջացած հատվածքի կառուցումը	155
» 44. Կոնի մակերևույթի բացվածքը	157
» 45. Գլանի հատումը հարթությոնով	160
» 46. Մարմինների փոխհատումը	162
» 47. Յերկու պրիզմաների փոխհատումը	164
» 48. Պրիզմայի և բուրգի փոխհատումը	164
» 49. Յերկու շրջանային գլանների փոխհատումը	166
» 50. Գլանի հատումը կոնի հետ	170
» 51. Վեցնիստ պրիզմայի հատումը կոնի հետ	172
» 52. Տարբեր մակերևույթների փոխհատման որինակներ	175
» 53. Դիստողական պատկերումներ	178
» 54. Ֆրոնտալ պրոյեկցիա	179
» 55. Իզոմետրիկ պրոյեկցիա	182
» 56. Կոր գծերն իզոմետրիկ պրոյեկցիաների մեջ	188
» 57. Դիմետրիկ պրոյեկցիա	192
» 58. Շրջանի իզոմետրիկ պրոյեկցիայի պարզեցրած գծագրումը	193

**ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՃԻՆ**

**ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ**

§ 59. Դետալի (մանրամասի) գծագիրը	196
» 60. Տեսքերի (պրոյեկցիաների) դասավորությունը	197
» 61. Մասշտաբ	199
» 62. Գծեր գծագրի վրա և նրանց շրջահատությունը (ОБВОДКА)	202
» 63. Չափերը գծագրի մեջ առնելը	203

§ 64. Դետալների մշակված և անմշակ մակերևույթների  
 պայմանական նշանակումները . . . . . 206

» 65. Պարույրի պատկերումը . . . . . 207

» 66. Կտրվածքներ (տրամագծեր) . . . . . 207

» 67. Եսկիզներ և գծագրեր կատարելու վերաբերյալ  
 կրճատ ցուցումներ . . . . . 212

» 68. Մակագրությունների շրիֆտները . . . . . 214

---

Պատրաստող՝ Մ. Ալեքսանյան  
 Տեխն. խմբագիր՝ Ի. Վարդանյան  
 Սրբագրիչ՝ Մ. Մարտիրոսյան

---

Փլատիտի լիազոր Պ-4123. Պատվեր № 563. Հրատ. 4963 Տիրած 20 000.

---

Հանձնված և տպագրության 10-րն մայիսի 1937 թ.  
 Ստորագրված և տպելու 5-րն հուլիսի 1937 թ.  
 Քուղթ. 62 X 94 Տպագրական 14 մամուլ. Մեկ մամուլում 38400 նիշ.  
 Հեղ. նակային 13 1/2 մամ.

---

Պետհրատի տպարան, Յերեան, Լենինի № 65 АКТ № 55  
 Владн. Д.



9170 3 0.  
40250 75 4.

4

Н 2-325a

В. О. ГОРДОН  
ОСНОВЫ  
ТЕХНИЧЕСКОГО ЧЕРЧЕНИЯ  
Учебник для средней школы  
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.